

ՍԻԼԻՆ ԸՆԴԴԵՄ ՍԼՈՎԵՆԻԱՅԻ ԳՈՐԾՈՎ

2009թ. ապրիլի 9-ի վճիռը

ԱՏՐԱՍԲՈՒՐԳ

ՓԱՍՏԵՐ

I. ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՍԱՆՔՆԵՐԸ

10. Դիմողները՝ Ֆրանյա և Իվան Սիլինները ծնվել են համապատասխանաբար՝ 1949 և 1940 թվականներին և ապրել Սլովեն Գրադեկում:

11. 1993 թվականի մայիսի 3-ին կեսօրի և ժամը 13:00-ի հատվածում դիմողների քսանամյա որդին՝ Գրեգոր Սիլին, *inter alia*, սրտխառնոցի և քորի դեմ բուժում է ստացել Սլովեն Գրադեկի ցլխավոր հիվանդանոցում: Նա զննվել է հերթապահ բժիշկ Մ.Ե.-ի կողմից: Ուրտիցարիայի (ալերգիկ ռեակցիայի տեսակ) ախտորոշման հիման վրա Մ.Ե.-ն նշանակել է գլուկոկորտիկոստերոիդ պարունակող դեղամիջոցի (դեքսամետազոն) և անտիհիստամինիկ միջոցի (սինոֆեն) ներերակային ներարկումներ: Ներարկումներից հետո դիմողների որդու վիճակն ակնհայտորեն վատացել է: Դա տեղի է ունեցել, հավանաբար, երկու դեղերից մեկի նկատմամբ նրա՝ ալերգիկ լինելու պատճառով: Նրա մաշկը խիստ գունատվել է, նա սկսել է դողալ և մրսել: Մ.Ե.-ն նկատել է տախիկարդիայի նշաններ: Ախտորոշվել է ամաֆիլակտիկ շոկ: Հետևաբար, 13:30 դիմողների որդին տեղափոխվել է ինտենսիվ թերապիայի բաժին: Մ.Ե.-ն նշանակել է, *inter alia*, ադրենալինի ներարկում: Նախքան սրտաբանի գալը՝ դիմողների որդին դադարել է շնչել և չի ունեցել զարկերակային բախումներ: Իրականացվել է սրտի աշխատանքի և շնչառության վերականգնում: Մոտավորապես 14:15 դիմողների որդուն արհեստական շնչառության ապարատ է միացվել և նրա արյան ճնշումը և զարկերակային հարվածները կարգավորվել են, սակայն նա մնացել է կոմայի մեջ: Նրա ուղեղը լուրջ վնասվել է:

12. 1993 թվականի մայիսի 4-ին նա տեղափոխվել է Լյուբլյանայի բժշկական կենտրոն (*Klinični center v Ljubljani*), որտեղ 1993 թվականի մայիսի 19-ին մահացել է:

13. Դիմողների որդու մահվանը հանգեցրած գործողությունների և նրա վիճակի վաղաժամանակապես կապակցությամբ Մ.Ե.-ի կողմից ձեռնարկված միջոցառումների հստակ ժամանակը վիճարկվել է ներպետական օրենսդրությամբ սահմանված կարգով:

14. 1993 թվականի մայիսի 13-ին դիմողները Մարիբորի առաջին ատյանի հանրային դատախազության Սլովեն Գրադեկի միավորի հետ (*Temeljno javno tožilstvo Maribor, Enota v Slovenj Gradcu*) Մ.Ե.-ի դեմ քրեական մեղադրանք (*ovadba*) են ներկայացրել «անզգույշ բուժում» (*nevestno zdravljenje*) հանցագործության հիմքով, որը դիմողների որդու մահից հետո բնութագրվել է որպես «ծանր

հանցագործություն, ինչն առողջությանը վնաս է պատճառել» (*hudo kaznivo dejanje zoper človekovo zdravje*): Դիմողները վիճարկել են, որ երկու դեղամիջոցների ներերակային ներարկումները նշանակելով՝ Մ.Ե.-ն իրենց որդու նկատմամբ սխալ բուժում է իրականացրել և հետագայում՝ նրա վիճակի վատթարացումից հետո, պատշաճ միջոցներ չի ձեռնարկել:

15. Նախնական քննության (*predkazenski postopek*) ընթացքում դիմողների որդու նկատմամբ նշանակված բուժման վերաբերյալ բժշկական փաստաթղթերն առգրավվել են ոստիկանության կողմից և, նրա մահվանից հետո, քննիչ դատավորը (*preiskovalni sodnik*) կարգադրել է Լյուբլյանայի դատական բժշկության ինստիտուտին (*Intitut za sodno medicino v Ljubljani*) դիախերձում իրականացնել և դատաբժշկական եզրակացություն կազմել:

16. 1993 թվականի օգոստոսի 26-ին ոստիկանության կողմից հանրային մեղադրողին ներկայացված զեկույցից պարզ է դառնում, որ Առողջապահության մախարարությունը (*Ministrstvo za zdravstvo*) պահանջել է Բժշկական ասոցիացիայից (*Zdravniko Drutvo*) հանձնաժողով ձևավորել սույն գործով եզրակացություն կազմելու համար: Հանձնաժողովը ձևավորվել է նույն փորձագետներից, ում կողմից կազմվել էր դատաբժշկական եզրակացությունը (տե՛ս ստորև՝ կետ 17): Զեկույցի համաձայն՝ եզրակացությունը 1993 թվականի հունիսի 11-ին ուղարկվել է Առողջապահության մախարարություն, որն այն 1993 թվականի հունիսի 19-ին հրապարակել է Սլովենիայի երկու հիմնական թերթերում:

17. 1993 թվականի հուլիսի 1-ին Լյուբլյանայի դատական բժշկության ինստիտուտը ներկայացրել է իր եզրակացությունը, որում *inter alia* արձանագրված էր, որ.

«Ամաֆիլակտիկ շոկի առաջացումը, որը... հաջորդել է դեքսամետազոնի և սինոֆենի ներարկմանը, մեծ հավանականություն է ունեցել նշված դեղամիջոցներից մեկի նկատմամբ ունեցած զգայունության պատճառով:

Սլովեն Գրադեկի հիվանդանոցում ամաֆիլակտիկ շոկի բուժումը, բժշկական փաստաթղթերի համաձայն, իրականացվել է սահմանված բժշկական պրակտիկային համապատասխան:

Հետագայում փորոքների ֆիբրիլյացիան տեղի էր ունեցել սրտամկանի ախտահարման պատճառով, որը Գրեգոր Սիլիի մոտ առաջացել էր 1993 թվականի մայիսի 3-ից մի քանի շաբաթ առաջ:

Փորոքների ֆիբրիլյացիայից հետո հիվանդանոցի անձնակազմը վերակենդանացում էր իրականացրել: Բժշկական փաստաթղթերի համաձայն՝ այն իրականացվել էր սահմանված բժշկական պրակտիկային համապատասխան:

Գրեգոր Սիլիի՝ Սլովեն Գրադեկի հիվանդանոց մուտք գործելու պահից մինչև նրա մահն ընկած ժամանակահատվածում մենք չենք հայտնաբերել նրա բուժման հետ կապված որևէ գործողություն կամ անգործություն, որը կարող էր բնութագրվել որպես ակնհայտորեն ոչ պատշաճ կամ անզգույշ»:

18. 1994 թվականի ապրիլի 8-ին հանրային մեղադրողը ապացույցների անբավարարության հիմքով մերժել է դիմողների ներկայացրած մեղադրանքը:

A. Քրեական դատավարություն

19. 1994 թվականի օգոստոսի 1-ին դիմողները, հանդես գալով որպես «լրացուցիչ» մեղադրողներ (*subsidiarni tožilec*), Մ.Ե.-ի գործողությունների կապակ-

ցությամբ քրեական քննություն (*zahteva za preiskavo*) իրականացնելու վերաբերյալ պահանջ են ներկայացրել:

20. 1994 թվականի հոկտեմբերի 26-ին հետազոտելով Ս.Ե.-ի կողմից ներկայացված փաստերը՝ Սարիբորի առաջին ատյանի դատարանը (*Temeljno sodiše v Mariboru*) 1994 թվականի նոյեմբերի 8-ին նրանց պահանջը բավարարել է: 1994 թվականի դեկտեմբերի 27-ին Ս.Ե.-ի բողոքի (*pritožba*) հիման վրա Սարիբորի առաջին ատյանի դատարանի միջանկյալ քննությունների հանձնաժողովը (*zunaj-obravnavni senat*) վերացրել է քննիչ դատավորի որոշումը՝ գտնելով, որ գործում առկա ապացույցները, մասնավորապես՝ դատաբժշկական եզրակացությունը, ողջամիտ հիմքեր չեն տալիս կասկածելու, որ Ս.Ե.-ն ակնհայտորեն գործել է մասնագիտական չափանիշների խախտմամբ:

21. Դիմողների բողոքը և օրինականության պաշտպանության վերաբերյալ պահանջը (*zahteva za varstvo zakonitosti*) մերժվել են, վերջինը մերժվել է Սլովեն Գրադեկ շրջանային դատարանի (*Okrožno sodiše v Slovenj Gradcu*) 1995 թվականի հունիսի 29-ի որոշմամբ, որը գործը քննող դատարան էր դարձել դատական համակարգի 1995 թվականի վերակազմավորումից հետո: Դիմողները վիճարկել են այդ որոշումը: 1995 թվականի հոկտեմբերի 5-ին Սարիբորի բարձր դատարանը (*Vije sodiše v Mariboru*) մերժել է նրանց բողոքը՝ ըստ էության այն նույն հիմքերով, ինչ հիմքերով մերժվել են նախորդ բողոքը և օրինականության պաշտպանության վերաբերյալ պահանջը, մասնավորապես՝ այն հիմքով, որ դիմողներն իրավունք չունեին բողոքարկել բժշկի դեմ քրեական գործ չհարուցելու վերաբերյալ միջանկյալ քննությունների հանձնաժողովի որոշումը:

22. Հետագայում դիմողները բժիշկ Տ.Վ.-ից բժշկական կարծիք են ստացել, որն *inter alia* ամրագրում էր, որ միոկարդիտը (սրտամկանի բորբոքումը), որը նախկինում դիտվել է որպես դիմողների որդու մահվանը նպաստած գործոն, կարող է տեղի ունեցած լինել այն ժամանակ, երբ նա գտնվել է անաֆիլակտիկ շոկի մեջ կամ նույնիսկ դրանից հետո: Արդյունքում, 1995 թվականի նոյեմբերի 30-ին նրանք քրեական քննությունը վերաբացելու վերաբերյալ պահանջ են ներկայացրել (տե՛ս ստորև՝ կետ 90): Ի լրումն, նրանք ընդդատությունը փոխելու և գործը Սարիբորի շրջանային դատարան (*Okrožno sodiše v Mariboru*) ուղարկելու միջնորդություն են ներկայացրել: 1996 թվականի հունվարի 31-ին Սարիբորի բարձր դատարանը բավարարել է ընդդատությունը փոխելու վերաբերյալ նրանց միջնորդությունը:

23. 1996 թվականի ապրիլի 26-ին Սարիբորի շրջանային դատարանի միջանկյալ քննությունների հանձնաժողովը բավարարել է վարույթը վերաբացելու վերաբերյալ դիմողների պահանջը: Ս.Ե.-ի կողմից ներկայացված բողոքը 1996 թվականի հուլիսի 4-ին մերժվել է Սարիբորի բարձր դատարանի կողմից:

24. Քննության ընթացքում քննիչ դատավորը հարցաքննել է վկաների և կարծիք է ստացել Պ.Գ.-ից՝ Գրադի դատական բժշկության ինստիտուտի (Ավստրիա) փորձագետից: Իր եզրակացության մեջ Պ.Գ.-ն նշել է, որ անտիհիստամինիկ ներարկումը հանգեցրել է դիմողների որդու մոտ լուրջ ալերգիկ ռեակցիայի առաջացման: Նա կասկածներ է հայտնել՝ կապված միոկարդիտի՝ նախքան այդ առկա լինելու հետ:

25. 1997 թվականի փետրվարի 10-ին քննիչ դատավորն ավարտել է քննությունը:

26. Ելնելով գործի բարդությունից՝ դիմողները պահանջ են ներկայացրել Մարիբորի շրջանային հանրային դատախազի գրասենյակ (*Okrožno drzavno tožilstvo v Mariboru*) ստանձնել քրեական հետապնդման իրականացումը: Նրանց պահանջը մերժվել է 1997 թվականի փետրվարի 21-ին: Մարիբորի շրջանային հանրային դատախազի գրասենյակի ղեկավարը հետագայում բացատրել է Չվխավոր հանրային դատախազին (*Vrhovni drzavni tožilec*), որ թեև Պ.Գ.-ի եզրակացությունը հաստատում էր ողջամիտ կասկածի առկայությունն առ այն, որ Մ.Ե.-ն անգգուշությամբ մահ է պատճառել, սակայն մեղադրանք առաջադրելու համար այն բավարար հիմք հանդիսանալ չէր կարող, քանի որ վերջինս հավաստիության աստիճան է պահանջում:

27. 1997 թվականի փետրվարի 28-ին դիմողները «անգգուշությամբ մահ պատճառելու» (*povzročitev smrti iz malomarnosti*) կապակցությամբ Մ.Ե.-ին մեղադրանք են առաջադրել:

28. Մ.Ե.-ի կողմից մեղադրանքին առարկելու կապակցությամբ, 1997 թվականի մայիսի 7-ին Մարիբորի շրջանային դատարանի միջանկյալ քննությունների հանձնաժողովը դիմողներին ուղղորդել է եռօրյա ժամկետում լրացուցիչ քննչական գործողություններ պահանջել (տե՛ս ստորև՝ կետ 93):

29. Քննիչ դատավորը հետագայում հարցաքննել է մի քանի վկաների և կարգադրել է դատական բժիշկ Կ.Յ.-ին շտապօգնության և ամենտեղիայի ուղորդների ավստրիացի դատաբժշկական փորձագետին, եզրակացություն կազմել: Իր եզրակացության մեջ Կ.Յ.-ն ամրագրել է, որ դիմողների որդու մահվան հիմնական պատճառն անորոշ է, ուստի որդու վիճակի կապակցությամբ Մ.Ե.-ի կողմից իրականացված միջոցառումների արդյունավետությունն էական չէ:

30. 1998 թվականի հունիսի 22-ին քննիչ դատավորը դիմողներին տեղեկացրել է քննությունն ավարտելու որոշման մասին: Նա հիշեցրել է նրանց, որ նրանք պարտավոր են կամ մեղադրանք առաջադրել, կամ տասնհինգօրյա ժամկետում լրացուցիչ քննչական գործողություններ պահանջել (տե՛ս ստորև՝ կետ 91-92):

31. 1998 թվականի հունիսի 30-ին դիմողները քննիչ դատավորին խնդրել են հարցաքննել Կ.Յ.-ին, Պ.Գ.-ին և Տ.Վ.-ին:

32. 1998 թվականի նոյեմբերի 24-ին Կ.Յ.-ի հարցաքննությունից հետո, քննիչ դատավորը տեղեկացրել է դիմողներին, որ քննությունն ավարտվել է: Նրանց կրկին հիշեցվել է, որ նրանք կամ պետք է մեղադրանք առաջադրեն, կամ տասնհինգօրյա ժամկետում լրացուցիչ քննչական գործողություններ պահանջեն:

33. 1998 թվականի դեկտեմբերի 10-ին դիմողները երկարացված քննության արդյունքում ձեռք բերված ապացույցների հիման վրա մեղադրանք են առաջադրել: 1999 թվականի հունվարի 12-ին միջանկյալ քննությունների հանձնաժողովն անհիմն լինելու պատճառաբանությամբ մերժել է սկզբնական մեղադրանքի վերաբերյալ Մ.Ե.-ի առարկությունը:

34. 1999 թվականի հունվարի 22-ին Մ.Ե.-ն օրինականության պաշտպանության վերաբերյալ պահանջ է ներկայացրել՝ պնդելով, որ 1998 թվականի դեկտեմբերի 10-ին ներկայացված մեղադրանքն իրեն չի ուղարկվել: 1999 թվականի փետրվարի 25-ին Գերագույն դատարանը (*Vrhovno sodišče*) բեկանել է Մարիբորի շրջանային դատարանի 1999 թվականի հունվարի 12-ի որոշումը և գործն ուղարկել Շրջանային դատարան՝ ցուցում տալով, որ 1998 թվականի դեկտեմբերի 10-ին ներկայացված մեղադրանքն ուղարկվի Մ.Ե.-ին: Հետագայում Մ.Ե.-ն ներ-

կայացված մեղադրանքին առարկություն է ներկայացրել, և 1999 թվականի հունիսի 3-ին միջանկյալ քննությունների հանձնաժողովը որոշում է կայացրել գործը դիմողներին վերադարձնելու մասին՝ նրանց ուղղորդելով որոշումն ստանալու պահից եռօրյա ժամկետում լրացուցիչ քննչական գործողություններ պահանջելու միջոցով այլ ապացույցներ ձեռք բերել:

35. Դիմողները, ուղղորդմանը համապատասխան, 1999 թվականի հունիսի 21-ին լրացուցիչ քննչական գործողություններ, մասնավորապես, Կ.Յ.-ի, Պ.Գ.-ի և Տ.Վ.-ի հարցաքննություն են պահանջել: Իրենց պահանջում նրանք վիճարկել են գործը վերադարձնելը՝ նշելով, որ ապացույցները պետք է գնահատվեն գործի դատական և ոչ թե մախնական քննության փուլում:

36. Հետագայում, նրանց պահանջի կապակցությամբ քննիչ դատավորը Կ.Յ.-ից լրացուցիչ եզրակացություն է պահանջել և 1999 թվականի դեկտեմբերի 3-ին դիմողներին տեղեկացրել է, որ այլ քննչական գործողություններ են իրականացվել և նրանք ունեն 15 օր մեղադրանք առաջադրելու կամ լրացուցիչ քննչական գործողություններ պահանջելու համար:

37. Այլ քննչական գործողություններ իրականացնելու վերաբերյալ դիմողների 1999 թվականի դեկտեմբերի 16-ի պահանջի հիման վրա քննիչ դատավորը կարգադրել է վերականգնել 1993 թվականի մայիսի 3-ի դեպքերը և հարցաքննել է երկու վկաների:

38. Քննությունն ավարտվել է 2000 թվականի մայիսի 3-ին: Դիմողներին հիշեցվել են Քրեական դատավարության օրենքի («ՔԴՕ», տես ստորև՝ կետ 92) 186-րդ բաժնի 3-րդ կետի պահանջները:

39. Տվյալ ժամանակահատվածում՝ 1999 թվականի հունիսի 28-ին, դիմողները քրեական հետապնդման իրականացումն ստանձնելու վերաբերյալ համրային մեղադրողին կրկին հաջողությամբ չավարտված պահանջ են ներկայացրել:

40. 2000 թվականի մայիսի 19-ին դիմողները նոր մեղադրանք են առաջադրել և ներկայացրել լրացուցիչ ապացույցներ, որոնք նրանցից պահանջվել էր ձեռք բերել:

41. 2000 թվականի օգոստոսին դիմողները Դատավորների խորհուրդ (*Sodni svet*) բողոք են ներկայացրել՝ կապված քրեական դատավարության տևողության հետ: Նրանք մաս բացարկ են հայտնել միջանկյալ քննությունների հանձնաժողովի երեք դատավորների, ովքեր նախկինում լսել էին առաջադրված մեղադրանքի վերաբերյալ Մ.Ե.-ի կողմից ներկայացված առարկությունները: 2000 թվականի հոկտեմբերի 10-ին Մարիբորի շրջանային դատարանի նախագահը մերժել է դիմողների բողոքը՝ կապված դատավորներին վարույթից հեռացնելու հետ:

42. Առաջադրված մեղադրանքի դեմ Մ.Ե.-ի կողմից հետագայում առարկություններ ներկայացնելուց հետո՝ միջանկյալ քննությունների հանձնաժողովը 2000 թվականի հոկտեմբերի 18-ին քննության է առել գործը և որոշում կայացրել քրեական վարույթը դադարեցնելու մասին: Հիմք ընդունելով, մասնավորապես, Լյուբլյանայի դատական բժշկության ինստիտուտի և Կ.Յ.-ի եզրակացությունները՝ այն գտել է, որ դիմողների որդու ռեակցիան դեքսամետազոնի և/կամ սինոֆենի ներարկմանը՝ առաջացել է այդ դեղամիջոցների նկատմամբ նրա զգայունության և միոկարդիտի հետևանքով, որը, անկասկած, հանդիսացել է նախապես գոյություն ունեցած վիճակ: Ինչ վերաբերում է Մ.Ե.-ի գործողություններին, ապա միջանկյալ քննությունների հանձնաժողովը գտել է, որ ապացույցները բավարար չեն հիմնա-

վորելու համար դիմողների այն մեղադրանքը, որ նա կատարել է տվյալ հանցագործությունը: Դիմողները պարտավորվել են 1999 թվականի հունվարի 23-ից (այն ժամկետը, երբ ՔԴՕ-ում փոփոխություններ են կատարվել, որոնք պարտավորեցնում են տուժող կողմին հատուցել դատական ծախսերը, եթե վարույթն ավարտվել է նրանց կողմից առաջադրված մեղադրանքի մերժմամբ) սկսած վճարել քննության հետ կապված տուրքերը և ծախսերը:

43. 2000 թվականի նոյեմբերի 7-ին դիմողները բողոք են ներկայացրել, որը Մարիբորի բարձր դատարանը 2000 թվականի դեկտեմբերի 20-ին մերժել է: Հետո նրանք միջնորդություն են ներկայացրել Գլխավոր հանրային դատախազին (*Generalni državni tožilec*) խնդրելով նրան օրինականության պաշտպանության վերաբերյալ պահանջ ներկայացնել Գերագույն դատարան: Նրանց միջնորդությունը մերժվել է 2001 թվականի մայիսի 18-ին:

44. Նշված ժամանակահատվածում 2001 թվականի մարտի 13-ին, դիմողները սահմանադրական բողոք են ներկայացրել Սահմանադրական դատարան (*Ustavno sodišče*) վճարկելով վարույթի դատավարական անարդարացիությունը և տևողությունը, ինչպես նաև այն, որ նրանք զրկված են եղել դատարան դիմելու հնարավորությունից նախքան մեղադրանքը միջանկյալ քննությունների հանձնաժողովի կողմից մերժվելը: 2001 թվականի հոկտեմբերի 9-ին Սահմանադրական դատարանը մերժել է նրանց բողոքն այն հիմքով, որ քրեական վարույթի վերջնական դադարեցումից հետո «լրացուցիչ» մեղադրողը չի կարող Սահմանադրական դատարան բողոք ներկայացնել, քանի որ նա չունի *locus standi* այդ դատարանի առջև:

45. 2001 թվականի մարտի 27-ին դիմողները նաև քրեական մեղադրանք են ներկայացրել՝ վիճարկելով իրենց գործը լսած՝ Մարիբորի շրջանային և բարձր դատարանների յոթ դատավորների ոչ պատշաճ վարքագիծը: Մեղադրանքն անհիմն լինելու պատճառաբանությամբ 2001 թվականի հունիսի 13-ին մերժվել է Մարիբորի շրջանային հանրային դատախազի գրասենյակի կողմից:

46. Հետագայում դիմողները մի քանի անգամ փորձել են վերաբացել գործով վարույթը: Ի թիվս դիմողների այլ միջնորդությունների, որոնք անընդունելի լինելու պատճառով մերժվել են իշխանությունների կողմից, եղել են հետևյալները.

2001 թվականի հուլիսի 3-ին նրանք ներկայացրել են «քրեական վարույթի նորոգման վերաբերյալ պահանջ», որն ըստ էության հանդիսացել է վարույթի վերաբացման պահանջ: 2001 թվականի օգոստոսի 29-ին Մարիբորի շրջանային դատարանի միջանկյալ քննությունների հանձնաժողովը մերժել է նշված պահանջն այն հիմքով, որ քրեական վարույթն ավարտվել է վերջնական որոշմամբ և որ վարույթի վերաբացումը մեղադրյալին վնաս կպատճառի: 2001 թվականի նոյեմբերի 9-ին Մարիբորի բարձր դատարանը մերժել է դիմողների 2001 թվականի սեպտեմբերի 4-ով թվագրված բողոքը:

2002 թվականի հունիսի 24-ին դիմողները Մարիբորի բարձր դատարան են ներկայացրել «Մարիբորի շրջանային դատարանում իրականացված ... ամբողջ քրեական վարույթն անհապաղ վերացնելու վերաբերյալ պահանջ»: Սա, ըստ էության, դիտվել է նաև որպես վարույթի վերաբացման պահանջ և նմանապես մերժվել է: 2002 թվականի նոյեմբերի 27-ին Մարիբորի բարձր դատարանը մերժել է դիմողների բողոքը:

47. Ի վերջո, 2002 թվականի հուլիսի 17-ին դիմողները Ս.Ե.-ի դեմ նոր մեղադրանք են ներկայացրել: 2003 թվականի հուլիսի 14-ին Սլովեն Գրադեկի շրջանային դատարանը բացառել է մեղադրանքի քննությունը, քանի որ ենթադրյալ հանցագործության համար քրեական պատասխանատվության վաղեմության ժամկետն ավարտվել էր 2003 թվականի մայիսի 3-ին:

B. Քաղաքացիական դատավարություն

48. 1995 թվականի հուլիսի 6-ին դիմողները Սլովեն Գրադեկի հիվանդանոցի և Ս.Ե.-ի դեմ Սլովեն Գրադեկի շրջանային դատարանում քաղաքացիական վարույթ են հարուցել իրենց որդու մահվան հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի՝ 24.300.000 սլովենական տոլարի (SIT) չափով, հատուցման պահանջով:

49. 1995 թվականի օգոստոսի 10-ին նրանք վարույթ են հարուցել նաև ներքին առողջապահական միավորի ղեկավարի՝ Ֆ.Վ.-ի, ինչպես նաև Սլովեն Գրադեկի գլխավոր հիվանդանոցի տնօրենի՝ Դ.Պ.-ի, դեմ: Հետագայում դիմողների պահանջով դատարանը միավորել է երկու վարույթները:

50. Վարույթի բոլոր պատասխանողներն իրենց գրավոր առարկությունները ներկայացրել են մինչև 1995 թվականի հոկտեմբերը:

51. 1997 թվականի օգոստոսի 30-ին Սլովեն Գրադեկի շրջանային դատարանի նախագահին ներկայացված հսկողական բողոքում (*nadzorstvena pritožba*) դիմողները վիճարկել են, որ քաղաքացիական վարույթները պետք է իրականացվեն չնայած այն հանգամանքին, որ չավարտված քրեական վարույթներն էականորեն ձգձգվում են:

52. 1997 թվականի հոկտեմբերի 21-ին, վկայակոչելով Քաղաքացիական դատավարության օրենքի (տես ստորև կետ 97) 213-րդ բաժնի 1-ին ենթակետը, դատարանը կասեցրել է քաղաքացիական վարույթները մինչև քրեական վարույթներով վերջնական որոշման կայացումը: Այն մշել է, որ քաղաքացիական վարույթների արդյունքները հիմնվելու են առավելապես նախնական հարցի լուծման (*predhodno vpraanje*), մասնավորապես՝ քրեական դատավարության արդյունքում կայացված դատավճռի վրա: Դիմողներն այդ որոշումը չեն բողոքարկել, հետևաբար՝ այն վերջնական է դարձել 1997 թվականի նոյեմբերի 17-ին:

53. 1998 թվականի հոկտեմբերի 22-ին դատավոր Ս.Պ.-ն պատասխանել է դիմողների՝ 1998 թվականի հոկտեմբերի 15-ի հսկողական բողոքին՝ *inter alia* հետևյալ կերպ.

«[Դիմողները] քրեական դատավարությունում «լրացուցիչ» մեղադրողներ են և, հետևաբար, շատ լավ տեղեկացված են, որ Մարիբորի շրջանային դատարանում, որտեղ որոշվում է սկզբնական հարցը, գործի քննությունը չի ավարտվել: [Քաղաքացիական] դատավարությունը կասեցնելու դեմ նրանց հսկողական բողոքը, հետևաբար, լրիվ սուտ է»:

Դիմողների կողմից Արդարադատության նախարարություն ներկայացված բողոքի հիման վրա դատավոր Ս.Պ.-ին կարգադրություն է արվել պարզաբանել դիմողներին տրված իր պատասխանը:

54. 1999 թվականի փետրվարին դիմողները կրկին հսկողական բողոք են ներկայացրել. կասեցումը, սակայն, ուժի մեջ է մնացել:

55 1999 թվականի օգոստոսի 27-ին դատավոր Պ.Պ.-ն, ուն, պարզվում է գործը մակագրվել է, դիմողներին մամակ է ուղարկել, որում *inter alia* նշվել էր.

«Սույն գործով քրեական պատասխանատվությունը նախնական հարցն է, որը կապված է քաղաքացիական հայցի լուծման հետ, ուստի քաղաքացիական դատարանը չի կարող հաստատված համարել այնպիսի փաստեր, որոնք կտարբերվեն քրեական դատարանի կողմից հաստատված փաստերից»:

56. 1999 թվականի սեպտեմբերի 8-ին դիմողներն ընդդատությունը փոխելու վերաբերյալ միջնորդություն են ներկայացրել, որը Գերագույն դատարանը մերժել է 1999 թվականի հոկտեմբերի 13-ին:

57. 1999 թվականի դեկտեմբերի 6-ին Սլովեն Գրադեկի շրջանային դատարանը տեղեկացրել է դիմողներին, որ վարույթը դադարեցնելու հիմքերը դեռ առկա են:

58. 2001 թվականի մարտի 12-ին դիմողները հսկողական բողոք են ներկայացրել՝ պահանջելով արգելել քաղաքացիական վարույթի դադարեցումը: 2001 թվականի մայիսի 19-ին դատավոր Պ.Պ.-ն 2001 թվականի հունիսի 13-ին միստ է նշանակել: Սակայն այդ միստը դիմողների խնդրանքով հետաձգվել է այն բանից հետո, երբ նրանց ներկայացուցիչը բացատրություն է տվել, որ ինքը ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով վնասվածք է ստացել և գտնվում է հիվանդության պատճառով արձակուրդի մեջ:

59. 2001 թվականի հունիսի 11-ին դիմողներն ընդդատությունը փոխելու վերաբերյալ այլ միջնորդություն են ներկայացրել: 2001 թվականի սեպտեմբերի 27-ին Գերագույն դատարանն ընդդատությունը փոխելու վերաբերյալ որոշում է կայացրել և գործն ուղարկել Սարիբորի շրջանային դատարան՝ «վարույթը խոչընդոտող և այն ձգձգող լարվածության» հիմքով:

60. Հետագայում գործը մակագրվել է դատավոր Մ.Տ.Զ.-ին: 2002 թվականի ապրիլի 3-ին Սարիբորի շրջանային դատարանի միստը հետաձգվել է, քանի որ դիմողները նշել են, որ ցանկանում են դատական միստը նախագահող դատավորին բացարկ հայտնել:

61. Դատավորներից ոմանց դեմ քրեական մեղադրանք ներկայացնելուց հետո (տե՛ս վերը՝ կետ 45), դիմողները 2002 թվականի ապրիլի 8-ին Սարիբորի շրջանային և Սարիբորի բարձր դատարանների բոլոր դատավորներին բացարկ են հայտնել: Դիմողների պահանջը մեկնաբանելով՝ դատավոր Մ.Տ.Զ.-ն *inter alia* նշել է, որ 2002 թվականի ապրիլի 3-ի միստի ժամանակ նա պարզել է, որ պատասխանողներից մեկը, ուն ձեռքը նա սեղմել էր միստի ժամանակ, նրա հոր մտերիմ ծանոթն է («*dober znanec*»): Նա հավելել է, որ դիմողները մշտապես առարկություններ էին անում, ինչի արդյունքում անհմարին էր վարույթը պատշաճ իրականացնել: Պարզվում է, որ դատավոր Մ.Տ.Զ.-ն հետագայում ինքնաբացարկ է հայտնել: 2002 թվականի օգոստոսի 12-ին դատավորիներին հայտնված բացարկը բավարարվել է այնքանով, որքանով դա վերաբերել էր դատավոր Մ.Տ.Զ.-ին: Գործը մակագրվել է դատավոր Կ.Պ.-ին:

62. 2002 թվականի նոյեմբերի 21-ին և 2003 թվականի մարտի 20-ին Գերագույն դատարանը մերժել է ընդդատությունը փոխելու վերաբերյալ դիմողների միջնորդությունը:

63. 2003 թվականի հունիսի 12-ին նշանակված միստը դիմողների խնդրանքով հետաձգվել է այն բանից հետո, երբ նրանք հայտարարել են, որ իրենց փա-

տաքանը չի ցանկանում պաշտպանել իրենց շահերը, քանի որ նրա դատերը Լյուբլյանայի բժշկական կենտրոնում հրաժարվել են բժշկական օգնություն ցույց տալ: Հետագայում նրանք տեղեկացրել են դատարանին, որ իրենց փաստաբանը, փաստորեն, շարունակելու է ներկայացնել իրենց շահերը:

64. 2003 թվականի հոկտեմբերի 28-ի Մարիբորի շրջանային դատարանի նիստի ժամանակ հարցաքննվել են Ֆ.Վ.-ն և Մ.Ե.-ն: Արձանագրությունից պարզ է դառնում, որ դիմողներին թույլ չի տրվել տալ նրանց ցանկացած տասներկու հարցերը: Հարցեր տալը չթույլատրելու վերաբերյալ դատավորի որոշումը հիմնված էր առավելագույն պատասխանողի առարկության վրա, թեև չորս դեպքերում դատարանը պատճառաբանել է տվյալ հարցադրումները չթույլատրելու վերաբերյալ իր որոշումը:

65. 2003 թվականի դեկտեմբերի 8-ին դիմողները դատավոր Կ.Պ.-ին բացարկի միջնորդություն են ներկայացրել: 2003 թվականի դեկտեմբերի 18-ին դիմողներին պահանջը մերժվել է:

66. 2004 թվականի հունվարի 16-ին նշանակված նիստը հետաձգվել է, քանի որ դիմողներն ընդդատությունը փոխելու վերաբերյալ միջնորդություն են ներկայացրել: 2004 թվականի մարտի 5-ին դիմողներն այլ միջնորդություն են ներկայացրել: Երկու միջնորդություններն էլ մերժվել են Գերագույն դատարանի կողմից (համապատասխանաբար՝ 2004 թվականի հունվարի 22-ին և 2004 թվականի մայիսի 13-ին):

67. Պարզվում է, որ 2005 թվականի մայիսի 23-ին և 24-ին նշանակված նիստերը հետաձգվել են, քանի որ դիմողների նոր նշանակված փաստաբանը պարտավոր էր մասնակցել այլ, սույն գործի հետ կապ չունեցող գործի:

68. 2005 թվականի մայիսի 4-ին դիմողները գրավոր դիմում են ներկայացրել և փոփոխել վնասի հատուցման վերաբերյալ իրենց պահանջը: Նրանք նաև խնդրել են արագացնել գործի քննությունը:

69. 2005 թվականի հոկտեմբերի 12-ին դատավոր Դ.Մ.-ին, ում այդ ժամանակ հավանաբար մակագրվել էր գործը, Մարիբորի շրջանային դատարանի նախագահը կարգադրել է այն քննել առաջնահերթության կարգով և յուրաքանչյուր վեց օրը մեկ զեկուցել վարույթի ընթացքի մասին: Իր որոշումը նախագահը հիմնավորել է՝ վկայակոչելով վարույթի տևողությունը, գործի նկատմամբ մեծ ուշադրությունը և Օմբուդսմենի միջամտությունը (*Varuh človekovih pravic*):

70. Դատական նիստերը կայացել են 2006 թվականի հունվարի 23-ին, 25-ին և 27-ին՝ դատավոր Դ.Մ.-ի նախագահությամբ: Դիմողները հրաժարվել են Ֆ.Վ.-ի և Դ.Պ.-ի վերաբերյալ իրենց հայցերից: Նիստից հետո նրանք բացարկ են հայտնել դատավոր Դ.Մ.-ին այն հիմքով, որ նա մերժել է իրենց բավարար ժամանակ տրամադրել հակառակ կողմի՝ նույն օրը ներկայացված լայնաբովանդակ դիմումներին պատասխանելու համար: Նրանց խնդրանքը 2006 թվականի հունվարի 30-ին մերժվել է Մարիբորի շրջանային դատարանի նախագահի կողմից: Սակայն 2006 թվականի հունվարի 31-ին դատավոր Դ.Մ.-ն ինքնաբացարկ է հայտնել այն հիմքով, որ նրա ամբողջական անունը 2006 թվականի հունվարի 28-ին նշվել է թերթի հոդվածում, որում նաև ասվել էր, որ նրան բացարկ է հայտնվել դատավարության մասնակիցներին ենթադրաբար անհավասար վերաբերմունք ցույց տալու պատճառով: Դատարանի նախագահը բավարարել է նրա խնդրանքը՝ որպես «անկասկած հիմնավորված»:

71. Գործը մակագրվել է դատավոր Ա.Զ.-ին:

72. Նիստերը կայացել են 2006 թվականի հունիսի 16-ին և օգոստոսի 25-ին:

73. 2006 թվականի օգոստոսի 25-ին Մարիբորի շրջանային դատարանը վերջնական՝ 10.508.000 SIT ոչ նյութական և 5.467.000 SIT նյութական վնասի փոխհատուցման վերաբերյալ դիմողների հայցը մերժելու վճիռ է կայացրել: Դիմողները պարտավորվել են պատասխանողներին փոխհատուցել նրանց դատական ծախսերը: Հիմք ընդունելով փորձագետի եզրակացությունը՝ դատարանը հանգել է այն հետևությանը, որ Մ.Ե.-ն չէր կարող կանխատեսել դիմողների որդու ռեակցիան նրան ներարկված դեղամիջոցի նկատմամբ, և որ նա և հիվանդանոցի աշխատակիցները գործել են հիվանդի նկատմամբ հոգածության պահանջվող չափանիշին համապատասխան: Ի լրումն, դատարանն անհիմն լինելու պատճառաբանությամբ մերժել է դիմողների հայցն այն մասին, որ հիվանդանոցը պատշաճ կերպով սարքավորված չի եղել:

74. 2006 թվականի հոկտեմբերի 25-ին դիմողները բողոք են ներկայացրել Մարիբորի բարձր դատարան: Նրանք վիճարկել են, որ առաջին ատյանի դատարանը ճիշտ չի պարզաբանել բոլոր համապատասխան փաստերը, սխալ է կիրառել նյութաիրավական նորմը և թույլ է տվել դատավարական խախտում՝ անթույլատրելի ճանաչելով կամ հաշվի չառնելով կոնկրետ ապացույցը և, մասնավորապես, մերժելով այլ փորձագետի եզրակացություն ստանալու վերաբերյալ պահանջը:

75. 2008 թվականի հունվարի 15-ին Մարիբորի բարձր դատարանը մերժել է բողոքը՝ այն անհիմն լինելու պատճառաբանությամբ և օրինական ուժի մեջ է թողել առաջին ատյանի դատարանի դատավճիռը:

76. 2008 թվականի փետրվարի 28-ին դիմողներն օրենքով սահմանված կարգով բողոք են ներկայացրել (*revizija*):

77. 2008 թվականի հուլիսի 10-ին Գերագույն դատարանը մերժել է դիմողներին՝ օրենքով սահմանված կարգով ներկայացված բողոքը՝ նշելով, որ Կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտումն արձանագրած՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռին հղում կատարելուց բացի, այստեղ ըստ էության բարձրացված են նույն հարցերը, ինչ Բարձր դատարան ներկայացված բողոքում, մասնավորապես, դիմողների կողմից որպես գործին վերաբերող նշված ապացույցները հավաքելը կամ հետազոտելը մերժելը: Այն մերժել է բողոքը չհիմնավորված լինելու պատճառաբանությամբ՝ գտնելով, որ ստորադաս դատարանները գործել են օրենքին համապատասխան: Ապա այն նշել է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռում առկա եզրակացությունները, որոնք կապված են հիվանդանոցում մահվան դեպքի վերաբերյալ գործի անհապաղ քննության պահանջի հետ, չեն կարող տարածվել քննարկվող ապացույցի հավաքումը կամ հետազոտումը մերժելու օրինականության վրա:

78. 2008 թվականի սեպտեմբերի 15-ին դիմողները սահմանադրական բողոք են ներկայացրել Սահմանադրական դատարան՝ վիճարկելով հետևյալ սահմանադրական երաշխիքների խախտումները՝ օրենքի առջև հավասարության իրավունք, մարդու կյանքի անձեռնմխելիություն, հավասար պաշտպանության իրավունք, դատական պաշտպանության իրավունք և իրավական օգնության իրավունք:

Վարույթները դեռևս անավարտ են:

C. Առաջին դիմողի դեմ ներկայացված քրեական մեղադրանքը

79. 2002 թվականի ապրիլի 29-ին Մարիբորի շրջանային հանրային դատախազը նախնական մեղադրական ակտ (*obtožni predlog*) է ներկայացրել առաջին դիմողի դեմ՝ նշելով, որ նա վիրավորական վերաբերմունք է դրսևորել՝ Մարիբորի շրջանային դատարանին պաշտոնապես ասելով, որ «ես ծանծրացել եմ այս (սեռական բնույթի հայհոյանք) դատարանից, անիծյալ պետությունը ոչինչ չի անում, այն տեղյակ է, որ մեր որդին սպանվել է»։ Քրեական հետապնդումը հիմնված էր Մարիբորի շրջանային դատարանի կողմից ներկայացված քրեական մեղադրանքի վրա։

80. 2004 թվականի հոկտեմբերի 5-ին Մարիբորի շրջանային դատարանն Օմբուդսմենի միջամտության արդյունքում հետ է վերցրել քրեական մեղադրանքը (տե՛ս ստորև կետ 85)։ Մարիբորի տեղական դատարանը հետագայում մերժել է նախնական մեղադրական ակտը։

D. Օմբուդսմենի կարծիքը

81. Դիմողները քաղաքացիական դատավարության իրականացման հետ կապված մի քանի խնդրանք են ներկայացրել Օմբուդսմենի գրասենյակ։ Նրանց գործը ներկայացվել է Օմբուդսմենի 2002, 2003 և 2004 թվականների տարեկան գեկույցներում։

82. Սլովեն Գրադեկի շրջանային դատարանի նախագահին ուղղված՝ 2001 թվականի ապրիլի 24-ի մամակում Օմբուդսմենի տեղակալը շեշտել է, որ քրեական պատասխանատվության հարցը չի կարող դիտվել որպես բժշկի և հիվանդանոցի դեմ հարուցված քաղաքացիական վարույթի նախնական հարց։ Ապա նա նշել է, որ քաղաքացիական վարույթի կասեցման համար չկա որևէ հիմնավորում։

83. Դիմողներին ուղղված՝ 2002 թվականի օգոստոսի 29-ի մամակում և 2002 թվականի իր տարեկան գեկույցում (էջեր 42 և 43), Օմբուդսմենը քննադատել է դատավոր Մ.Տ.Ջ.-ի վարքագիծը։ Նա շեշտել է, որ դատավորն անկողմնակալ լինելու իր հնարավորության վերաբերյալ մոտեցում է արտահայտել միայն այն բանից հետո, երբ դիմողները նրան բացարկ են հայտնել, և Օմբուդսմենը միջամտել է գործին, թեև նա նախապես տեղյակ է եղել նշված պատճառների մասին։

84. Օմբուդսմենի 2003 թվականի գեկույցի այն բաժինը (էջեր 226-228), որը վերաբերում է դիմողների գործին և, մասնավորապես, քաղաքացիական դատավարության ընթացքում դատավորների վարքագծի քննադատությանը, *inter alia* ամրագրում է.

«[2003 թվականի հոկտեմբերի 28-ի] Դատական միստի արձանագրության մեջ հղում է կատարվում տասներկու հարցերի, որոնք հայցվորներին չի թույլատրվել տալ... Ինչ վերաբերում է այս տասներկու հարցերի մեծամասնությանը, ապա արձանագրության մեջ որևէ նշում չկա այն մասին, թե ինչու դատավորը չի թույլատրել հայցվորներին տալ այդ հարցերը։ Յուրաքանչյուր փուլում առկա է դիմողների ներկայացուցիչների նախնական առարկությունն այդ հարցերի դեմ։

...

Թեև [դիմողների] արձագանքները, հայտարարությունները և առաջարկությունները տվյալ դեպքում հավանաբար ծայրահեղ են եղել, սակայն իշխանությունները, այդ թվում՝ դատարանները, պետք է հաշվի առնեին նրանց հուզական ապրումները...

[գործոն, որը] կարող է անհրաժեշտություն առաջացնել դատավարության հանդուրժողական և ճկուն եղանակով իրականացումը, [սակայն] առանց ի վնաս պատասխանողների խախտելու դատավարական նորմերը: Այնուամենայնիվ, միստի արձանագրությունը բավական հանգիստ մթնոլորտի առկայության տպավորություն է ստեղծում, տպավորություն, որը հաստատվում է մաև դատավորների և պատասխանողների ներկայացուցիչների երկխոսությունների արձանագրություններով»:

85. Իր՝ 2004 թվականի տարեկան զեկույցում (էջեր 212-214) Օմբուդսմենը քննադատել է Մարիբորի շրջանային դատարանին առաջին պատասխանողի դեմ քրեական մեղադրանք ներկայացնելու համար: Ջեկույցում ուշադրություն էր հրավիրված Մարիբորի շրջանային դատարանի այն բացատրության վրա, որ օրենքով սահմանված կարգով պահանջվում է ներկայացնել քրեական մեղադրանք և հետամուտ լինել դրա քննությանը, քանի որ դատարանը մեղավոր կլինի հանցանքի կատարման մեջ, եթե դա չանի: Օմբուդսմենը շեշտել է, որ նման հետևության համար իրավական հիմքեր չկան: Դրան հակառակ, վիրավորական վերաբերմունքի համար քրեական հետապնդում կարող է իրականացվել միայն տուժող կողմի առաջադրած քրեական մեղադրանքի հիման վրա, որը սույն գործով եղել է Մարիբորի շրջանային դատարանի դիմումը: Օմբուդսմենի միջամտության արդյունքում և նրա նամակներում առկա փաստարկների հիման վրա Մարիբորի շրջանային դատարանը որոշում է կայացրել առաջին դիմողի դեմ ներկայացված քրեական մեղադրանքը հետ վերցնել:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

A. Քրեական օրենսգիրք

86. Քրեական օրենսգիրքը (*Kazenski zakonik*, Official Gazette no. 63/94)՝ փոփոխություններով հանդերձ, «Առողջությանը վնաս պատճառող հանցագործություններ» վերտառության ներքո սահմանում է այն հանցագործությունները, որոնք կապված են անզույշ բժշկական միջամտության արդյունքում վնասվածք պատճառելու հետ: Ի լրումն դրա, Քրեական օրենսգրքի 129-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք, ով այլ անձի անզուլությամբ վնաս է պատճառել, ենթակա է ազատազրկման ոչ պակաս, քան վեց ամիս և ոչ ավելի, քան հինգ տարի ժամկետով: Այս հանցագործությունները հանդիսանում են հանրային դատախազի մանդատային մեղադրանքի առարկա, սակայն տուժող կողմը ևս ունի «լրացուցիչ» մեղադրանքի իրավունք (տե՛ս ստորև՝ կետ 88):

B. Քրեական դատավարության օրենք

87. Քրեական դատավարությունը Սլովենիայում կարգավորվում է Քրեական դատավարության օրենքով (*Zakon o kazenskem postopku*, Official Gazette no. 63/94 – «ՔՂՕ») և հիմնված է օրինականության և պաշտոնականության սկզբունքների վրա: Մեղադրանքը մանդատային է, երբ առկա է ողջամիտ կասկած (*utemeljeni sum*) առ այն, որ կատարվել է մանդատային մեղադրանքի առարկա հանդիսացող հանցագործություն:

88. Հանրային մեղադրանքն իրականացվում է հանրային մեղադրողի գրասենյակի կողմից: Սակայն, եթե հանրային մեղադրողը մերժում է քրեական մեղադրանքը կամ դատավարության ցանկացած փուլում իրաժարվում է մեղադրանքից, տուժող կողմն իրավունք ունի մասնակցելու վարույթին որպես «լրացուցիչ» մեղադրող, ինչը նույնն է, եթե տուժող կողմը հանդես գար որպես մեղադրող (ՔՂՕ, բաժին 19(3)): «Լրացուցիչ» մեղադրողն սկզբունքորեն նույն դատավարական իրավունքներն ունի, ինչ հանրային մեղադրողը, բացառությամբ այն իրավունքների, որոնք պատկանում են հանրային մեղադրողին՝ որպես պաշտոնատար անձ (ՔՂՕ, բաժին 63(1)): Եթե «լրացուցիչ» մեղադրողը մասնակցում է վարույթին, ապա հանրային մեղադրողն իրավունք ունի, նախքան հիմնական լսումը եզրափակելը, ցանկացած պահի ստանձնել մեղադրանքի պաշտպանությունը (ՔՂՕ, բաժին 63(2)):

89. Հանցագործության քննությունն իրականացվում է քննիչ դատավորի կողմից հանրային կամ «լրացուցիչ» մեղադրողի պահանջով: Եթե քննիչ դատավորը համաձայն չէ հանցագործության քննություն սկսելու վերաբերյալ պահանջի հետ, ապա նա պետք է այն հանձնի երեք դատավորից կազմված միջանկյալ քննությունների հանձնաժողով, որը որոշում կկայացնի հանցագործության քննությունն սկսելու վերաբերյալ: Եթե քննիչ դատավորը բավարարում է պահանջը, ապա մեղադրյալը կարող է բողոք ներկայացնել միջանկյալ քննությունների հանձնաժողով: Դատավարության կողմերը կարող են Բարձր դատարան (*vije sodiše*) բողոքարկել միջանկյալ քննությունների հանձնաժողովի որոշումները: Բողոքի ներկայացումը հանցագործության քննության վերաբերյալ որոշման կատարումը կասեցնելու հիմք չէ (ՔՂՕ, բաժին 169):

90. Եթե քննություն իրականացնելու վերաբերյալ պահանջը մերժվել է հանցանքի կատարման մեջ կասկածյալի մեղավորության վերաբերյալ հիմնավոր կասկածի բացակայության պատճառով, ապա քրեական գործով վարույթը կարող է վերաբացվել հանրային կամ «լրացուցիչ» մեղադրողի պահանջով, եթե նրանք կներկայացնեն նոր ապացույցներ, որոնց հիման վրա միջանկյալ քննությունների հանձնաժողովը կհանդգնի, որ առկա են քրեական վերույթ հարուցելու պայմաններ (ՔՂՕ, բաժին 409):

91. ՔՂՕ-ի 184-րդ բաժինը սահմանում է, որ քննիչ դատավորը պետք է ավարտի քննությունը, եթե գործի հանգամանքները բավականաչափ պարզաբանված են: Դատախազը պետք է հաջորդող տասնհինգ օրերի ընթացքում պահանջի այլ քննչական գործողությունների իրականացում, մեղադրանք առաջադրի կամ դադարեցնի քրեական հետապնդումը:

92. Ինչ վերաբերում է քննությանը տուժող կողմի դերակատարությանը, ապա ՔՂՕ 186-րդ բաժնի համապատասխան մասը սահմանում է.

«(1) Որպես դատախազ հանդես եկող տուժող կողմը... կարող է քննիչ դատավորից պահանջել սկսել գործի քննությունը կամ առաջարկել լրացուցիչ քննչական գործողություններ կատարել: Քննության ընթացքում նա կարող է նաև քննիչ դատավորին այլ առաջարկություններ ներկայացնել:

(2) Քննություն հարուցելիս, իրականացնելիս, կասեցնելիս և դադարեցնելիս անհրաժեշտ է ղեկավարվել *mutatis mutandis* սույն օրենքի դրույթներով՝ կիրառելով... հանրային մեղադրողի պահանջով իրականացվող քննության նկատմամբ...

(3) Երբ քննիչ դատավորը գտնում է, որ քննությունն ավարտված է, նա պետք է այդ մասին տեղեկացնի որպես մեղադրող հանդես եկող տուժող կողմին... Քննիչ

դատավորը պետք է նաև տուժող կողմին պարզաբանի, որ... նա պարտավոր է մեղադրանք առաջադրել... տասնհինգօրյա ժամկետում, ինչը չանելու դեպքում կենթադրվի, որ նա հրաժարվել է մեղադրանքից և վարույթը դադարեցնելու վերաբերյալ որոշում կկայացվի: Քննիչ դատավորը պետք է նաև պարտավոր լինի նման գզուշացում անել որպես մեղադրող հանդես եկող տուժող կողմին... այն դեպքերում, երբ համեմատողովը մերժել է քննությունը լրացնելու վերաբերյալ նրա միջնորդությունն այն հիմքով, որ դեպքի բավարար քննության վերաբերյալ կասկած չկա»:

93. Քննության ավարտից հետո դատարանում վարույթ կարող է իրականացվել միայն առաջադրված մեղադրանքի հիման վրա (ՔՊՕ, բաժին 268):

ՔՊՕ 274-րդ բաժնի հիման վրա մեղադրյալը կարող է առարկել առաջարկված մեղադրանքի դեմ այն ստանալու պահից ութ օրվա ընթացքում: Առարկությունը քննվում է միջանկյալ քննությունների համեմատողովի կողմից: ՔՊՕ 276-րդ բաժինը *inter alia* սահմանում է.

«(2) Եթե առարկությունը քննելիս միջանկյալ քննությունների համեմատողովն առաջադրված մեղադրանքում (բաժին 269) կամ ինքնին վարույթում հայտնաբերում է սխալներ կամ թերություններ կամ գտնում է, որ նախքան մեղադրանքի վերաբերյալ որոշում կայացնելն անհրաժեշտ է շարունակել քննությունը, ապա այն պետք է մեղադրանքը վերադարձնի մեղադրողին՝ հայտնաբերված թերություններն ուղղելու կամ... քննությունը լրացնելու վերաբերյալ ցուցումներ տալով: Մեղադրողը համեմատողովի որոշման մասին տեղեկացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում պետք է ներկայացնի փոփոխված մեղադրանք կամ պահանջի... լրացուցիչ քննություն իրականացնել...»:

94. Ի լրումն, ՔՊՕ 277-րդ բաժնի համապատասխան մասը սահմանում է.

«(1) Մեղադրական ակտին ներկայացված առարկության վերաբերյալ որոշում կայացնելիս միջանկյալ քննությունների համեմատողովը չպետք է ընդունի մեղադրանքը և պետք է դադարեցնի քրեական գործով վարույթը, եթե գտնի, որ ...

(3) քրեական մեղադրանքը ժամկետանց է քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու հիմքով...

(4) չկան ամբաստանյալին մեղսագրվող արարքի կատարման վերաբերյալ հիմնավոր կասկածը հիմնավորող բավարար ապացույցներ»:

C. Պարտավորությունների վերաբերյալ օրենսգիրք

95. Պարտավորությունների վերաբերյալ օրենքի (*Zakon o obligacijskih razmerjih*, Socialist Federative Republic of Yugoslavia's ("SFRJ") Official Gazette no. 29/1978) և 2002 թվականի հունվարի 1-ից դրա իրավահաջորդ հանդիսացող Պարտավորությունների վերաբերյալ օրենսգրքի (*Obligacijski zakonik*, Official Gazette no. 83/2001) դրույթների համաձայն՝ առողջապահական հիմնարկները և դրանց աշխատակիցները պատասխանատու են բժշկական անփութության հետևանքով հիվանդի մահվան արդյունքում պատճառված նյութական և ոչ նյութական վնասի համար: Գործատուն կարող է քաղաքացիաիրավական պատասխանատվություն կրել իր գործողությունների կամ անգործության կամ այլ անձանց՝ իր աշխատողների պատճառած վնասի համար՝ պայմանով, որ մահը կամ վնասվածքն առաջացել է աշխատողի կողմից հիվանդի նկատմամբ հոգածության համապատասխան չափանիշը չպահպանելու արդյունքում: Աշխատողները քաղաքացիական օրենքով սահմանված կարգով ուղղակիորեն պատասխանատու

են մահվան կամ վնասվածքի համար, եթե միայն այն պատճառով է դիտավորության: Սակայն գործատունը իրավունք ունի աշխատողին վնասի փոխհատուցմանը ներգրավելու վերաբերյալ հայց ներկայացնել, եթե մահը կամ վնասվածքը պատճառվել է վերջինիս կոպիտ անզգուշության պատճառով:

D. Քաղաքացիական դատավարության օրենք

96. Քաղաքացիական դատավարության օրենքի (*Zakon o pravdnem postopku*, SFRJ Official Gazette no. 4-37/77) 12-րդ բաժինը՝ փոփոխություններով հանդերձ, սահմանում է.

«Երբ դատարանի որոշումը կախված է կոնկրետ իրավունքի կամ իրավական հարաբերության առկայության հարցի մախնական որոշումից վրա, սակայն [հարցը] դեռևս չի որոշվել դատարանի կամ այլ իրավասու պաշտոնատար անձի կողմից (մախնական հարց), դատարանը կարող է ինքը որոշում կայացնել հարցի վերաբերյալ, եթե այլ բան մախատեսված չէ հատուկ օրենսդրությամբ:

Նախնական հարցի վերաբերյալ դատարանի որոշումը կլինի արդյունավետ միայն այն վարույթում, որում հարցը սահմանվել է:

Քաղաքացիական դատավարությունում դատարանը պետք է սահմանափակված լինի հանցագործության և քրեական պատասխանատվության կապակցությամբ քրեական դատարանի վերջնական դատավճռում առկա՝ մեղքի վերաբերյալ եզրակացությամբ»:

97. Քաղաքացիական դատավարության օրենքի 213-րդ բաժնի համապատասխան մասը սահմանում է.

«Ի լրումն այս օրենքում ուղղակիորեն տրված օրինակների, դատարանը կարող է կարգադրել կասեցնել վարույթը.

1. եթե այն որոշում է մախնական հարցի վերաբերյալ ինքը որոշում չկայացնի (բաժին 12)....»:

98. Քաղաքացիական դատավարության օրենքի 215-րդ բաժնի համապատասխան մասը սահմանում է.

«Եթե դատարանը կասեցրել է վարույթը 213-րդ բաժնի առաջին կետի առաջին մախադատությանը համապատասխան, վարույթը կշարունակվի, եթե [այլ] վարույթը վերջնականապես ավարտվել է (*pravnomoćno končan postopek*) ... կամ երբ դատարանը գտնում է, որ այլևս հիմքեր չկան սպասելու [այլ վարույթի] ավարտին:

Բոլոր դեպքերում կասեցված վարույթը կշարունակվի համապատասխան կողմի պահանջի առկայության դեպքում, անմիջապես այն բանից հետո, երբ կասեցման հիմքերը կդադարեն գոյություն ունենալ»:

99. Համարժեք դրույթներ կարելի է գտնել մոր քաղաքացիական դատավարության օրենքի (*Zakon o pravdnem postopku*, Official Gazette no. 83/2001) 13-րդ, 14-րդ, 206-րդ և 208-րդ բաժիններում, որն ուժի մեջ է մտել 1999 թվականի հուլիսի 14-ին:

E. Բժշկական ասոցիացիայի տրիբունալի կազմակերպմանը և գործունեությանը վերաբերող կարգավորումներ

100. 2002 թվականի մարտի 20-ին հրապարակված՝ Սլովենիայի բժշկական ասոցիացիայի («Բժշկական տրիբունալ») կազմակերպման և գործունեության վերաբերյալ կարգավորումները (*Pravilnik o organizaciji in delu razsodiča Zdravnike*

Zbornice Slovenije) *inter alia* սահմանում են մասնագիտական պարտականությունների խախտման համար բժիշկների պատասխանատվության սահմանման ընթացակարգը և այն կարգապահական միջոցառումները, որոնք կարող են կիրառվել դրա արդյունքում: Բժշկական ասոցիացիայի հանձնակատարը (*tožilec Zbornice* – «Հանձնակատարը»), ով ընտրվում է Բժշկական ասոցիացիայի անդամներից, անկախ է և իրավասու է առաջին ատյանի բժշկական տրիբունալում գործ հարուցել: Տուժող կողմը կարող է Հանձնակատարից պահանջել վարուժ հարուցել, սակայն Հանձնակատարը կարող է մերժել նման պահանջը: Նման դեպքում տուժող կողմը կարող է նախնական քննության իրականացման համար Բժշկական տրիբունալ հրավիրել: Սակայն Բժշկական տրիբունալում պաշտոնապես գործ հարուցելու իրավասությամբ օժտված է միայն Հանձնակատարը:

101. Կարգավորումների 7-րդ հոդվածը սահմանում է, որ Բժշկական տրիբունալը պետք է իր որոշումը հիմնավորի միայն առաջադրված մեղադրանքով և Հանձնակատարի ու մեղադրվող բժշկի կողմից ներկայացված ապացույցներով: Եթե մեղադրվող բժիշկը կամ Հանձնակատարը բավարարված չէ վճռով, նա կարող է այն բողոքարկել երկրորդ ատյանի բժշկական տրիբունալ:

F. Առանց անհիմն հետաձգումների դատական քննության իրավունքի պաշտպանության վերաբերյալ օրենք

102. 2007 թվականի հունվարի 1-ին Առանց անհիմն հետաձգումների դատական քննության իրավունքի պաշտպանության վերաբերյալ օրենքը (*Zakon o varstvu pravice do sojenja brez nepotrebnega odlaanja*, Official Gazette no. 49/2006 – «2006 թվականի օրենք») սկսել է գործել: 2006 թվականի օրենքը նախատեսում է անավարտ վարույթի արագացման երկու ընթացակարգ՝ հսկողական բողոք և վերջնաժամկետ սահմանելու միջնորդություն (*rokovni predlog*) և, ի վերջո, անհիմն հետաձգումների արդյունքում պատճառված վնասների արդարացի փոխհատուցման վերաբերյալ հայց (*zahteva za pravično zadočenje*):

103. Վերոնշյալ ընթացակարգերը հասանելի են, *inter alia*, քաղաքացիական դատավարության կողմերին և քրեական դատավորությունում տուժող ճանաչված անձանց:

104. Արագացման ընթացակարգերը կարող են կիրառվել առաջին և երկրորդ ատյանում վարույթների ընթացքում: Ի լրումն, 2006 թվականի օրենքը նաև սահմանում է փոխհատուցման ընթացակարգի միջոցով բավարարման հնարավորություն, մասնավորապես՝ արդարացի փոխհատուցման վերաբերյալ հայց ներկայացնելով: 2006 թվականի օրենքի 15-րդ, 19-րդ և 20-րդ բաժինների ուժով արդարացի փոխհատուցման հայց ներկայացնելու ցանկություն ունեցող կողմը պետք է բավարարի երկու կումուլյատիվ պայման: Նախ՝ առաջին կամ երկրորդ ատյանում վարույթի ընթացքում դիմողը պետք է դիմած լինի հսկողական բողոք ներկայացնելու ընթացակարգին կամ վերջնաժամկետ սահմանելու միջնորդություն ներկայացրած լինի, ապա՝ գործը պետք է վերջնականապես լուծված լինի (*pravnomočno končan*): Գործի վերջնական լուծումն սկզբունքորեն վերաբերում է վերջնական որոշմանը, որի դեմ ընդհանուր կարգով բողոքարկում չի իրականացվել. սա, սովորաբար, առաջին կամ, եթե բողոք է ներկայացվել, երկրորդ ատյանի դատարանի որոշումն է: Բացի դրանից, յուրաքանչյուր վերջնականապես լուծված

գործով փոխհատուցումը, որը կարող է տրվել վարույթի սահմանազանող երկարածման արդյունքում պատճառված ոչ նյութական վնասի համար, չի կարող գերազանցել 5.000 եվրոն (EUR) (2006 թվականի օրենքի համապատասխան դրույթների առավել մանրամասն վերլուծությունը տես *Žunič v. Slovenia*, (dec) թիվ 24342/04, 2007 թվականի հոկտեմբերի 18):

III. 1994 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի՝ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՆԱԽԿԻՆ 25-ՐԴ ԵՎ 46-ՐԴ ՀՈՂՎԱԾՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՍԼՈՎԵՆԻԱՅԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

105. 1994 թվականի հունիսի 28-ին, Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի մոտ ավանդադրելով Կոնվենցիայի վավերացման փաստաթուղթը՝ Սլովենիայի Հանրապետության արտաքին գործերի նախարարն արել է հետևյալ հայտարարությունը.

«Սլովենիայի Հանրապետությունը հայտարարում է, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 25-րդ, 4-րդ արձանագրության 6-րդ և 7-րդ արձանագրության 7-րդ հոդվածներին համապատասխան անորոշ ժամկետով ճանաչում է Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի իրավասությունը՝ ցանկացած անձի, ոչ կառավարական կազմակերպության կամ անձանց խմբի կողմից Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ուղղված խնդրանքների կապակցությամբ, որոնցում վերջիններս նշում են, որ հանդիսանում են Կոնվենցիայով և դրա արձանագրություններով սահմանված իրավունքների խախտման գոհ, եթե նշված իրավունքների ենթադրյալ խախտումը տեղի է ունեցել Կոնվենցիայի և դրա արձանագրությունների՝ Սլովենիայի Հանրապետության համար ուժի մեջ մտնելուց հետո:

Սլովենիայի Հանրապետությունը հայտարարում է, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 46-րդ և 4-րդ արձանագրության 6-րդ և 7-րդ արձանագրության 7-րդ հոդվածներին համապատասխան անորոշ ժամկետով ipso facto, որպես պարտադիր և առանց փոխադարձության պայմանների վերաբերյալ հատուկ համաձայնության, ճանաչում է Կոնվենցիայի և դրա արձանագրությունների, ինչպես նաև Սլովենիայի Հանրապետության համար Կոնվենցիայի և դրա արձանագրությունների՝ ուժի մեջ մտնելուց հետո առաջացած փաստերի կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավագործությունը»:

IV. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՆ

A. Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի 1969 թվականի կոնվենցիա

106. Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիան (Վիեննայի կոնվենցիա) ուժի մեջ է մտել 1980թ. հունվարի 27-ին: 28-րդ հոդվածը, որը սահմանում է պայմանագրերի հետադարձ ուժի բացակայության սկզբունքը, սահմանում է.

«Եթե պայմանագրից այլ նպատակ չի բխում կամ այն այլ կերպ սահմանված չէ, ապա դրա դրույթները կողմի համար պարտականություններ չեն առաջացնում՝ կապված նախքան այդ կողմի համար պայմանագիրն ուժի մեջ մտնելը կատարված գործողության կամ փաստի կամ դադարած իրավիճակի հետ»:

B. Միջազգայնորեն սխալ գործողությունների համար պետությունների պատասխանատվության վերաբերյալ Միջազգային իրավունքի հանձնաժողովի հոդվածների նախագիծը (ընդունվել է Միջազգային իրավունքի հանձնաժողովի կողմից 2001 թվականի օգոստոսի 9-ին)

107. 13-րդ հոդվածը, որը վերնագրված է «Պետության համար գործող միջազգային պարտականություն», սահմանում է.

«Պետության գործողությունը միջազգային պարտականության խախտում չի հանդիսանում, եթե գործողության կատարման պահին Պետությունը չունի տվյալ պարտականության կատարման պարտավորություն»:

108. Բացի դրանից, 14-րդ հոդվածը, որը վերնագրված է «Միջազգային պարտականության խախտման ժամանակային երկարացումը», ամրագրում է հետևյալը.

«1. Պետության կողմից կատարված գործողության միջոցով միջազգային պարտականության խախտումը, որը շարունակական բնույթ չի կրում, համարվում է տեղի ունեցած դրա կատարման ժամանակ, եթե անգամ դրա արդյունքները շարունակական բնույթ ունեն:

2. Պետության կողմից կատարված գործողության միջոցով միջազգային պարտականության խախտումը, որը շարունակական բնույթ է կրում, տարածվում է այն ամբողջ ժամանակահատվածի վրա, որի ընթացքում գործողությունը շարունակվել է և չի համապատասխանել միջազգային պարտականությանը:

3. Տվյալ դեպքը կանխելու՝ Պետության միջազգային պարտականության խախտումն առկա է դեպքը տեղի ունենալու ժամանակ և շարունակվում է այն ամբողջ ժամանակահատվածի ընթացքում, քանի դեռ դեպքը շարունակվում է և չի համապատասխանում այդ պարտականությանը»:

C. Արդարադատության միջազգային դատարան

109. *Ratione temporis* իրավասության հետ կապված հարցի վերաբերյալ Արդարադատության միջազգային դատարանի (ICJ) կողմից որոշեցրված մոտեցումն ուշադրությունը կենտրոնացնում է վեճի աղբյուրի կամ իրական պատճառի վրա (տե՛ս նաև *Blečić v. Croatia* [GC], թիվ 59532/00, կետ 74, ECHR 2006-III վճռում մեջբերված նախադեպային իրավունքը): *Հնդկաստանի տարածքով անցնելու իրավունքի վերաբերյալ գործով (Էությունը)* (1960 թվականի ապրիլի 12-ի վճիռը. I.C.J. Reports 1960, էջեր 33-36), ICJ-ն, հիմք ընդունելով Միջազգային արդարադատության մշտական դատարանի (PCIJ) նախադեպային իրավունքը, գտել է, որ ունի ժամանակային իրավասություն՝ կապված Հնդկաստանի տարածքով դեպի վերջինիս տարածքում գտնվող իր երկու անկլավներ անցնելու վերաբերյալ Պորտուգալիայի պահանջը Հնդկաստանի կողմից 1954 թվականին մերժելու հետ: Հնդկաստանը *inter alia* վիճարկել է, որ բողոքը *ratione temporis* անընդունելի է, քանի որ Պորտուգալիայի կողմից վիճարկված՝ անցման իրավունքը (right of passage) նախորդել է Դատարանի իրավասության ճանաչմանը, որը տեղի է ունեցել 1930 թվականի փետրվարի 5-ին: ICJ-ն, սակայն, գտել է, որ.

«(...) թվում է (...), որ Դատարան բերված վեճը երեք առարկա ունի. (1) Պորտուգալիայի մոտ անցման վիճարկվող իրավունքի (right of passage) առկայությունը, (2) Հնդկաստանի կողմից անցման վերոնշյալ իրավունքի վերաբերյալ իր պարտականությունները 1954 թվականի հուլիսին չկատարելը, (3) այդ չկատարման հետևանքով առաջացած ոչ օրինական վիճակի համար փոխհատուցում տրամադրելը: Երեք

առարկա ունեցող այս վեճը դատարանում չի կարող քննարկման առարկա դարձվել, եթե դրա բոլոր բաղադրատարրերը գոյություն չունենան: Սրանք թվում առկա են հանգամանքներ, որոնք Հնդկաստանը պնդում է, որ տեղադրել է 1954 թվականին Պորտուգալիայի կողմից անցման իրավունքի իրացման մեջ: Դատարան ներկայացված վեճը, հետևաբար, չի սկսվել նախքան 1954 թվականը»:

110. Հետևաբար, ICJ-ն գտել է, որ իր իրավասության համար որևէ խոչընդոտ չկա, քանի որ քննարկվում է վեճի ծագման պահը: Վկայակոչելով Դատարանի իրավասությունը ճանաչելու վերաբերյալ Հնդկաստանի հռչակագիրը՝ ICJ-ն նշում է, որ Հռչակագրից բխում է ոչ թե ցանկացած նման բողոքի չընդունման, այլ այդ ընդունման մեջ ներառված վեճերի վերհանման հիման վրա դրականորեն գործելու սկզբունքը: ICJ-ն գտել է.

« (...) Այս պայմաններում Դատարանի իրավագործությունն ընդունվել է «1930 թվականի փետրվարի 5-ից հետո տեղի ունեցած բոլոր քննարկումներից հետո՝ հաշվի առնելով այն իրավիճակները կամ փաստերը, որոնք տեղի են ունեցել այդ ժամկետից հետո»: Հռչակագրի ձևակերպումներին համապատասխան Դատարանը պետք է արձանագրի, իր իրավագործության առկայությունը, եթե գտնի, որ ներկայացված վեճը կապված է 1930 թվականի փետրվարի 5-ից հետո գոյություն ունեցած իրավիճակի կամ փաստերի հետ:

Այն փաստերը կամ իրավիճակները, որոնց այս կապակցությամբ պետք է ուշադրություն դարձվի, այն փաստերն ու իրավիճակներն են, որոնք վեճի առարկա են հանդիսանում կամ, այլ կերպ ասած, ինչպես դա Սոֆիայի և Բուլղարիայի ներգամատակարարող ընկերության վերաբերյալ գործով նշվել է Մշտական դատարանի կողմից, միայն «որոնք պետք է դիտվեն որպես վեճի աղբյուր», որոնք դրա «իրական պատճառն են»... Մշտական դատարանը, այսպիսով, տարբերակել է այն իրավիճակները կամ փաստերը, որոնք Կողմերից մեկի վիճարկած իրավունքների աղբյուր են ձևավորում, և այն իրավիճակները կամ փաստերը, որոնք հանդիսանում են վեճի աղբյուրը: Բացառապես վերջիններս պետք է հաշվի առնվեն Դատարանի իրավագործությունն ընդունելու վերաբերյալ Հռչակագրի կիրառման նպատակով»:

Ապա ICJ-ն գտել է, որ.

«(...) միայն 1954 թվականին էր, որ նման վիճաբանություն ծագեց և քննարկումները վերաբերում էին երկուստեք դեպի անկլավային տարածքներ անցնելու իրավունքի առկայությանը և Հնդկաստանի կողմից այնպիսի պարտականությունների չկատարման հետ, որոնք, ըստ Պորտուգալիայի, այս առումով կապված են դրա հետ: Բոլոր այս հանգամանքներից է ծագել Դատարանի առջև բարձրացված վեճը. բոլոր այս հանգամանքների կապակցությամբ է, որ վեճը գոյություն ունի: Այս ամենը, անկախ այն բանից, թե ինչն է հանդիսացել դրա մասերից մեկի սկզբնաղբյուրը, սկսել են գոյություն ունենալ 1930 թվականի փետրվարի 5-ից հետո միայն: Ժամանակային պայմանը, որի ընթացքում Դատարանի իրավագործության ընդունումը Հնդկաստանի հռչակագրի քննարկման առարկա է դարձել, հետևաբար, պահպանվել է»:

D. Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների կոմիտե

111. Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների կոմիտեն («Կոմիտե») ճանաչում է, որ պետություններն ունեն կյանքի իրավունքի պաշտպանության պոզիտիվ պարտականություն: Դա ներառում է արդյունավետ քննություն իրականացնելու պարտականությունը: Այս պարտականությունները Կոմիտեն բխեցրել է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին մի-

ջազգային դաշնագրի («Դաշնագիր») հետևյալ երկու՝ 2-րդ (իրավունքների նկատմամբ հարգանք և արդյունավետ ընթացակարգ) և 6-րդ (կյանքի իրավունք) հոդվածների միավորումից: Այս կապակցությամբ կարևոր է նշել, որ Կոմիտեի իրավական պրակտիկայի համաձայն՝ ընթացակարգի դիմելու իրավունքը կարող է խախտվել միայն նյութական իրավունքի խախտման հետ փոխկապակցված, ինչը նշանակում է, որ այն դեպքերում, երբ մահը վրա է հասել նրա ժամանակային իրավասության սահմաններից դուրս, ապա չի կարող առկա լինել 2-րդ հոդվածի հետ փոխկապակցված 6-րդ հոդվածի խախտում (տես ստորև կետ 112 – *S.E. v. Argentina*): Կոմիտեն, սակայն, գտնում է, որ անհայտացման կամ մահվան վերաբերյալ քննության բացակայությունը կարող է տուժողի ընտանիքի նկատմամբ հանգեցնել անմարդկային վերաբերմունքի (Դաշնագրի 7-րդ հոդված), եթե անգամ անհայտացումը կամ մահը տեղի է ունեցել անհատական հաղորդումները քննելու իրավունք վերապահած Կամընտիր արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո (տես ստորև կետ 113 – *Sankara et al. v. Burkina Faso*):

112. *S.E. v. Argentina*-ի գործով (Յադորդում թիվ 275/1988, որն անընդունելի է ճանաչվել 1990 թվականի մարտի 26-ին), դիմողի երեք երեխաները 1976 թվականին առևանգվել են Արգենտինայի անվտանգության ուժերի կողմից և, այդ պահից սկսած, նրանց գտնվելու վայրը հայտնի չի եղել: 1986 թվականի նոյեմբերի 8-ին Դաշնագիրն և Կամընտիր արձանագրությունն Արգենտինայի համար ուժի մեջ են մտել: 1986 թվականի դեկտեմբերին և 1987 թվականի հունիսին Արգենտինայի օրենսդիր մարմինն օրենք ընդունեց, որը կանխում էր, այսպես կոչված, «կեղտոտ պատերազմի» վերաբերյալ քննությունները և համաներում էր կիրառում նման հանցագործությունների հետ կապված անվտանգության ուժերի աշխատակիցների նկատմամբ: Դիմողը վիճարկել է, որ այս օրենքի ընդունումը հանգեցրել է Արգենտինայի կողմից Դաշնագրի 2-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված պարտականության խախտում: Չափի առնելով, որ ընթացակարգի դիմելու իրավունքի առաջացման համար անհրաժեշտ է նյութական իրավունքի խախտման առկայություն Կոմիտեն նկատում է, որ.

«5.3. ... դեպքերը, որոնք առաջացրել են Դաշնագրի մի քանի հոդվածների խախտումներ և որոնց կապակցությամբ կարող էր ընթացակարգերի կիրառում պահանջվել, տեղի են ունեցել Դաշնագրի և Կից արձանագրության Արգենտինայի համար ուժի մեջ մտնելուց առաջ: Հետևաբար, դեպքը չի կարող քննարկվել Կոմիտեի կողմից, քանի որ հաղորդման այս հայեցակետը *ratione temporis* անընդունելի է»:

113. *Mariam Sankara et al. v. Burkina Faso* (Յադորդում թիվ 1159/2003, 2006 թվականի մարտի 28) համեմատաբար վերջերս կայացված որոշմամբ Կոմիտեն գտավ, որ *ratione temporis* իրավասություն ունի՝ կապված Թոմաս Սանկարայի անհետացման վերաբերյալ քննության հետ, ով առևանգվել և սպանվել էր 1987 թվականին, ավելի ճիշտ՝ նախքան 1999 թվականի ապրիլի 4-ը, երբ պետությունը Կամընտիր արձանագրության անդամ է դարձել: 1997 թվականին տասը տարվա հայցային վաղեմության ժամկետի ընթացքում նրա կինը պրն Սանկարային սպանած և մահվան վկայականը կեղծած անհայտ անձի կամ անձանց դեմ դատական կարգով բողոք է ներկայացրել: Նա վիճարկել է, որ որևէ քննություն չի իրականացվել: Կոմիտեն, որը վերջնական արդյունքում պրն Սանկարայի ընտանիքի տառապանքների կապակցությամբ արձանագրել է 7-րդ հոդվածի և դատավա-

րության ընթացքում հավասարության երաշխիքի խախտման կապակցությամբ 14-րդ հոդվածի խախտում, գտել է, որ.

«6.2 ... անհրաժեշտ է տարանջատել պրն թոմաս Սանկարային և տկն Սանկարային և նրա երեխաներին վերաբերող բողոքները: Կոմիտեն գտնում է, որ թոմաս Սանկարայի մահը, որը կարող է ներառել Դաշնագրի մի քանի հողվածների խախտում, տեղի է ունեցել 1987 թվականի հոկտեմբերի 15-ին, այսինքն՝ նախքան Դաշնագիրը և Կամընտիր արձանագրությունը Բուրկինա Ֆասոյի համար ուժի մեջ մտնելը: Հաղորդման այս մասը, հետևաբար, անընդունելի է *ratione temporis*: Թոմաս Սանկարայի մահն վկայագրվել է 1988 թվականի հունվարի 17-ին և նշվել է, որ նա մահացել է բնական պատճառներով՝ այն փաստերին հակառակ, որոնք հայտնի էին հանրությանը և հաստատված էին մասնակից պետության կողմից (կետեր 4.2 և 4.7), - և, այդ պահից սկսած, իշխանությունների կողմից վկայականը չուղղելը պետք է քննարկվի տկն Սանկարայի և նրա երեխաների վրա ունեցած շարունակական ազդեցության լույսի ներքո»:

Կոմիտեն նաև գտել է, որ.

«6.3 ... այն չի կարող քննել մասնակից պետության համար Կամընտիր արձանագրությունն ուժի մեջ մտնելուց առաջ տեղի ունեցած խախտումները, եթե այս խախտումները չեն շարունակվել Արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո: Կամընտիր արձանագրությունն ուժի մեջ մտնելուց հետո շարունակվող խախտումը պետք է մեկնաբանվի որպես մասնակից պետության կողմից թույլ տրված նախկին խախտման հաստատում: Կոմիտեն ուշադրություն է դարձրել իշխանությունների այն փաստարկներին, որոնք վերաբերում են, առաջին հերթին, Թոմաս Սանկարայի մահվան (որը հայտնի էր հանրությանը) կապակցությամբ իշխանությունների կողմից քննություն չիրականացնելուն և մեղավոր անձանց պատասխանատվության չենթարկելուն, սրանք փաստարկներ են, որոնք, փաստորեն, չեն վիճարկվել մասնակից պետության կողմից: Վերջիններս հանգեցրել են վերոնշյալ անձանց իրավունքների և պետության Դաշնագրով սահմանված պարտականությունների խախտման: Երկրորդ, պարզ է, որ այս իրավիճակը կարգավորելու նպատակով հեղինակները 1997 թվականի սեպտեմբերի 29-ին, այսինքն՝ օրենքով սահմանված՝ տասը տարվա հայցային վաղեմության ժամկետի ընթացքում դատական վարույթ են հարուցել, և այս վարույթները շարունակվել են Դաշնագրի և Կամընտիր արձանագրության Բուրկինա Ֆասոյի համար ուժի մեջ մտնելուց հետո: Հակառակ մասնակից պետության փաստարկներին, Կոմիտեն գտնում է, որ վարույթները երկարաձգվել են ոչ թե իշխանությունների կողմից թույլ տրված դատավարական սխալի, այլ իշխանությունների միջև իրավասությունների վերաբերյալ վեճի առկայության պատճառով: Հետևաբար, հաշվի առնելով, որ հեղինակների կողմից տրամադրված տեղեկությունների համաձայն քննություն չիրականացնելու և մեղավոր անձանց չպատժելու արդյունքում առաջացած ենթադրյալ խախտումն ազդել է իրենց վրա Դաշնագրի և Կամընտիր արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո, քանի որ վարույթները դեռևս չեն ավարտվել՝ Կոմիտեն գտավ, որ հաղորդման այս մասը *ratione temporis* ընդունելի է»:

Ե. Մարդու իրավունքների միջամերկյան դատարան

114. Մարդու իրավունքների միջամերկյան դատարանը (IACHR) Մարդու իրավունքների ամերկյան կոնվենցիայի («Ամերկյան կոնվենցիա») մի քանի դրույթների հիման վրա դատավարական պարտականություններ է սահմանել, որոնք առաջանում են սպանությունների կամ անհայտացումների վերաբերյալ գործերով: Դատավարական պարտականությունների խախտման և, մասնավորա-

պես, այն դեպքերում, երբ դատարանը գտնում է, որ կյանքի իրավունքի նյութաիրավական կողմը ևս խախտվել է, IACHR-ն արձանագրում է Ամերիկյան կոնվենցիայի 4-րդ հոդվածի (կյանքի իրավունք) և դրա հետ մեկտեղ՝ 1-ին հոդվածի 1-ին մասի (իրավունքները հարգելու պարտականություն) խախտում (տե՛ս Velásquez Rodríguez v. Honduras, 1988 թվականի հուլիսի 29-ի վճիռը և Godínez Cruz Case v. Honduras, 1989 թվականի հունվարի 20-ի վճիռը): Շատ դեպքերում, մասնավորապես, երբ 4-րդ հոդվածի նյութաիրավական կողմը խախտված չէ, IACHR-ն նման դատավարական բողոքները քննում է առանձին 8-րդ հոդվածի, որը, ի տարբերություն եվրոպական կոնվենցիայի, ցանկացած բնույթի իրավունքների և պարտականությունների սահմանման համար երաշխավորում է արդար դատական քննության իրավունք, ինչպես նաև 25-րդ հոդվածի, որը պաշտպանում է դատական պաշտպանության իրավունքը և դրա հետ մեկտեղ՝ 1-ին հոդվածի 1-ին մասի հիման վրա: IACHR-ն հետևում է վերջին մոտեցմանն այն դեպքերում, երբ սպանությունը կամ անհայտացումը տեղի է ունեցել նախքան պատասխանող մահանգի կողմից իր իրավագործության ճանաչումը:

115. *Serrano-Cruz Sisters v. El Salvador* (2004 թվականի նոյեմբերի 23-ի վճիռը – Նախնական առարկություններ) վճռում, որը վերաբերում է նախքան էլ Սալվադորի կողմից IACHR-ի իրավասության ճանաչումը տասներեք տարեկան երկու աղջիկների անհայտացմանը, IACHR-ն նշել է, որ

«77. ... Այն փաստերը, որ Հանձնաժողովը ներկայացրեց Կոնվենցիայի 4-րդ (Կյանքի իրավունք), 5-րդ (Անձնական անձեռնմխելիության իրավունք) և 7-րդ (Անձնական ազատության իրավունք) հոդվածների ենթադրյալ խախտումների և վերջինիս 1-ին հոդվածի 1-ին մասի (իրավունքները հարգելու պարտականություն) կապակցությամբ՝ Էրնեստինա և Էրլինդա Սերանո Կուոզի վնասի վերաբերյալ, հանվում են հաշվի առնելով Դատարանի իրավասությունն էլ Սալվադորի կողմից ճանաչելու հետ կապված սահմանափակումը, քանի որ նշված փաստերը կապված են այն խախտումների հետ, որոնց սկսվել են 1982 թվականի հունիսին Աթլաքաթի Բաթալիոնի զինվորների կողմից աղջիկներին ենթադրաբար «գերի վերցնելով» կամ «կալանավորելով» և նրանց հետագա անհայտացմամբ, այսինքն՝ էլ Սալվադորի կողմից Միջամերիկյան դատարանի տարածքային կողմերի միջև վեճի լուծման իրավասությունը ճանաչելուց 13 տարի առաջ:

78. Այս դատողությունների հիման վրա և Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի 1969 թվականի կոնվենցիայի 28-րդ հոդվածի դրույթներին համապատասխան Դատարանը նախնական առարկությունները գտնում է *ratione temporis*...»:

116. Ինչ վերաբերում է անհայտացումների վերաբերյալ սույն գործով ներպետական քննության ենթադրյալ թերություններին, ապա IACHR-ն գտնում է, որ այդ հայտարարությունները վերաբերում են դատական քննությանը և համապատասխանաբար IACHR-ի իրավասությունը ճանաչելուց հետո առկա ինքնուրույն փաստերի: Ուստի այն եզրակացնում է, որ օժտված է այս հայտարարությունները քննելու ժամանակային իրավասությամբ, քանի որ դրանք հանգեցրել են արդարադատության իրականացումից հրաժարվելու հետ կապված առանձնահատուկ և ինքնուրույն խախտման, որը տեղի է ունեցել IACHR-ի իրավասության ճանաչումից հետո: Այն առավել մանրամասն նշել է, որ.

«80. ... Հանձնաժողովը Դատարանի քննությանն է ներկայացրել Կոնվենցիայի 8-րդ (Արդար դատաքննության իրավունք) և 25-րդ (Դատական պաշտպանություն)

հողվածների՝ վերջինիս 1-ին հողվածի 1-ին մասի (Իրավունքները հարգելու պարտականություն) հետ փոխկապակցված ենթադրյալ խախտումը, որը, հավանաբար, տեղի էր ունեցել Ղատարանի իրավասության ճանաչումից հետո և որը կատարվել էր ներպետական քննության ընթացքում, որի նպատակն էր պարզել, թե ինչ է պատահել էրնեստիմա և Էրլինդա Սերանո Կրուզի հետ...

...

84. Ղատարանը գտնում է, որ բոլոր փաստերը, որոնք առկա են եղել Էլ Սալվադորի կողմից Ղատարանի իրավասությունը ճանաչելուց հետո և որոնք վկայում են Կոնվենցիայի 1-ին հողվածի 1-ին մասի հետ փոխկապակցված՝ 8-րդ և 25-րդ հողվածների ենթադրյալ խախտման մասին, նահանգի կողմից սահմանված սահմանափակման հիման վրա չեն բացառվում, քանի որ դրանք վերաբերում են ինքնուրույն փաստեր սահմանած՝ դատական քննությանը: Ղրանք կատարվել են այն բանից հետո, երբ Էլ Սալվադորը ճանաչել է Ղատարանի իրավասությունը և կարող են համոզիսանալ արդարադատություն իրականացնելուց հրաժարվելու հետ կապված առանձնահատուկ և ինքնուրույն խախտումներ, որոնք տեղի են ունեցել Ղատարանի իրավասությունը ճանաչելուց հետո:

...

94. Հետևաբար, Ղատարանը որոշում է մերժել *ratione temporis* նախնական առարկությունները կապված Կոնվենցիայի 1-ին հողվածի 1-ին մասի հետ փոխկապակցված՝ 8-րդ և 25-րդ հողվածների ենթադրյալ և ցանկացած այլ խախտման հետ, որի փաստը կամ որի կատարումը տեղի է ունեցել 1995 թվականի հունիսի 6-ից հետո, այսինքն՝ այն ամսաթվից հետո, երբ նահանգը OAS-ի Գլխավոր քարտուղարության մոտ ավանդադրել է Ղատարանի իրավասությունը ճանաչող փաստաթուղթը:

117. *Moiwana Village v. Suriname* (2005 թվականի հունիսի 15-ի վճիռը) վճռում Սուրինամը նախնական առարկություններ է ներկայացրել՝ վիճարկելով, որ IACHR-ն *ratione temporis* չունի իրավասություն, քանի որ Հանձնաժողովի և տուժողների կողմից բողոքարկված գործողությունները (զինված ուժերի կողմից քառասուն գյուղացիների նկատմամբ 1986 թվականին իրականացված ենթադրյալ ջարդերը և գյուղական շինությունների վերացումը, որոնք հանգեցրել են ողջ մնացած գյուղացիների հետագա տեղափոխմանը) տեղի են ունեցել Սուրինամի կողմից Ամերիկյան կոնվենցիայի անդամ դառնալուց և IACHR-ի իրավասությունը ճանաչելուց մեկ տարի առաջ: IACHR-ն, վկայակոչելով Վիեննայի կոնվենցիայի 28-րդ հողվածը, նշել է, որ.

«39. ... [ի]մամաձայն հետադարձության անթույլատրելիության այս սկզբունքին, շարունակվող կամ տևական խախտումը, որն սկսվել է Ղատարանի իրավասությունը ճանաչելուց առաջ և շարունակվում է նույնիսկ դրա ճանաչումից հետո, Տրիբունալն իրավասու է քննել նախքան իրավասության ճանաչումը կատարված այդ գործողությունները և անգործությունը, ինչպես նաև դրանց համապատասխան արդյունքները»:

118. Նշելով, որ քննություն իրականացնելու պարտականությունը բխում է ջարդերի վերաբերյալ հայտարարություններից և հիմնված է նախկինում տեղի ունեցած դեպքերի վերաբերյալ քննություն չիրականացնելու հետ կապված ենթադրյալ խախտման շարունակական բնույթի վրա՝ IACHR-ն սույն գործով գտել է հետևյալը.

«43. ... [Դ]ատարանը տարբերակում է Ամերիկյան կոնվենցիայի այն խախտումները, որոնք շարունակական բնույթ ունեն այն խախտումներից, որոնք տեղի են ունեցել 1987 թվականի նոյեմբերի 12-ից հետո: Առաջինների կապակցությամբ Տրիբու-

նալը նկատում է, որ առկա է եղել 1986 թվականին ջարդերի իրականացման վերաբերյալ հայտարարություն, հետևաբար՝ նահանգը պարտավոր էր քննություն իրականացնել, մեղադրել և պատժել դրա համար մեղավոր անձանց: Այդ կապակցությամբ Սուրիմամը 1989 թվականին քննություն է սկսել: Բացի դրանից, քննություն իրականացնելու վերաբերյալ պետության պարտականությունը կարող է գնահատվել Դատարանի կողմից՝ սկսած այն ժամանակահատվածից, երբ Սուրիմամը ճանաչել է Տրիբունալի իրավասությունը: Ուստի այդ քննության կապակցությամբ նահանգի գործողությունների և անգործության՝ սույն Կոնվենցիայի 8-րդ, 25-րդ հոդվածների և 1-ին հոդվածի 1-ին մասի լույսի ներքո վերլուծությունը մտնում է սույն Դատարանի իրավասության մեջ:...

44. Հետևաբար, սույն նախնական առարկությունները մերժվում են վերոնշյալ հիմքերով:

...

141. Դատարանը վերևում որոշել է, որ չունի իրավասություն Մոիվանա գյուղում 1986 թվականի նոյեմբերի 29-ին տեղի ունեցած դեպքերի քննության առնչությամբ, այնուամենայնիվ, Տրիբունալն իրավասու է քննության առնել տեղի ունեցածի (տես վերը՝ կետ 43) վերաբերյալ քննություն իրականացնելու՝ նահանգի պարտականության իրականացումը: Հետագա գնահատականը կպարզի, թե այդ պարտականությունն իրականացվել է, արդյոք, Ամերիկյան կոնվենցիայի 8-րդ և 25-րդ հոդվածներով սահմանված չափանիշներին համապատասխան:

...

163. Քննարկելով վերևում վերլուծված բազմաթիվ կողմերը՝ Դատարանը գտնում է, որ Սուրիմամի լուրջ թերացումները՝ կապված Մոիվանա գյուղի վրա 1986 թվականին կատարված հարձակման քննության հետ, արդարադատության իրականացմանը դրա ինտենսիվ խոչընդոտները և երկարաձգված ժամանակահատվածը, որն անցել է առանց հանգամանքների պարզաբանման և մեղավոր անձանց պատժման, հանգեցրել են արդարադատության մատչելիության և պատշաճ քննության Ամերիկյան կոնվենցիայով նախատեսված չափանիշների խախտման:

164. Արդյունքում՝ Տրիբունալը հայտարարել է, որ Մոիվանայի համայնքի անդամների վնասի կապակցությամբ նահանգը խախտել է Ամերիկյան կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին կետը և 25-րդ հոդվածը և վերջիններիս հետ փոխկապակցված այդ պայմանագրի 1-ին հոդվածի 1-ին մասը»:

ՕՐԵՆՔԸ

I. ՄԵԾ ՊԱԼԱՏՈՒՄ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

119. 2007 թվականի հունիսի 28-ի իր վճռում Պալատն ընդունելի է ճանաչել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի իմաստով դատավարական կողմի, քաղաքացիական և քրեական դատավարությունների տևողության, ինչպես նաև 6-րդ հոդվածի իմաստով քրեական դատավարության արդարացիության և 13-րդ հոդվածով նախատեսված արդյունավետ ընթացակարգի բացակայության վերաբերյալ գանգատները: 2-րդ հոդվածի նյութաիրավական կողմին, 6-րդ հոդվածի իմաստով քաղաքացիական դատավարության արդարացիությանը, ինչպես նաև 3-րդ և 14-րդ հոդվածներին վերաբերող գանգատներն անընդունելի են ճանաչվել:

120. Դատարանը կրկնել է, որ 43-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով Մեծ պալատ ուղարկվող «գործը» ներառում է դիմումի բոլոր կողմերը, եթե այն Պալատի

կողմից ընդունելի է ճանաչվել: Սակայն դա չի նշանակում, որ Մեծ պալատը ևս չի կարող անհրաժեշտության դեպքում Պալատի նման քննել դիմումի ընդունելիությանը վերաբերող հարցեր, օրինակ՝ *in fine* Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով (որը Դատարանին իրավասություն է տալիս «մերժել անընդունելի ճանաչված դիմումները... դատավարության ցանկացած փուլում»), կամ երբ նման հարցերը միացվել են համագամանքների հետ կամ այլ կերպ էական են տվյալ փուլի համագամանքներուն (*K. and T. v. Finland* [GC], թիվ 25702/94, կետեր 140–41, ECHR 2001-VII):

121. Վերոգրյալի հիման վրա և հաշվի առնելով այն, որ կողմերը գործը բողոքարկել են Մեծ պալատ՝ Դատարանը կշարունակի քննել դիմումի այն մասը, որը Պալատի կողմից ընդունելի է ճանաչվել:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 2-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՂՄԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱՆՏՈՒՄԸ

122. Դիմողները գանգատ են ներկայացրել առ այն, որ իրենց կողմից սկսված քրեական և քաղաքացիական վարույթները հնարավորություն չեն տվել արագ և արդյունավետ պարզել իրենց որդու մահվան համար պատասխանատվությունը: Կոնվենցիայի 2-րդ հոդվածի համապատասխան մասը սահմանում է.

«1. Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով: Ոչ մեկին չի կարելի դիտավորությամբ գրկել կյանքից...»:

A. Կառավարության նախնական առարկությունները

123. Կառավարությունն ընդհանուր առմամբ երկու նախնական առարկություն է ներկայացրել: Պալատում գործի քննության ժամանակ այն հայտարարել է ներպետական ընթացակարգերը չսպառելու մասին: Մեծ պալատում գործի քննության ժամանակ այն վիճարկել է Դատարանի *ratione temporis* իրավասությունը՝ կապված դիմողների գանգատի քննության հետ:

1. *Ratione temporis* իրավասություն

(a) Պալատի վճիռը

124. Պալատը սեփական նախաձեռնությամբ *ratione temporis* հարցը քննել է 2007 թվականի հունիսի 28-ին: Այն որոշել է, որ չունի *ratione temporis* իրավասություն քննելու դիմողների 2-րդ հոդվածի նյութաիրավական կողմին վերաբերող գանգատը, քանի որ դիմողների որդու մահն ակնհայտորեն տեղի է ունեցել Սլովենիայի կողմից Կոնվենցիան վավերացնելուց առաջ: Ինչ վերաբերում է 2-րդ հոդվածի դատավարական կողմին, ապա Պալատը, պահպանելով այս հարցի վերաբերյալ նախորդ նախադեպային որոշումները և *Blečić v. Croatia* (կետեր 72 և 82՝ վկայակոչված վերը) գործով սահմանված՝ ժամկետային խոչընդոտի սկզբունքը (the time of interference), գտել է, որ սույն գանգատը քննելու կապակցությամբ իր իրավասությունը կախված կլինի գործի հանգամանքներից և քննարկվող իրավունքի սահմաններից:

125. Այս կապակցությամբ Պալատը գտնում է, որ բժշկական օգնություն ստանալու ընթացքում անձի մահվան պատճառների և դրա համար պատասխանատվության սահմանման նպատակով արդյունավետ դատական համակարգ սահմանելու՝ պետության պարտականությունն ուրույն իմաստ ունի: Այն մաս արձանագրել է, որ սույն գործով չի վիճարկվել այն, որ դիմողների որդու վիճակն սկսել է էականորեն վատանալ հիվանդանոցում և որ նրա մահը հավանաբար կապված է եղել նրա ստացած բժշկական օգնության հետ: Բացի դրանից, Պալատը բավարարված է սկսված դատավարությունների երկու խմբերով, որոնք տեսականորեն կարող էին հանգեցնել մահվան հանգեցրած հստակ հանգամանքների և դրա համար բոլոր փուլերում հավանաբար պատասխանատու անձանց պարզելուն:

126. Պալատը շարունակել է լուծել այն հարցը, թե 2-րդ հոդվածի ենթադրյալ դատավարական խախտումն առաջացրած հանգամանքներն առաջացել են Դատարանի ժամանակային իրավասության սահմաններում: Այն արձանագրել է, որ քրեական դատավարությունը հաջողությամբ վերաբացվել է 1996 թվականի հուլիսի 4-ին, իսկ քաղաքացիական դատավարությունն սկսվել է 1995 թվականին: Հաշվի առնելով, որ դատավարությունների ենթադրյալ թերություններն սկսվել են վարույթներն սկսվելու ամենավաղ պահից, որը հաջորդում է վավերացման ժամկետին՝ Պալատը եզրահանգել է, որ ունի 2-րդ հոդվածի դատավարական կողմի վերաբերյալ դիմողների գանգատը քննելու ժամանակային իրավասություն: Վկայակոչելով *Broniowski v. Poland* ((dec.) [GC], թիվ 31443/96, կետ 74, ECHR 2002-X) վճիռը՝ Պալատը գտել է նաև, որ կարող էր հաշվի առնել նախքան վավերացումն առաջացած հանգամանքները, քանի որ դրանք կարող էին կարևոր լինել այդ ժամկետից հետո առաջացած հանգամանքները հասկանալու համար:

(b) Դատարան ներկայացած անձանց փաստարկները

(i) Կառավարություն

127. Հիմք ընդունելով *Blečić v. Croatia* (տես վերը՝ կետեր 63-69) վճռում արտահատված Դատարանի դիրքորոշումը և այն հանգամանքը, որ Պալատը *ratione temporis* հարցն իր՝ 2007 թվականի հունիսի 28-ի վճռում քննարկել է սեփական նախաձեռնությամբ՝ Կառավարությունն անընդունելիության հարց է բարձրացրել՝ կապված Դատարանի *ratione temporis* իրավասության բացակայության հետ:

128. Մեծ պալատում Կառավարությունը շեշտել է, որ թեև դիմողների որդու մահվան կապակցությամբ քրեական և քաղաքացիական դատավարությունները՝ երկուսն էլ սկսվել են Սլովենիայի կողմից 1994 թվականի հունիսի 28-ին Կոնվենցիան վավերացվելուց հետո, սակայն մահը տեղի է ունեցել նախքան այդ:

129. Նրանք վիճարկել են, որ 2-րդ հոդվածի դատավարական կողմին վերաբերող գանգատն ընդունելի ճանաչելով՝ Պալատը խախտել է պայմանագրերի հետադարձ ուժի բացակայության վերաբերյալ միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքը, և հավելել, որ Պալատի որոշման այս մասը չի համապատասխանում Դատարանի սահմանած նախադեպային իրավունքին, մասնավորապես՝ *Moldovan and Others* և *Rostas and Others v. Romania* (dec.), թիվ 41138/98 և 64320/01, 2001 թվականի մարտի 13-ի, *Voroshilov v. Russia* (dec.), թիվ 21501/02, 2005 թվականի դեկտեմբերի 8-ի, *Stamoulakatos v. Greece* (no. 1), 1993 թվականի

հոկտեմբերի 26-ի, կետ 33, Series A no. 271, *Kadiķis v. Latvia* (dec.) թիվ 47634/99, 2000 թվականի հունիսի 29-ի և *Jovanović v. Croatia* (dec.), թիվ 59109/00, ECHR 2002-III վճիռները:

130. Իրենց փաստարկներում վերոնշյալ նախադեպային վճիռները սահմանել են, որ այն գործողությունները և անգործությունը, որոնց արդյունքում կոնվենցիոն իրավունքը ենթադրաբար խախտվել է և վերջինի վերաբերյալ վարույթները չեն կարող առանձնացվել, ուստի առանձին չեն կարող քննվել: Այդ կապակցությամբ Կառավարությունը վիճարկել է, որ ի սկզբանե տեղի ունեցած դեպքը՝ դիմողների որդու մահը, առկա չի եղել Դատարանի ներգրավումից հետո և Դատարանը, հետևաբար, պետք է ձեռնպահ մնա այն հարցի քննությունից, թե արդյոք դա որևէ պարտականություն առաջացրել է:

131. Ապա Կառավարությունը հայտարարել է, որ 2-րդ հոդվածի առանձին, օրինակ՝ դատավարական կողմը, չի կարող ինքնուրույն գոյություն ունենալ: Ուսումնասիրելով 2-րդ հոդվածի դատավարական կողմը՝ Պալատը ոչ անդրադարձել մահվանը՝ ուղղակիորեն որպես նախկինում տեղի ունեցած փաստի, սակայն անխուսափելիորեն քննել է Կոնվենցիայի 2-րդ հոդվածի նյութաիրավական կողմին վերաբերող ենթադրյալ խախտումը:

132. Ի հիմնավորումն այդ պնդման Կառավարությունը նշել է Կոնվենցիայի 2-րդ հոդվածի և քննվող գործերի տևողության առումով 6-րդ հոդվածի վերաբերյալ գործերի միջև առկա տարբերությունները, որոնք մասամբ տեղավորվում, իսկ մասամբ դուրս են մնում Դատարանի *ratione temporis* իրավասությունից: Նրանց փաստարկների համաձայն՝ վարույթի տևողության հետ կապված քննությունը կախված է գործի առարկայական կողմի հետ: Նմանապես, Կոնվենցիայի վավերացումից հետո վարույթի տևողությունը կապված չէ նախքան վավերացումը տեղի ունեցած վարույթի տևողության հետ: Դրան հակառակ, 2-րդ հոդվածի վերաբերյալ գործերով Դատարանը քննում է վարույթը ոչ թե որպես ինքնուրույն հարց, այլ որպես կոնկրետ դեպքի քննության մաս:

133. Ապա Կառավարությունը փաստարկել է, որ իր *ratione temporis* իրավասության վերաբերյալ Պալատի եզրակացությունները չեն համապատասխանում *Blečić*-ի վճռի 68-րդ և 77–81-րդ կետերում ամրագրված սկզբունքներին (տե՛ս վերը): Մասնավորապես, այն շեշտել է, որ ընթացակարգերը չպետք է միջամտեն Դատարանի իրավասությանը և որ ընթացակարգի կիրառումը սովորաբար ենթադրում է այն հարցի պարզաբանված լինելը, թե արդյոք միջամտությունը դրա իրականացման ժամանակ գործող օրենսդրության իմաստով եղել է անօրինական:

134. Ի վերջո, Կառավարությունը նշել է, որ սույն գործի մնան գործերով ոչ սկզբնական դեպքը, ոչ հետագա վարույթը չեն կարող ընկալվել որպես շարունակական խախտում առաջացրած:

(ii) Դիմողներ

135. Դիմողները չեն վիճարկել Կառավարության՝ Մեծ պալատում *ratione temporis* նախնական առարկություններ անելու իրավունքը:

136. Նրանք վիճարկել են այն, որ պարզապես անհնարին է անուշադրության մատնել այն փաստը, որ Դատարանի ժամանակային իրավասության ընթացքում ներպետական իշխանությունները ոչինչ չեն արել իրենց որդու մահվան պատճառը պարզելու համար:

137. Նրանց փաստարկների համաձայն՝ պետությունները բժշկական օգնություն ստանալիս անձի մահվան պատճառը պարզելու նպատակով արդյունավետ դատական համակարգ ձևավորելու առանձնահատուկ պարտականություն ունեն։ Այս պարտականությունն ինքնուրույն է։

138. Վկայակոչելով *Yağcı and Sargin v. Turkey* (1995 թվականի հունիսի 8-ի, Series A no. 319-A) վճիռը՝ նրանք փաստարկել են, որ Կոնվենցիայի վավերացումից հետո պետությունը պետք է կատարեր Կոնվենցիայի պահանջները, հետագա դեպքերը ենթակա են Դատարանի իրավասությանը, եթե անգամ հանդիսանում են նախկինում գոյություն ունեցած իրավիճակի երկարաձգման արդյունք։ Քանի որ վարույթի թերություններն առկա են եղել Սլովենիայի կողմից Կոնվենցիայի վավերացումից հետո, ուստի Դատարանն ունի *ratione temporis* իրավասություն քննելու Կոնվենցիայի 2-րդ հոդվածի դատավարական կողմին վերաբերող զանգատը։

(c) Մեծ պալատի գնահատականը

139. *Blečić*-ի (տե՛ս վերը՝ կետեր 66–69) վճռում ամրագրված պատճառները հաշվի առնելով և նշելով, որ սույն գործով այլ եզրակացության հանգելու համար որևէ այլ պատճառ չկա՝ Դատարանը գտնում է, որ չի կարող սահմանափակվել՝ Կառավարության կողմից այս փուլում *ratione temporis* առարկություններ ներկայացնելով (տե՛ս վերը՝ կետեր 124, 127 և 135)։ Հետևաբար, Դատարանը քննության է առնում այն հարցը, թե արդյոք ուներ դիմողների՝ 2-րդ հոդվածի դատավարական կողմին վերաբերող զանգատը քննելու ժամանակային իրավասություն։

(i) Ընդհանուր սկզբունքներ

140. Դատարանը կրկնում է, որ Կոնվենցիայի դրույթները պայմանավորվող կողմի վրա պարտականություններ չեն դնում՝ կապված այն գործողությունների կամ կատարված փաստերի կամ իրավիճակների հետ, որոնք դադարել են նախքան այդ կողմի համար Կոնվենցիայի կամ, առանձին դեպքերում՝ 11-րդ արձանագրության ուժի մեջ մտնելը, այսինքն՝ նախքան այն ժամանակահատվածը, երբ պատասխանող կողմը ճանաչել է անհատական խնդրանքների իրավունքը և երբ այս ճանաչումը դեռևս եղել է կամավոր («սահմանային ժամկետ»)։ Սա Դատարանի նախադեպային իրավունքում սահմանված սկզբունք է (տե՛ս վերը՝ *Blečić*, կետ 70), որը հիմնված է Վիեննայի կոնվենցիայի 28-րդ հոդվածում ամրագրված միջազգային իրավունքի ընդհանուր կանոնի վրա (տե՛ս վերը՝ կետ 106)։

141. Ապա Դատարանը նշում է, որ հետադարձ ուժի ամթոյլատրելիության սկզբունքը կիրառելիս՝ նախկին գործերով հող է նախապատրաստվել քննության առնելու համար սահմանային ժամկետին նախորդած որոշ փաստեր, որոնք կարող են պատճառական կապի մեջ գտնվել զանգատի միակ հիմքը և Դատարանի քննության առարկա հանդիսացող՝ հետագա փաստերի հետ։

142. Օրինակ՝ դատավարությունների տևողության վերաբերյալ այն գործերով, որոնցով բաղաբացիական հայց է հարուցվել կամ մեղադրանք է ներկայացվել նախքան սահմանային ժամկետը, Դատարանը բազմիցս, որպես օժանդակ տեղեկություններ, հաշվի է առել այն փաստերը, որոնք տեղի են ունեցել նախքան այդ ժամկետի վրա հասնելը (*Foti and Others v. Italy*, 1982 թվականի դեկտեմբերի

10, կետ 53, Series A no. 56, *Yağcı and Sargin*, տե՛ս վերը՝ կետ 40 և *Humen v. Poland* [GC], թիվ 26614/95, կետեր 58-59, 1999 թվականի հոկտեմբերի 15):

143. 6-րդ հոդվածի վերաբերյալ գործերով, որոնք կապված են քրեական դատավարության արդարության հետ և սկսվել են նախքան սահմանային ժամկետն ու շարունակվել դրանից հետո, Ղատարանն ուսումնասիրում է ամբողջ վարույթը՝ դրա արդարացիությունը գնահատելու նպատակով: Դրա արդյունքում այն հաշվի է առնում սահմանային ժամկետին նախորդած քննության ժամանակ տրամադրված երաշխիքները՝ որոշելու համար, թե դրանք կոմպենսացրել են, արդյոք, հետագա վարույթի թերությունները (*Barbera, Messegueu and Jabardo v. Spain*, 1988 թվականի դեկտեմբերի 6, կետեր 60, 61 և 84, Series A 146):

144. Այլ օրինակների միջոցով *Zana v. Turkey* [GC], 1997 թվականի նոյեմբերի 25, կետեր 41–42, *Reports of Judgments and Decisions* 1997-VII) գործով Ղատարանը քննության է առել դիմողի՝ 10-րդ հոդվածով նախատեսված իրավունքի խախտումը, որը պատճառվել էր Ղատարանի ժամանակային իրավասության ընթացքում նրան քրեական դատավարության կարգով դատապարտելու հետևանքով՝ չնայած որ նրա դատապարտումը կատարվել էր նախքան սահմանային ժամկետն արված հայտարարությունների պատճառով: Բացի դրանից, ավելի ուշ կայացրած վճռում Ղատարանը գտել է, որ ժամանակային իրավասություն ունի վատ վերաբերմունքի արդյունքում ծեռք բերված ապացույցների կիրառման վերաբերյալ գործերով, եթե անգամ վատ վերաբերմունքը, սակայն ոչ հետագա քրեական դատավարությունը, նախորդել է Կոմպենցիայի վավերացմանը (*Haroutyunian v. Armenia*, թիվ 36549/03, կետեր 48-50, 2007 թվականի հունիսի 28):

145. Մի քանի այլ գործերով սահմանային ժամկետին նախորդած դեպքերը տարբեր չափով հաշվի են առնվել որպես Ղատարանի կողմից քննվող հարցի վերաբերյալ օժանդակ տեղեկություններ (տե՛ս օրինակ, *Hokkanen v. Finland*, 1994 թվականի սեպտեմբերի 23, կետ 53, Series A no. 299-A և *Broniowski*, տե՛ս վերը՝ կետ 74):

146. Իր՝ *ratione temporis* իրավասության սահմանները որոշելու հետ կապված խնդիրն, այն դեպքերում, երբ գանգատի հիմքում դրված փաստերը մասամբ գտնվում են համապատասխան ժամանակահատվածի սահմաններում, իսկ մասամբ դուրս են այդ սահմաններից, Ղատարանի կողմից հիմնովին լուծվել է *Blečić v. Croatia* (տե՛ս վերը) գործով: Այդ գործով Ղատարանը հավաստել է, որ իր ժամանակային իրավասությունը պետք է որոշվի՝ կապված ենթադրյալ խախտման համար էական փաստերի հետ (կետ 77): Միաժամանակ, միջամտության ժամանակի սկզբունքն այն ընդգծել է ստորագրման համար՝ որպես Ղատարանի ժամանակային իրավասության գնահատման առանցքային չափանիշ: Այս կապակցությամբ այն գտել է, որ «[Դ]ատարանի ժամանակային իրավասությունը սահմանելու համար... կարևոր է յուրաքանչյուր առանձին գործով պարզել ենթադրյալ խախտման հստակ ժամանակը: Դա անելիս Ղատարանը պետք է հաշվի առնի երկուստեք՝ այն փաստերը, որոնք դիմողը վիճարկել է, և կոմպենցիոն իրավունքները, որոնք ենթադրվում է, որ խախտվել են» (կետ 82): Ղատարանը նաև նշել է, որ եթե խախտումը դատարանի իրավասությունից դուրս է գտնվում, ապա այդ խախտումը վերացնելուն ուղղված հետագա ընթացակարգերի ժամանակ թույլ տրված սխալները չեն կարող մտնել Ղատարանի ժամանակային իրավասության մեջ (կետ 77):

147. Ղատարանը նշում է, որ *Blečić*-ի գործով սահմանված ստուգումը և չափանիշն ընդհանուր բնույթ ունեն, ինչը պահանջում է, որ կոմպենցիոն իրավունքների

առանձնահատուկ բնույթը, ինչպիսիք են Կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածներով սահմանված իրավունքները, այս չափանիշների կիրառման ժամանակ հաշվի առնվեն: Այս կապակցությամբ Դատարանը կրկնում է, որ 2-րդ հոդվածը՝ 3-րդ հոդվածի հետ մեկտեղ գտնվում են Կոնվենցիայի ամենահիմնարար դրույթների շարքում, ինչպես նաև ներառում են Եվրոպայի խորհրդի կազմում գտնվող ժողովրդավարական հասարակությունների հիմնական սկզբունքների պահպանումը (տե՛ս *McCann and Others v. the United Kingdom*, 1995 թվականի սեպտեմբերի 27, կետ 147, Series A no. 324):

(ii) Կոնվենցիայի 2-րդ հոդվածով ներկայացված դատավարական բողոքների հետ կապված Դատարանի՝ *ratione temporis* իրավասությունը

(ա) Մինչ այժմ ձևավորված համապատասխան նախադեպային իրավունքը

148. Դատարանը քննել է բազմաթիվ գործեր, որոնցում 2-րդ կամ 3-րդ հոդվածների նյութաիրավական կողմերին վերաբերող փաստերը Դատարանի իրավասության ժամանակային սահմաններից դուրս են եղել, մինչդեռ վեջիններիս դատավարական կողմին վերաբերող փաստերը գոնե մասամբ գտնվել են այդ ժամանակահատվածում:

149. *Moldovan and Others* և *Rostas and Others v. Romania* վճիռներում (տե՛ս վերը) Դատարանը գտել է, որ չունի *ratione temporis* իրավասություն քննելու 2-րդ հոդվածով սահմանված դատավարական պարտականությունները, քանի որ այդ պարտականությունները բխել են Ռումինիայի կողմից Կոնվենցիան վավերացնելուց հետո տեղի ունեցած սպանությունից: Սակայն այն հաշվի է առել վավերացմանը նախորդած դեպքի հանգամանքները (օրինակ՝ պետական իշխանության ներկայացուցիչների մասնակցությունը դիմողների տան հրկիզմանը) 8-րդ հոդվածով գործի քննության ժամանակ (*Moldovan v. Romania* (թիվ 2), թիվ 41138/98 և 64320/01, կետեր 102-09, ECHR 2005-VII (մեջբերումներ)):

150. Կոնվենցիայի 3-րդ հոդվածին վերաբերող՝ *Bălășoiu v. Romania* (թիվ 37424/97, 2003 թվականի սեպտեմբերի 2) գործով վճռում Դատարանն այլ եզրահագման է եկել: Մոլդովայի գործի հանգամանքների հետ համեմատելի հանգամանքներում այն վճռել է ստանձնել *ratione temporis* իրավագործությունը՝ ուսումնասիրելու համար դատավարական կողմը՝ անկախ նյութաիրավական գանգատի մերժման հանգամանքից: Իր որոշումն այն հիմնավորել է այն փաստով, որ վատ վերաբերմունքի համար պատասխանատու անձանց նկատմամբ վարույթը շարունակվել է այդ որոշիչ ժամկետից հետո (հակառակ դրան, տե՛ս *Վորոշիլովի* վճիռը, որը վկայակոչված է վերը՝ 129-րդ կետում):

151. *Kholodov and Kholodova v. Russia* ((dec.), գանգատ թիվ 30651/05, 2006 թվականի սեպտեմբերի 14) վճռում, Դատարանը հրաժարվել է ժամանակավոր իրավագործությունից այն հիմքով, որ այն չի կարող հավաստել, որ այդ կապակցությամբ ունի որևէ դատավարական պարտականություն, քանի որ այն չի կարող քննել գանգատի նյութաիրավական կողմը: Այն արձանագրել է.

«Քանի որ *ratione temporis* սահմանափակված է 1994 թվականի դեպքերի կապակցությամբ դիմողների պնդումները քննելու՝ Դատարանի հնարավորությունը, այն

չի կարող քննության առնել այն հարցը, թե այս դեպքերը հիմք են հանդիսանում սույն գործով արդյունավետ քննություն իրականացնելու՝ Ռուսաստանի իշխանությունների պարտականության ծագման համար» (տե՛ս *Moldovan and Others v. Romania* (dec.), զանգատ թիվ 41138/98, 2001 թվականի մարտի 13): Նմանապես, պատասխանատու անձանց բացահայտումն ու պատժումը ենթադրաբար չապահովելը չի կարելի ասել, որ շարունակական բնույթ է կրել, քանի որ Դատարանը չի կարող եզրակացություն անել այն մասին, որ մեծ պարտականություն առկա է եղել (տե՛ս *Voroshilov v. Russia* (dec.), զանգատ թիվ 21501/02, 2005 թվականի դեկտեմբերի 8)»:

152. Հաշվի առնելով վերոնշյալ գործերով Դատարանի տարբեր Պալատների փոփոխվող մոտեցումները՝ Մեծ պալատը պետք է հիմա որոշի, թե 2-րդ հոդվածից բխող դատավարական պարտականությունը կարող է դիտվել որպես նյութական օրենքից բաժանելի և ունակ կիրառվելու մահվան այն դեպքերի նկատմամբ, որոնք տեղի են ունեցել նախքան այդ որոշիչ ժամկետը, կամ արդյոք դրանք այնքան անխզելիորեն կապված են նյութաիրավական պարտականության հետ, որ հարցը կարող է բարձրացվել միայն մահվան այն դեպքերի առնչությամբ, որոնք տեղի են ունեցել այդ ժամկետից հետո:

(Բ) Դատավարական պարտականությունների «առանձնացումը»

153. Դատարանը կրկնում է, որ Կոնվենցիայի իմաստով դատավարական պարտականություններ սահմանվել են տարբեր ենթատեքստերով (տե՛ս օրինակ, *B. v. the United Kingdom*, 1987 թվականի հուլիսի 8, կետ 63, Series A no. 121, *M.C. v. Bulgaria*, թիվ 39272/98, կետեր 148-153, ECHR 2003-XII, և *Cyprus v. Turkey* [GC], թիվ 25781/94, կետ 147, ECHR 2001-IV), որտեղ անհրաժեշտ է եղել հավաստել, որ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքները ոչ թե տեսական կամ պատրանքային են, այլ գործնական են և արդյունավետ (*İlhan v. Turkey* [GC], թիվ 22277/93, կետ 91, ECHR 2000-VII): Մասնավորապես, Դատարանը Կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածները մեկնաբանել է որպես այս դրույթների նյութաիրավական կողմերի ենթադրյալ խախտման կապակցությամբ արդյունավետ քննություն իրականացնելու դատավարական պարտականություն սահմանող հաշվի առնելով այս իրավունքների հիմնարար բնույթը (*McCann and Others*, տե՛ս վերը, կետեր 157-64, *Ergi v. Turkey*, 1998 թվականի հուլիսի 28, կետ 82, *Reports* 1998-IV, *Mastromatteo v. Italy* [GC], թիվ 37703/97, կետ 89, ECHR 2002-VIII, և *Assenov and Others v. Bulgaria*, 1998 թվականի հոկտեմբերի 28, կետեր 101-06, *Reports* 1998-VIII):

154. Դատարանը նշում է, որ արդյունավետ քննություն իրականացնելու կամ քաղաքացիական կամ քրեական վարույթ հարուցելու հնարավորություն ընձեռնելու՝ պետության պարտականությունը, կոնկրետ գործին համապատասխան (*Calvelli and Ciglio v. Italy* [GC], թիվ 32967/96, կետ 51, ECHR 2002-I) Դատարանի նախադեպային իրավունքում կարող է դիտված լինել որպես 2-րդ հոդվածին պարտադիր բնորոշ պարտականություն, որը *inter alia* պահանջում է, որպեսզի կյանքի իրավունքը «պաշտպանվի օրենքով»: Թեև մեծ պարտականության չկատարումը կարող է հետևանքներ ունենալ 13-րդ հոդվածով պաշտպանվող իրավունքների համար, սակայն 2-րդ հոդվածի դատավարական պարտականությունը

հանդիսանում է առանձին պարտականություն (տե՛ս *Öneryıldız v. Turkey* [GC], թիվ 48939/99, կետ 148, ECHR 2004-XII և *İlhan*, տե՛ս վերը՝ կետեր 91-92):

155. Բժշկական անգոյուշության ոլորտում 2-րդ հոդվածի իմաստով դատավարական պարտականությունը Ռատարանի կողմից մեկնաբանվել է որպես առողջապահական ոլորտի աշխատակցի խնամքի և պատասխանատվության տակ գտնված անձի մահվան պատճառի և վերջինիս վերաբերող ցանկացած այլ պատասխանատվության պարզաբանման նպատակով արդյունավետ դատական համակարգի ձևավորման՝ պետության վրա դրված պարտականություն (տե՛ս վերը՝ *Calvelli and Ciglio*, կետ 49):

156. Ռատարանը գտնում է, որ դատավարական պարտականությունը չի քննարկվում՝ հիմնվելով այն հանգամանքի վրա, թե արդյոք Պետությունը վերջնականապես պատասխանատու է ճանաչվել մահվան համար: Երբ ենթադրվում է, որ մահը պատճառվել է դիտավորյալ, միակ փաստը, որի մասին իշխանությունները տեղեկացված են, դա այն է, որ տեղի ունեցած մահը 2-րդ հոդվածի իմաստով *ipso facto* պարտականություն է առաջացնում իրականացնելու արդյունավետ պաշտոնական քննություն (*Yaşa v. Turkey*, 1998 թվականի սեպտեմբերի 2, կետ 100, *Reports* 1998-VI, *Ergi*, տե՛ս վերը՝ կետ 82, և *SŞheyla Aydın v. Turkey*, գանգատ թիվ 25660/94, կետ 171, 2005 թվականի մայիսի 24): Այն դեպքերում, երբ մահը դիտավորյալ չի պատճառվել և դատավարական պարտականությունը կիրառելի է, այս պարտականությունը կարող է սկսել գործել մահացած անձի հարազատների կողմից վարույթի հարուցման միջոցով (*Calvelli and Ciglio*, տե՛ս վերը՝ կետ 51 և *Vo v. France* [GC], թիվ 53924/00, կետ 94, ECHR 2004-VIII):

157. Բացի դրանից, քանի որ սովորաբար կասկածելի պայմաններում տեղի ունեցած մահը հանգեցնում է 2-րդ հոդվածով նախատեսված պարտականության առաջացման, այս պարտականությունը շարունակում է առկա լինել այն ժամանակահատվածում, որի ընթացքում ակնկալվում է, որ իշխանությունները ողջամտորեն կարող էին միջոցներ ձեռնարկել մահվան հանգամանքները պարզելու և դրա համար պատասխանատվություն սահմանելու նպատակով (տե՛ս *mutatis mutandis*, *Brecknell v. the United Kingdom*, թիվ 32457/04, կետեր 66–72, 2007 թվականի նոյեմբերի 27 և *Hackett v. the United Kingdom*, (dec.) թիվ 34698/04, 2005 թվականի մայիսի 10):

158. Ռատարանը նաև կշիռ է տալիս այն փաստին, որ 2-րդ հոդվածի իմաստով դատավարական պարտականությունների կատարման հարցը նյութաիրավական պարտականությունների կատարման հարցերից հետևողականորեն առանձին է քննել և համապատասխան դեպքերում գտել է, որ այդ կապակցությամբ առկա է 2-րդ հոդվածի խախտում (օրինակ *Kaya v. Turkey*, 1998 թվականի փետրվարի 19, կետեր 74–78 և 86–92, *Reports* 1998-I, *McKerr v. the United Kingdom*, թիվ 28883/95, կետեր 116–161, ECHR 2001-III, *Scavuzzo-Hager and Others v. Switzerland*, թիվ 41773/98, կետեր 53-69 և 80-86, 2006 թվականի փետրվարի 7, և *Ramsahai and Others v. the Netherlands* [GC], թիվ 52391/99, կետեր 286-89 և 323-57 ECHR 2007-...): Որոշ դեպքերում, 2-րդ հոդվածի իմաստով դատավարական պարտականության կատարման հետ կապված դիմումի ընդունելիության հարցը քվեարկության ժամանակ տարբեր թվով ձայներ է հավաքել (տե՛ս օրինակ, *Slimani v. France*, թիվ 57671/00, կետեր 41–43, 2004 թվականի հուլիսի 27 և *Kanlıbaş v Turkey*, (dec.), թիվ 32444/96, 2005 թվականի ապրիլի 28): Ավելին, որոշ

դեպքերում 2-րդ հոդվածի իմաստով դատավարական պարտականության խախտման վերաբերյալ հայտարարվել է 2-րդ հոդվածի իմաստով որևէ նյութաիրավական խախտման բացակայության պայմաններում (*Calvelli and Ciglio*, տե՛ս վերը՝ կետեր 41-57, *Byrzykowski v. Poland*, քիվ 11562/05, կետեր 86 և 94–118, 2006 թվականի հունիսի 27, և *Brecknell*, տե՛ս վերը՝ կետ 53):

159. Հակառակ դրան, Դատարանը եզրակացնում է, որ 2-րդ հոդվածի իմաստով արդյունավետ քննություն իրականացնելու դատավարական պարտականությունը վերաճել է առանձին և ինքնուրույն պարտականության: Թեև այն սկսվում է 2-րդ հոդվածի նյութաիրավական կողմերին վերաբերող գործողություններով, սակայն այն կարող է հանգեցնել *Blečić*-ի վճռի իմաստով (տե՛ս վերը՝ կետ 88) առանձին և անկախ «խախտման» հայտնաբերմանը: Այս առումով այն կարող է դիտվել որպես առանձնացվող պարտականություն, որը բխում է 2-րդ հոդվածից և կարող է պարտականություններ առաջացնել պետության համար, եթե անգամ մահը տեղի է ունեցել նախքան այդ սահմանային ժամկետը:

160. Այս մոտեցումն առկա է նաև Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների կոմիտեի և, մասնավորապես, Մարդու իրավունքների միջամերկյան դատարանի պրակտիկայում, որը, չնայած տարբեր դրույթների առկայությանը, ընդունում է *ratione temporis* իրավասությունն այն գործերով, որոնք կապված են իրենց ժամանակային իրավասության սահմաններից դուրս տեղի ունեցած մահվան դեպքերի հետ (տե՛ս վերը՝ կետեր 111–118):

161. Սակայն, հաշվի առնելով իրավական որոշակիության սկզբունքը՝ Դատարանի ժամանակային իրավասությունը՝ կապված սահմանային ժամկետից առաջ տեղի ունեցած մահերի կապակցությամբ 2-րդ հոդվածով նախատեսված դատավարական պարտականության կատարման հետ, անսահմանափակ չէ:

162. Նախ՝ պարզ է, որ երբ մահն առաջացել է նախքան սահմանային ժամկետը, Դատարանի ժամանակային իրավասության մեջ կարող է մտնել միայն այդ ժամկետից հետո կատարված դատավարական գործողությունները և/կամ դրսևորված անգործությունը:

163. Ապա, պետք է առկա լինի իրական կապ մահվան և պատասխանող պետության համար Կոնվենցիան ուժի մեջ մտնելու հանգամանքի միջև, որպեսզի 2-րդ հոդվածով սահմանված դատավարական պարտականությունն սկսի գործել:

Ուստի այս դրույթի համաձայն՝ պահանջվում են բազմաթիվ դատավարական գործողություններ – ինչը ներառում է ոչ միայն տվյալ անձի մահվան կապակցությամբ արդյունավետ քննության իրականացումը, այլ նաև մահվան պատճառների պարզման և պատասխանատու անձանց հայտնաբերման նպատակով համապատասխան վարույթի հարուցումը (*Vo*, տե՛ս վերը՝ կետ 89) – որոնք իրականացվել, պետք է կամ կարող են իրականացված լինել սահմանային ժամկետից հետո: Սակայն Դատարանը չի բացառում, որ որոշակի հանգամանքներում կապը կարող է նաև հիմնված լինել Կոնվենցիայի երաշխիքների և դրա հիմքում դրված արժեքների պաշտպանության իրական և արդյունավետ ձևերի առկայության հիմնավորման անհրաժեշտության վրա:

(iii) Սույն գործով վերոնշյալ սկզբունքների կիրառումը

164. 1994 թվականի հունիսի 28-ի իր հայտարարությամբ (տե՛ս վերը՝ կետ 105), Սլովենիան ճանաչել է անհատական դիմումների կապակցությամբ կոնվենցիոն մարմինների իրավասությունը «երբ [այս] իրավունքների ենթադրյալ խախտման վերաբերյալ փաստերը առկա են եղել Կոնվենցիան և դրա Արձանագրությունները Սլովենիայի Հանրապետության համար ուժի մեջ մտնելուց հետո»: Ուղղակի արտահայտություններով սահմանափակված լինելով՝ Սլովենիայի հայտարարությունը՝ հետադարձ ուժի անթույլատրելիության վերոնշյալ սկզբունքից բխող այս սահմանափակումից բացի, Դատարանի ժամանակային իրավասության համար որևէ այլ սահմանափակում չի նախատեսում:

165. Վերոնշյալ սկզբունքները սույն գործի համագամքների նկատմամբ կիրառելով՝ Դատարանը նշում է, որ դիմողների որդու մահը տեղի է ունեցել Սլովենիայի համար Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց մեկ տարուց փոքր-ինչ ավելի առաջ, մինչդեռ, նախնական քննությունից բացի, բոլոր քրեական և քաղաքացիական վարույթներն իրականացվել են այդ ժամկետից հետո: Քրեական վարույթը հարուցվել է համապատասխանաբար՝ 1996 թվականի ապրիլի 26-ին (տե՛ս վերը՝ կետ 23) դիմողների՝ 1995 թվականի նոյեմբերի 30-ի պահանջից հետո, իսկ քաղաքացիական դատավարություններն սկսվել են 1995 թվականին (տե՛ս վերը՝ կետ 48) և դեռևս չեն ավարտվել:

166. Դատարանը նշում է, որ Կառավարությունը չի վիճարկել այն, որ դիմողների դատավարական գանգատն էականորեն կապված է վերոնշյալ դատավարական ընթացակարգերի հետ, որոնք իրականացվել են Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո և հստակ նպատակ են հետապնդել պարզելու դիմողների որդու մահվան համագամքները և դրա համար պատասխանատու անձանց:

167 Վերոգրյալի հիման վրա Դատարանը գտնում է, որ 2-րդ հոդվածի դատավարական կողմի ենթադրյալ խախտումը տեղավորվում է Դատարանի ժամանակային ընդդատության մեջ և, հետևաբար, այն իրավասու է քննելու գանգատի այս մասը: Այն կշարունակի պարզել, թե Սլովենիայի համար Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո տեղի ունեցած դեպքերը վերհանում են, արդյոք, այդ դրույթի խախտումը:

2. Ներպետական ընթացակարգերի սպառումը

168. Մեծ պալատի առջև Կառավարությունը, հիմնվելով Պալատում վարույթի վերաբերյալ իր դիտարկումների վրա, առարկություն է ներկայացրել առ այն, որ դիմողները չեն սպառել ներպետական ընթացակարգերը: Այն առաջին հերթին վիճարկել է, որ գանգատը վաղաժամ է, քանի որ քաղաքացիական դատավարությունը դեռևս չի ավարտվել և որ քրեական և քաղաքացիական դատավարությունների ավարտից հետո դիմողները Սլովենիայի Սահմանադրության 26-րդ հոդվածի համաձայն կարող են մահ վարույթների ընթացքում իրենց իրավունքների ենթադրյալ խախտման հիմքով քաղաքացիական հայց ներկայացնել պետության դեմ (տե՛ս *Lukenda v. Slovenia*, թիվ 23032/02, կետ 9, ECHR 2005-X):

Երկրորդ, այն վիճարկել է, որ դիմողներն իրենց գրկել են անհիմն հետաձգումների վիճարկման ընթացակարգերի դիմելու հնարավորությունից:

Դիմողները վիճարկել են Կառավարության փաստարկները:

169. 2007 թվականի հունիսի 28-ի իր վճռում Պալատը գտել է, որ վարույթների տևողության հետ կապված ընթացակարգերը բավարար չեն եղել, քանի որ քննարկվել է ոչ միայն դատավարությունների տևողության հարցը, այլ նաև, թե անբողջությամբ վերցրած գործի հանգամանքներից ելնելով կարելի է ասել, որ պետությունը գործել է Կոնվենցիայի 2-րդ հոդվածով նախատեսված դատավարական պահանջներին համապատասխան (տես վերը *Byrzykowski*, կետ 90):

Ինչ վերաբերում է առարկությունների առաջին մասին, ապա Պալատը գտնում է, որ դիմողներն սպառել են քրեական դատավարությունում իրենց հասանելի բոլոր ընթացակարգերը: Ինչ վերաբերում է քաղաքացիական դատավարությանը, որը դեռևս շարունակվում է, ապա Պալատը գտնում է, որ Կառավարության առարկությունների այս մասը սերտորեն կապված է 2-րդ հոդվածի դատավարական կողմի կապակցությամբ դիմողների զանգատի էության հետ և, հետևաբար, դրա քննությունը պետք է միացվի սույն գործի հանգամանքներին:

170. Մեծ պալատը նշում է, որ իր առաջ վարույթի ընթացքում կողմերն իրենց գրավոր կամ բանավոր փաստարկներում չեն ներկայացրել 2-րդ հոդվածի կապակցությամբ ներպետական ընթացակարգերի սպառման վերաբերյալ որևէ նոր փաստարկ: Իր մասով, այն որևէ պատճառ չի տեսնում Պալատի կողմից որդեգրված մոտեցումից շեղվելու համար:

B. Հանգամանքները

1. Պալատի վճիռը

171. 2007 թվականի հունիսի 28-ի իր վճռում Պալատը որևէ մատնանշում չի գտել առ այն, որ պետության կողմից որևէ կերպ քննություն չի իրականացվել դիմողների որդու մահվան համար պատասխանատու անձանց քրեական և քաղաքացիական պատասխանատվությունը սահմանելու նպատակով: Պալատը քննության է առել այն հարցը, թե ինչպես է այս ընթացակարգն աշխատել կոնկրետ հանգամանքներում: Այդ կապակցությամբ Պալատն անհրաժեշտ չի համարել առանձին որոշում կայացնել առ այն, թե արդյոք միջանկյալ քննությունների հանձնաժողովի կողմից մեղադրանքի մերժմամբ ավարտված քրեական վարույթներն արդյունավետ են եղել այն դեպքում, երբ դիմողները բժշկի և հիվանդանոցի դեմ նաև քաղաքացիական հայց են հարուցել: Այս կապակցությամբ Պալատը վկայակոչել է *Calvelli and Ciglio v. Italy* և *Vo v. France* (տես վերը) գործերով Դատարանի վճիռները: Պալատը նշել է, որ քրեական վարույթները, ինչպես դա սովորաբար լինում է, սահմանափակված են եղել տվյալ բժշկի դեմ ներկայացված մեղադրանքի կապակցությամբ որոշման կայացմամբ և որ քաղաքացիական պատասխանատվության սահմաններն էականորեն ավելի լայն են եղել, քան քրեական պատասխանատվության սահմանները և պարտադիր կերպով չեն հենվել վերջինիս վրա:

172. Ինչ վերաբերում է դատական քննության արդյունավետությանը, ապա Պալատը գտնում է, որ նախքան քրեական վարույթով որոշման կայացումը քաղաքացիական վարույթի կասեցումը կարող է պատճառաբանված համարվել: Այն նշում է, որ թեև վարույթի կասեցման մասին որոշումը կայացվել է 1997թ. հոկտեմբերին, սակայն քաղաքացիական վարույթով գրեթե վեց տարվա ընթացքում որևէ քայլ չի ձեռնարկվել:

173. Բացի նրանից, որ անձին որևէ մեղադրանք չառաջադրելով ավարտված քրեական դատավարությունը տևել է մոտ հինգ տարի, հետագայում առաջին ատյանի քաղաքացիական դատարանի կողմից սույն գործով վճիռ կայացնելու համար պահանջվել է լրացուցիչ հինգ տարի: Այդ ժամանակահատվածի ընթացքում դիմողները դատավարական բնույթի բազմաթիվ դիմումներ են ներկայացրել, ինչպիսիք են, օրինակ, դատավորին և/կամ գործի ընդդատությունը փոփոխելու վերաբերյալ դիմումները, որոնցից շատերը նրանց վիճակի բարելավման որևէ հնարավորություն չեն ստեղծել: Սակայն, անգամ հաշվի առնելով վերոնշյալ դիմումների միջոցով դիմողների կողմից վարույթի տևողության երկարացման վրա ունեցած ազդեցությունը՝ Պալատը գտնում է, որ քաղաքացիական վարույթի իրականացման ձևը (օրինակ՝ գործը եղել է վեց տարբեր դատավորների վարույթում և մոտ տասներկու տարի տևելուց հետո դեռևս շարունակվում է) չի կարող դիտվել որպես արդյունավետ և, հետևաբար, որպես 2-րդ հոդվածով նախատեսված դատավարական պահանջները բավարարող:

2. Կողմերի փաստարկները

(a) Դիմողները

174. Դիմողները փաստարկել են, որ դատական համակարգը չի իրականացրել իրենց որդու մահվան պատճառի և դրա համար պատասխանատու անձանց բացահատմանն ուղղված արդյունավետ և արագ քննություն:

175. Նրանք քննադատել են քաղաքացիական վարույթի իրականացման եղանակը՝ փաստարկելով, որ իշխանությունները դժկամությամբ են քննել իրենց գործը և իրենց նկատմամբ խտրական վերաբերմունք են ցուցաբերել: Նրանք նաև իրենց անհամաձայնությունն են արտահայտել քաղաքացիական վարույթը կասեցնելու վերաբերյալ Կառավարության փաստարկին: Նրանք փաստարկների համաձայն՝ քրեական պատասխանատվության սահմանումը Քաղաքացիական դատավարության օրենսգրքի իմաստով գործի նախնական քննության ենթակա հարց չի հանդիսացել, հատկապես որ քաղաքացիական պատասխանատվությունը կարող է սահմանվել, եթե անգամ որևէ քրեական հանցագործություն չի կատարվել: Այն կարող է նաև բաշխվել տարբեր կողմերի միջև և կապված լինել վնասի տարբեր մասերի հետ:

176. Դիմողը քննադատել է նաև կոնկրետ դատավորների վարույթից հեռացնելու վերաբերյալ իրենց պահանջներին դատարանների կողմից արձագանքելու եղանակը, ինչպես նաև այն վերաբերմունքը, որն իրենց վարքագծով և դիմողների ու իշխանության հետ իրենց հաղորդակցության մեջ ցուցաբերել են դատավորներից ոմանք:

177. Մեծ պալատի առջև արված դատողություններում դիմողները քննադատել են բժիշկ Մ.Ե.-ին մեղադրանք առաջադրելուց հանրային դատախազի կողմից համառորեն հրաժարվելը: Մեծ պալատի առջև իրենց դատողություններում դիմողները քննադատել են բժիշկ Մ.Ե.-ին մեղադրանք առաջադրելուց՝ հանրային դատախազի անգիջում հրաժարումը: Այս կապակցությամբ նրանք շեշտել են, որ Մարիբորի շրջանային դատարանի 1999 թվականի հունվարի 12-ի որոշումը վկայում է այն մասին, որ առկա է եղել հիմնավոր կասկած առ այն, որ կատարվել է հանցագործություն: Հանրային դատախազի՝ քննությունը շարունակելու

ցանկության բացակայության արդյունքում դիմողներին այլ բան չէր մնում, քան ստանձնել մեղադրանքի պաշտպանությունը, և դրա հետևանքով նրանք անբարենպաստ վիճակի մեջ են հայտնվել: Բացի դրանից, իշխանություններից ավելի քան յոթ տարի է պահանջվել գործը քննելու ու մեղադրանքի վերաբերյալ որոշում կայացնելու համար, և քրեական վարույթը որևէ լավան արդյունք չի տվել:

178. Մեծ պալատի առջև իրենց բանավոր փաստարկներում դիմողները կենտրոնացել են նաև Սլովենիայում բժշկական անփութության վերաբերյալ գործերի քննության մեջ ներգրավված դատաբժշկական փորձագետների անկողմնակալության հարցի վրա՝ փաստարկելով, որ Սլովենիայում շատ քիչ թվով բժիշկներ կան և այն, որ Սլովենիայի բժիշկները, այդ թվում՝ դատաբժշկական փորձագետները, նույն առևտրային միավորման (FIDES-ի) անդամ են, ինչը դժվարեցնում է նրանց լիակատար անկողմնակալության ապահովումը: Դիմողների գործով վերոնշյալ առևտրային միավորումը դիմողներից պահանջել է փոխհատուցել Մարիբորի շրջանային և բարձր դատարաններում բժիշկ Ս.Ե.-ին իրավական օգնություն ապահովելու համար կատարված ծախսերը: Դիմողները փաստարկել են նաև, որ պետք է կասկածի տակ դրվեն Բժշկական տրիբունալի կողմից իրականացված վարույթները, որոնց կողմ են հանդիսացել միայն մեղադրվող բժիշկը և Բժշկական առօրյա ցանցի համընկալատարը:

179. Դիմողները կարծիք են արտահայտել այն մասին, որ Սլովենիայի քաղաքացիական և քրեական դատարաններում, ընդհանուր առմամբ, առկա է եղել անզգուշությամբ մահ պատճառելու համար մեղավոր բժիշկների դեմ որոշում չկայացնելու միտում:

b) Կառավարությունը

180. Կառավարության փաստարկներում Պալատը գտավ 2-րդ հոդվածի խախտում այն հիմքով, որ և՛ քրեական, և՛ քաղաքացիական վարույթները ոչ արդյունավետ են եղել: Դիմողների որդու մահվան փաստի կապակցությամբ իրականացված նախաքննությունը և, մասնավորապես, հետագա քրեական վարույթներն ամբողջությամբ բավարարել են 2-րդ հոդվածով նախատեսված դատավարական պարտականությունը: Սինչդեռ քրեական դատավարությունների իրականացման ժամանակ ղեկավար նշանակություն են ունեցել օբյեկտիվ ճշմարտության և պաշտոնականության սկզբունքները, որոնք չեն եղել քաղաքացիական դատավարություններում: Այդ սկզբունքի պատճառով քաղաքացիական դատավարություններում չեն ապահովվել Կոնվենցիայի 2-րդ հոդվածով սահմանված դատավարական պարտականությունները:

181. Կառավարությունը նշել է, որ դիմողների որդու մահվանից հետո ձեռնարկված առաջին միջոցը կիրառվել է նախքան Կոնվենցիայի ուժի մեջ մտնելը: Նա փաստարկել է, որ 2-րդ հոդվածի դատավարական կողմի քննության ժամանակ Դատարանը պետք է հաշվի առներ քննության այդ ժամանակ առկա վիճակը և դրա միջոցով հայտնաբերված հանգամանքները: Բացի դրանից, դիմողների կողմից հարուցված քրեական վարույթները չեն հանգեցրել նախնական քննության եզրահանգումից տարբերվող որևէ այլ եզրակացության: Մեծ պալատում ներկայացրած իր բանավոր փաստարկներում Կառավարությունը վիճարկել է նաև այն, որ հանրային դատախազն իրականացրել է բազմակողմանի վերահսկողություն մեղադրանքը չպաշտպանելու վերաբերյալ 1997 և 1999 թվականների որո-

շումների նկատմամբ՝ հավելելով, որ այն փաստը, որ ի վերջո քրեական վարույթն իրականացնող դատարանը չի հաստատել մեղադրանքը՝ դրանով իսկ հաստատելով հանրային դատախազի որոշման իրավացիությունը:

182. Կառավարությունը քննադատել է Պալատի վճռի անհստակությունը, որը վերաբերում է քրեական դատավարության ընթացքում թույլ տրված ենթադրյալ խախտումներին: Այն փաստարկել է, որ քրեական վարույթների հիմնական մասը, որոնք ավարտվել են 2000 թվականի դեկտեմբերի 20-ի որոշմամբ, իրականացվել են որքան հնարավոր է արագ՝ հաշվի առնելով գործի բարդությունը, մասնավորապես այն, որ պահանջվել է երկար քննություն՝ այդ թվում՝ Սլովենիայից և արտասահմանից տարբեր փորձագետների ներգրավում, ինչպես նաև դեպքերի ընթացքի ժամանակագրական վերականգնում: Քրեական վարույթի ընթացքում որևէ էական խախտում կամ ձգձգում առկա չի եղել: Ներպետական դատարանները մանրամասն քննություն են իրականացրել պարզելու համար դիմողների որդու մահվան հանգամանքները և բժշկին այդ կապակցությամբ քրեական պատասխանատվության ենթարկելու հիմքերի առկայությունը:

183. Կառավարությունը մեկնաբանել է նաև քրեական վարույթների ընթացքում դիմողների ունեցած ապացուցման պարտականությունը հարցը: Նա նշել է, որ որպես «լրացուցիչ» մեղադրող՝ դիմողները պարտավոր էին պահպանել քրեական վարույթների հիմնարար նպատակը, դրա ընթացքում կիրառվող կանոնները և, մասնավորապես, երաշխիքները, որոնք նպատակ են հետապնդել ապահովել մեղադրյալի իրավունքների պաշտպանությունը:

184. Կառավարության փաստարկները վերաբերել են նաև դիմողների՝ քրեական վարույթների ընթացքում սահմանադրական բողոք ներկայացնելու իրավունքի հարցին: Նա նշել է, որ այս ընթացակարգը քրեական դատավարությունում տուժող կողմի համար «բաց» չէ բազմաթիվ լեգիտիմ պատճառներով, ներառյալ՝ *non bis in idem* սկզբունքը:

185. Ինչ վերաբերում է գործնականում քրեական վարույթների ընդհանուր արդյունավետությանը, ապա Կառավարությունը վկայակոչել է Սլովենիայի դատարանների կողմից տրամադրված տեղեկությունները, որոնք վկայում են այն մասին, որ ենթադրյալ բժշկական անփութության հետևանքով առաջացած մահվան վերաբերյալ գործերով «լրացուցիչ» մեղադրանքի իմստիտուտը հազվադեպ է կիրառվել: Նման գործերով, որպես կանոն, մեղադրանքը պաշտպանվել է հանրային դատախազի կողմից: Ի հիմնավորումն այդ փաստարկի, Կառավարությունը ներկայացրել է տվյալներ, որոնց համաձայն՝ բժշկական անփութության վերաբերյալ վերջին տասներկու գործերով անզգուշությամբ մահ պատճառելու փաստի առթիվ քրեական վարույթ հարուցվել է հանրային դատախազի կողմից: Միայն երկու գործով է տուժող կողմը հետագայում ստանձնել մեղադրանքի պաշտպանությունը:

186. Անդրադառնալով քաղաքացիական պատասխանատվության հարցին՝ Կառավարությունը պնդել է, որ Պարտավորությունների վերաբերյալ օրենքը և Պարտավորությունների վերաբերյալ օրենսգիրքը կյանքի իրավունքի արդյունավետ պաշտպանության հնարավորություն են նախատեսում: Ի հիմնավորումն իր փաստարկի, նա ներկայացրել է ենթադրյալ բժշկական սխալի վերաբերյալ հինգ գործերով 1998-ից 2003 թվականների ընթացքում կայացված վճիռների պատճեններ: Այս գործերից չորսով առողջապահական հիմնարկները պարտավորեց-

վել են փոխհատուցել հայցվորներին պատճառված վնասները: Կառավարությունը նաև ներկայացրել է առողջապահական հիմնարկների դեմ հարուցված 124 հայցերը, որոնք 1995-ից 2004 թվականների ընթացքում ներկայացվել են Լյուբլյանայի և Մարիբորի շրջանային դատարաններ, և որոնցից 27-ը վերջնական լուծում են ստացել (*pravnomočno končanih*): Մնացյալ մասը, ներառյալ՝ 6 գործ 1995 թվականից, դեռևս քննվում են առաջին կամ երկրորդ ատյանի դատարանների կողմից:

187. Ինչ վերաբերում է սույն գործին, ապա Կառավարությունը փաստարկել է, որ դատարաններին ներկայացված խնդիրը շատ բարդ է եղել: Ի լրումն դրա, դիմողների վարքագիծը, մասնավորապես վճիռների անընդհատ բողոքարկումը և ընդդատությունը փոփոխելու վերաբերյալ միջնորդությունների ներկայացումը խոչընդոտել են դատավարության պատշաճ ընթացքին: Կառավարությունը գտել է, որ այսքան մեծ թվով պահանջների և միջնորդությունների ներկայացումը պայմանավորված չի եղել գործի օբյեկտիվ հանգամանքներով: Մեղադրանքի պաշտպանության ստանձնումից հետո բացառապես դիմողներն են պատասխանատու վարույթի ձգձգման համար:

188. Քաղաքացիական պատասխանատվությունը հիմնված չէ միայն քրեական պատասխանատվության սահմանման վրա, և քաղաքացիական դատարանները, մասնավորապես, սահմանափակված չեն պատասխանողի՝ արդարացված լինելու հանգամանքով: Ինչ վերաբերում է քաղաքացիական վարույթների կասեցմանն այն դեպքում, երբ քաղաքացիական դատարանները պարտավոր չէին սպասել քրեական վարույթների ավարտին, ապա քաղաքացիական դատարաններն իրավասու են առանձին գործերով դիմել այդ քայլին: Սույն գործով քաղաքացիական վարույթը կասեցնելու վերաբերյալ որոշումը հիմնավորված էր՝ հաշվի առնելով ապացույցների ձեռքբերման երկարատև գործընթացը, որը միաժամանակ տեղի էր ունենում քրեական դատարանում: Բացի դրանից, դիմողներն այդ որոշումը չեն բողոքարկել:

189. Կառավարությունը նաև փաստարկել է, որ Պալատը սխալվել է՝ ամրագրելով, որ «դատարանը մոտ վեց տարի որևէ բան չի արել», քանի որ վարույթների կասեցումից և վերսկսումից հետո ընդամենը երեք տարի և յոթ ամիս է անցել: Բացի դրանից, Կառավարությունը գտել է, որ արդարացված չի եղել Պալատի կողմից այն հանգամանքի շեշտումը, որ ընդհանուր առմամբ վեց դատավոր են քննել գործը և արդյունքում սահմանել դրա համար Պետության պատասխանատվությունը: Ազգային դատարանները գործել են բացառապես ներպետական օրենսդրությանը համապատասխան և դիմողների պահանջների ու միջնորդությունների վերաբերյալ որոշում են կայացրել հնարավորինս արագ: Ինչ վերաբերում է երկու դատավորի, որոնց հայտնված բացարկը բավարարվել է, ապա նրանց վարույթից հեռացնելու հանգամանքներն ամբողջությամբ կապված են եղել դիմողների հետ:

190. Կառավարության՝ Մեծ պալատում ներկայացրած փաստարկներից բխում է նաև, որ վերջինս վիճարկում է սույն գործով Օմբուդսմենի դիրքորոշումները, մասնավորապես, նրանք, որոնք վերաբերում են վարույթների կասեցմանը և 2003 թվականի հոկտեմբերի 28-ի լսման իրականացմանը: Նա փաստարկել է նաև այն, որ ներպետական օրենսդրության իմաստով Օմբուդսմենն իրավասություն չունի միջամտելու դեռևս չավարտված ներպետական վարույթներին, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է վարույթի ոչ պատշաճ ձգձգում կամ իշխա-

նության ակնհայտ չարաշահում: Նմանապես, Եվրոպական դատարանն իրավունք չուներ քննել, թե արդյոք ներպետական դատարանների կողմից ապացույցների ձեռքբերման եղանակը պատշաճ է եղել, թե՛ ոչ:

191. Մեծ պալատի առջև ներկայացված իր փաստարկներում Կառավարությունը նաև վկայակոչել է Բժշկական տրիբունալում իրականացված վարույթները՝ հիմնավորելու համար կյանքի իրավունքի պաշտպանության համակարգի արդյունավետությունը: Նա բացատրել է, որ տրիբունալն իրավասու է սահմանել բժշկի կողմից թույլ տրված հնարավոր սխալի առկայությունը: Եվ դրա արդյունքում կիրառել կարգապահական միջոցներ, այդ թվում արտոնագրի կասեցում կամ վերացում: Նա հավելել է, որ դիմողներն իրենք են զրկել իրենց այդ ընթացակարգին դիմելու հնարավորությունից:

3. Մեծ պալատի գնահատականը

(a) Համապատասխան սկզբունքները

192. Ինչպես բազմիցս նշվել է Դատարանի կողմից՝ 2-րդ հոդվածով նախատեսված դատավարական պարտականությունը պահանջում է պետությունից ձևավորել արդյունավետ, անկախ դատական համակարգ, որպեսզի հնարավոր լինի պարզել պետական կամ մասնավոր ուղորդում աշխատող բժշկի հսկողության տակ գտնվող հիվանդի մահվան պատճառը և պատժվեն դրա համար պատասխանատու անձինք (ի թիվս այլ աղբյուրների, տե՛ս վերը՝ *Calvelli and Ciglio*, կետ 49, և *Powell v. the United Kingdom*, (dec.), գանգատ թիվ 45305/99, ECHR 2000-V):

193. Դատարանը կրկնում է, որ այս դատավարական պարտականությունը վերաբերում է ոչ միայն արդյունքին, այլ նաև միջոցներին (*Paul and Audrey Edwards v. the United Kingdom*, գանգատ թիվ 46477/99, կետ 71, ECHR 2002-II):

194. Եթե անգամ Կոմիտեցիան, որպես այդպիսին, չի երաշխավորում երրորդ անձանց նկատմամբ քրեական վարույթ հարուցելու իրավունքը, Դատարանը բազմիցս ասել է, որ 2-րդ հոդվածով պահանջվող՝ արդյունավետ դատական համակարգը կարող է, և որոշակի հանգամանքներում պետք է ներառի քրեական օրենսդրությամբ դիմելու իրավունք: Սակայն, եթե կյանքի կամ անձնական անձեռնմխելիության իրավունքի խախտումը դիտավորությամբ չի կատարվել, ապա արդյունավետ դատական համակարգ ձևավորելու վերաբերյալ՝ 2-րդ հոդվածով սահմանված դատավարական պարտականության հիման վրա անհրաժեշտաբար չի պահանջվում յուրաքանչյուր գործով քրեական օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգ իրականացնել (*Mastromatteo*, տե՛ս վերը՝ կետ 90): Հաշվի առնելով բժշկական անփութության առանձնահատուկ բնույթը՝ պարտականությունը կարող է, օրինակ, կատարված համարվել, եթե իրավական համակարգը տուժողներին հնարավորություն է տալիս կամ առանձին, կամ քրեական վարույթի հետ փոխկապակցված քաղաքացիական վարույթ հարուցել, որի արդյունքում կարող է սահմանվել տվյալ բժիշկների պատասխանատվությունը և համապատասխան քաղաքացիական փոխհատուցում տրամադրելու պարտականությունը, ինչպիսին է վնասների փոխհատուցման պարտականությունը և/կամ որոշման հրապարակումը: Կարող են նաև կարգապահական պատասխանատվության միջոցներ նախատեսվել (*Calvelli and Ciglio*, տե՛ս վերը՝ կետ 51, և *Vo*, տե՛ս վերը՝ կետ 90):

195. Անհապաղության և ողջամիտ արագության վերաբերյալ պահանջի առկայությունն այս ենթատեքստում ենթադրվում է: Եթե անգամ առկա են որոշակի հանգամանքներ և բարդություններ, որոնք կոնկրետ իրավիճակում խոչընդոտում են քննության ընթացքը, իշխանությունների կողմից դրան տրված արագ արձագանքն էական նշանակություն ունի դրանց օրենքին համապատասխանելու նկատմամբ հասարակական վստահության ապահովման և ապօրինի գործողությունների կատարման համաձայնության գալու կամ դրանց նկատմամբ հանդուրժողական վերաբերմունք դրսևորելու դեպքերի կանխման համար (տե՛ս վերը՝ *Paul and Audrey Edwards*, կետ 72): Նույնը կիրառելի է բժշկական անփութության հետ կապված՝ 2-րդ հոդվածի վերաբերյալ գործերի նկատմամբ: Կոմվենցիայի 2-րդ հոդվածով սահմանված պետության պարտականությունը չի համարվի կատարված, եթե ներպետական օրենսդրությամբ նախատեսված պաշտպանությունը զոյություն ունենա միայն տեսականորեն. բացի դրանից, այն պետք է մաս արդյունավետ գործի պրակտիկայում, իսկ դա ենթադրում է գործի արագ, առանց ոչ անհրաժեշտ ձգձգումների քննության առկայություն (տե՛ս վերը՝ *Calvelli and Ciglio*, կետ 53, *Lazzarini and Ghiacci v. Italy* (dec.), գանգատ թիվ 53749/00, 2002 թվականի նոյեմբերի 7, և *Byrzykowski*, տե՛ս վերը՝ կետ 117):

196. Ի վերջո, անկախ յուրաքանչյուր գործով Կոմվենցիայի 2-րդ հոդվածով ամրագրված իրավունքների պաշտպանության խնդրի առկայությունից, առավել ընդհանուր գնահատականները պահանջում են, որպեսզի հիվանդանոցներում տեղի ունեցած մահերի վերաբերյալ գործերը քննվեն անհապաղ: Փաստերի և բժշկական օգնություն ցույց տալու ժամանակ թույլ տված հնարավոր սխալների իմացությունն էական նշանակություն ունի տվյալ հիմնարկների և բժշկական անձնակազմի կողմից հնարավոր թերությունները վերացնելու և մնան սխալներն ապագայում կանխելու համար: Նման գործերի անհապաղ քննությունը, հետևաբար, կարևոր նշանակություն ունի բժշկական ծառայությունից օգտվող բոլոր անձանց անվտանգության համար (տե՛ս վերը՝ *Byrzykowski*, կետ 117):

(b) Վերոնշյալ սկզբունքների կիրառումը սույն գործով

197. Դատարանը նշում է, որ այն հանգամանքը, որ դիմողների որդու վիճակն սկսել է էականորեն վատանալ հիվանդանոցում և որ նրա մահը հնարավոր է կապված լինի ստացած բժշկական օգնության հետ, չի վիճարկվել ոչ Դատարանում, ոչ ներպետական վարույթների ընթացքում: Այս Դատարանն արձանագրում է դիմողների փաստարկն այն մասին, որ իրենց որդու մահը տեղի է ունեցել բժշկի անփութության պատճառով: Սրանից հետևում է, որ պետությունը պարտավոր է ապահովել, որպեսզի մահվան կապակցությամբ հարուցված վարույթները համապատասխանեն Կոմվենցիայի 2-րդ հոդվածով սահմանված դատավարական պարտականությանը:

198. Այս կապակցությամբ Դատարանը նշում է, որ դիմողները կիրառել են երկու իրավական ընթացակարգ՝ նպատակ ունենալով պարզել իրենց որդու մահվան հանգամանքները և դրա համար պատասխանատու անձանց: Նախնական քննությունից հետո նրանք բժիշկ Մ.Ե.-ի նկատմամբ քրեական վարույթ են հարուցել, իսկ փոխհատուցում ստանալու նպատակով քաղաքացիական վարույթ են սկսել երկուստեք՝ հիվանդանոցի ու բժշկի նկատմամբ:

199. Չնայած որ մահվան փաստի կապակցությամբ որևէ կարգապահական վարույթ չի հարուցվել, Կառավարությունը չի հիմնավորել, որ Բժշկական տրիբունալում նման վարույթը (որի մասին Կառավարությունը նշել է Պալատում (տե՛ս վերը՝ կետ 191)) այդ ժամանակ կարող էր արդյունավետ ընթացակարգ համարվել:

200. Ինչ վերաբերում է քրեական վարույթներին, ապա Դատարանն արձանագրում է, որ Լյուբլյանայի դատական բժշկության ինստիտուտի դատաբժշկական եզրակացությունը կազմվել է մահվանից շատ կարճ ժամանակ անց: Հետագայում հանրային դատախազը հրաժարվել է բժշկի դեմ քրեական վարույթ հարուցել: Քրեական վարույթները հարուցվել են դիմողների պահանջով և իրականացվել են վերջիններիս՝ որպես «լրացուցիչ» մեղադրողների կողմից: Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ դիմողներն առաջին հերթին պահանջել են քրեական քննություն իրականացնել բժիշկ Մ.Ե.-ի՝ 1994 թվականի օգոստոսի 1-ի վարքագծի կապակցությամբ: Քննություն իրականացնելու առաջին որոշումը վերացվել է 1994 թվականի դեկտեմբերին: 1995 թվականի նոյեմբերի 30-ին, բժշկական մոր եզրակացությունն ստանալուց հետո, դիմողների կողմից ներկայացված մեկ այլ պահանջը բավարարվել է և քննությունը 1996 թվականի ապրիլի 26-ին դիմողների որդու մահից գրեթե երեք տարի և դիմողների կողմից առաջին պահանջի ներկայացումից գրեթե երկու տարի հետո, վերաբացվել է: 1996 թվականին սկսվելուց հետո այդ վարույթները շարունակվել են ավելի քան չորս տարի, որի ընթացքում՝ 1997 թվականի փետրվարի 28-ին մեղադրանք առաջադրելուց հետո, գործը երկու անգամ ուղարկվել է հետագա քննության: Գործի քննությունը վերջնականապես ավարտվել է միջանկյալ քննությունների հանձնաժողովի 2000 թվականի հոկտեմբերի 18-ի որոշմամբ:

201. Բացի դրանից, չնայած հանրային դատախազի՝ քրեական վարույթ հարուցելուց շարունակաբար հրաժարվելուն (տե՛ս վերը՝ կետեր 18, 26 և 39), ներպետական դատարանները գտել են, որ առկա են բավարար հիմքեր քննություն սկսելու համար (տե՛ս վերը՝ կետ 23) և բավական լուրջ ծավալի ապացույցներ, այդ թվում՝ դատաբժշկական եզրակացություններ են հավաքվել: Քրեական վարույթն իրականացրել և քննության «բեռը» կրել են դիմողները:

202. Դատարանը կոչված չէ որոշելու, թե արդյոք սույն գործով քրեական վարույթները պետք է իրականացվեին *ex-officio* կամ պարզելու, թե ինչ քայլեր պետք է ձեռնարկեր հանրային դատախազը, քանի որ 2-րդ հոդվածի իմաստով դատավարական պարտականությունն անվերապահորեն չի պահանջում, որպեսզի պետությունը նման գործերով քրեական վարույթ իրականացնի (տե՛ս վերը՝ կետ 194), եթե անգամ պարզ է, որ նման վարույթներն ինքնին կարող են կատարել 2-րդ հոդվածով սահմանված պահանջները: Հետևաբար, Դատարանը սահմանափակվում է այն հարցի քննարկմամբ, թե քրեական վարույթները, մասնավորապես քննությունը, եղել են չափազանց երկար և որ ո՛չ դիմողների վարքագիծը, ո՛չ գործի բարդությունը բավարար հանգամանքներ չեն բացատրելու համար նման տևողությունը:

203. Ի տարբերություն Կառավարության, Դատարանն էական է համարում այն, որ դիմողները քաղաքացիական վարույթ են հարուցել, որի միջոցով նրանք կարող էին մրցակցային հիմունքներով պարզել կոնկրետ բժիշկների կամ հիվանդանոցի պատասխանատվության հարցը և ստանալ համապատասխան քաղաքացիաիրավական փոխհատուցում (*mutatis mutandis*, տե՛ս վերը՝ *Powell* և *Vo*,

կետ 94): Հնարահայտ է, որ քաղաքացիական պատասխանատվության շրջանակներն էականորեն ավելի լայն են, քան քրեական պատասխանատվության շրջանակները և առաջինն անվերապահորեն չի հիմնվում երկրորդի վրա: Քաղաքացիական վարույթները հարուցվել են 1995 թվականի հուլիսի 6-ին և ավելի քան տասներեք տարի տևելուց հետո դեռևս շարունակվում են Սահմանադրական դատարանում (տես վերը՝ կետ 78):

204. Ինչպես իրավամբ նշվել է Կառավարության կողմից, քաղաքացիական վարույթները երեք տարի յոթ ամիս կասեցված են եղել՝ սպասելով մինչև դիմողների կողմից զուգահեռաբար իրականացվող քրեական վարույթները կավարտվեն (տես վերը՝ կետեր 52-58): Սակայն նախքան պաշտոնական կասեցումը, երկու տարվա ընթացքում քաղաքացիական վարույթները փաստորեն դադարեցված են եղել (տես վերը՝ կետեր 49-52):

205. Դատարանը հաշվի է առնում այն հանգամանքը, որ քրեական վարույթներով ձեռք բերված ապացույցները կարող են նշանակություն ունենալ նույն փաստի կապակցությամբ հարուցված քաղաքացիական վարույթով որոշում կայացնելու համար: Հետևաբար, այն չի գտնում, որ քաղաքացիական վարույթների կասեցումն ինքնին սույն գործով անհիմն է եղել: Դրա հետ մեկտեղ, այն շեշտում է, որ կասեցումը ներպետական իշխանությունների չի ազատում գործն արագ քննելու իրենց պարտականությունից: Այս կապակցությամբ Դատարանը վկայակոչում է քրեական վարույթների իրականացման վերաբերյալ իր վերոնշյալ դատողությունները: Ի լրումն, այն նաև նշում է, որ քաղաքացիական դատարանը, որտեղ դիմողների գործը դեռևս քննվում է, պատասխանատու է քաղաքացիական վարույթի իրականացման համար և, հետևաբար, վարույթների վերաբացման հարցի լուծման ժամանակ պետք է գնահատեր, թե արդյոք շարունակական կասեցումը գերակշռում է արագության պահանջի նկատմամբ:

206. Ապա Դատարանը նշում է, որ քաղաքացիական վարույթների՝ կասեցված լինելու ընթացքում քրեական վարույթով ձեռք է բերվել փորձագետի եզրակացություն: Այս ապացույցը հասանելի է եղել քաղաքացիական դատարանին քաղաքացիական վարույթների վերաբացման ժամանակ: Վերոգրյալի հիման վրա, ինչպես նաև հաշվի առնելով քաղաքացիական վարույթի ընթացքում հետագայում ձեռնարկված քայլերը՝ Դատարանը գտնում է, որ, այդ պահից սկսած, այն ժամանակի տևողությունը, որն անհրաժեշտ է եղել քաղաքացիական վարույթն ավարտելու համար, չի կարող այլևս հիմնավորվել գործի առանձնակի բարդության վկայակոչմամբ: Այն գտնում է, սակայն, որ քրեական վարույթների ավարտից հետո ներպետական դատարաններին անհրաժեշտ է եղել ևս հինգ տարի ութ ամիս՝ դիմողների քաղաքացիական հայցի վերաբերյալ որոշում կայացնելու համար:

207. Այս կապակցությամբ Դատարանը նշում է, որ այդ ժամանակահատվածի ընթացքում դիմողները բազմիցս բացարկ են հայտնել իրենց գործը քննող դատավորներին և ընդդատությունը փոխելու վերաբերյալ մի քանի միջնորդություն են ներկայացրել: Այս քայլերից շատերը ոչ անհրաժեշտ ձգձգումների պատճառ են դարձել և որևէ ազդեցություն չեն ունեցել իրավիճակի շտկման վրա: Սակայն դիմողների պահանջներից մի քանիսը հիմնավոր են եղել: Օրինակ՝ ընդդատությունը փոխելու վերաբերյալ երկրորդ միջնորդությունը բավարարվել է և դրա արդյունքում գործը փոխանցվել է Սարիբորի շրջանային դատարան: Դիմողները հաջողության են հասել նաև այն երկու դեպքերում, երբ պահանջել են վարույթից հե-

ռացնել առանձին դատավորների, թեև կարող է թվալ, թե այդ դատավորները վարույթից հեռացել են միանշանակ իրենց սեփական մախաձեռնությամբ:

208. Դատարանն ընդունում է, որ ընդդատությունը փոխելու և առանձին դատավորների վարույթից հեռացնելու վերաբերյալ պահանջները որոշակի չափով ձգձգել են դատավորությունը: Սույն գործով, սակայն, այն գտնում է, որ ձգձգումները, որոնք տեղի են ունեցել կասեցումը դադարեցնելուց հետո, շատ դեպքերում անհիմն են եղել: Օրինակ, դիմողների՝ 2001 թվականի հունիսի 11-ի պահանջի հիման վրա ընդդատությունը փոխելուց հետո ինն ամսվա ընթացքում որևէ լսում չի իրականացվել (տե՛ս վերը՝ կետեր 59-60): 2002 թվականի ապրիլի 3-ի լսումից հետո վարույթը մոտ չորս ամիս «նիրհել» է, քանի որ դատարանները, ենթադրաբար, քննարկել են դատավորներին վարույթից հեռացնելու վերաբերյալ դիմողների միջնորդությունները: Արդյունքում՝ դատավոր Մ.Տ.Զ.-ն է հեռացվել վարույթից: Հետագա տասն ամիսների ընթացքում դատարանների կողմից կատարված միակ գործողությունը եղել է ընդդատության փոփոխության վերաբերյալ միջնորդությունը մերժելը. որևէ այլ քայլ չի ձեռնարկվել (տե՛ս վերը՝ կետեր 61-63): Ի լրումն դրա, 2005 թվականի մարտի 23-ին և 24-ին նշանակված լսումների հետաձգումից հետո, և չնայած վարույթն արագացնելու վերաբերյալ դիմողների՝ 2005 թվականի մայիսի 4-ի նամակի առկայությանը, դատարանների կողմից մոր լսում նշանակելու համար պահանջվել է տասն ամիս, հավանաբար այն պատճառով, որ գործով վարույթի իրականացումն ստանձնել էր այլ դատավոր (տե՛ս վերը՝ կետեր 67-70): 2006 թվականի հունվարի 31-ին դատավոր Դ.Մ.-ին վարույթից հեռացնելուց հետո չորս ու կես ամիս է անցել նախքան մոր դատավորի կողմից 2006 թվականի հունիսի 16-ին հաջորդ լսումն իրականացնելը (տե՛ս վերը՝ կետեր 70-72): Որևէ նշանակություն չունի այն, որ այդ լսումից հետո մոր դատավորի կողմից առաջին ատյանում վարույթն ավարտվել է երեք ամիսից պակաս ժամկետում (տե՛ս վերը՝ կետ 73):

209. Սույն գործի քննության ժամանակ Դատարանը չէր կարող ուշադրություն չդարձնել Օմբուդսմենի հանրային զեկույցներին և վարույթների իրականացման կապակցությամբ նրա միջամտություններին (տե՛ս վերը՝ կետեր 81-85): Դրանցում արտացոլված հանգամանքները հնարավոր է, որ ազդած լինեն վարույթների իրականացման ձևի նկատմամբ դիմողների անվստահության վրա և դատավորներին ու նրանց դատարանին բազմիցս ներկայացված բացարկներից մի քանիսի ներկայացման դրդապատճառ հանդիսացած լինեն: Ինչ վերաբերում է Կառավարության այն փաստարկին, որ Օմբուդսմենն իրավասու չէ միջամտել խնդրահարույց ներպետական դատավարություններին (տե՛ս վերը՝ կետ 190), ապա Դատարանն այն կարծիքի է, որ իր իրավասության մեջ չի մտնում ներպետական օրենսդրության իմաստով Օմբուդսմենի լիազորությունների հետ կապված հարցի լուծումը, առավել ևս, որ այն որևէ առնչություն չունի դիմողների բողոքի հետ:

210. Ի վերջո, Դատարանը գտնում է, որ դիմողների գործի համար չի կարող բավարար համարվել այն, որ վերջինս միայն առաջին ատյանի վարույթի կարգով քննվել է վեց տարբեր դատավորի կողմից: Թեև այն ընդունում է, որ ներպետական դատարաններն իրենց զբաղեցրած դիրքով կարող են ավելի ճիշտ գնահատական տալ այն հարցին, թե այս կամ այն դատավորը կարող է, արդյոք, քննել կոնկրետ գործը, թե՛ ոչ, դրա հետ մեկտեղ, սակայն Դատարանը երբևէ չի նշել, որ գործը քննող դատավորի հաճախակի փոփոխությունը, անկասկած, խոչընդոտելու է գործի քննության արդյունավետությանը: Այս կապակցությամբ Դատարանը

գտնում է, որ Պետությունը պետք է իր դատական համակարգն այնպես կազմավորի, որպեսզի դատարանները համապատասխանեն Կոնվենցիայի պահանջներին, այդ թվում՝ այն պահանջներին, որոնք ամրագրված են 2-րդ հոդվածի դատավարական պարտականության մեջ (տե՛ս *mutatis mutandis*, *R.M.D. v. Switzerland*, 1997 թվականի սեպտեմբերի 26, կետ 54, *Reports* 1997-VI):

211. Հանձնաժողովը վերոհիշյալ նախապայմանները՝ դատարանը գտնում է, որ իրենց որդու մահվան փաստի առիթով դիմողների կողմից հարուցված հայցը ներպետական իշխանությունները չեն քննել Կոնվենցիայի 2-րդ հոդվածով պահանջվող ջանասիրությամբ: Հետևաբար, տեղի է ունեցել 2-րդ հոդվածի դատավարական կողմի խախտում և այս դրույթի դատավարական կողմի առումով ներպետական քաղաքացիական վարույթների սպառնալից վերաբերյալ Կառավարության նախնական առարկությունը ենթակա է մերժման:

III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ԵՎ 13-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱՆՏՈՒՄԸ

212. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա դիմողները վիճարկել են քրեական վարույթների ամարդարացիությունը, ինչպես նաև երկու վարույթների երկարատևությունը: 6-րդ հոդվածի համապատասխան մասի համաձայն:

«Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:

213. Դիմողները վիճարկել են նաև այն, որ Սահմանադրական դատարանը և իրավասու այլ մարմինները չեն արձագանքել իրենց որդու մահվան կապակցությամբ վարույթների իրականացման վերաբերյալ իրենց բողոքներին: Նրանք վկայակոչել են Կոնվենցիայի 13-րդ հոդվածը, որի համաձայն:

«Յուրաքանչյուր ոք, ում սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք»:

214. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի կապակցությամբ Կառավարությունը, վկայակոչելով *Perez v. France* վճիռը ([GC], զանգատ թիվ 47287/99, կետ 70, ECHR 2004-I), Մեծ պալատի առջև վիճարկել է, որ քրեական վարույթներին վերաբերող զանգատները չեն համապատասխանում *ratione materiae*-ին: Ի լրումն դրա, նա փաստարկել է, որ դիմումի այն մասը, որը վերաբերում է Մարիբորի բարձր դատարանի 1995 թվականի հոկտեմբերի 5-ի որոշմամբ ավարտված քրեական վարույթներին, Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա պետք է անընդունելի ճանաչվի: Քաղաքացիական վարույթների կապակցությամբ Կառավարությունը, *inter alia* վկայակոչելով *Grzinčič v. Slovenia* վճիռը (զանգատ թիվ 26867/02, ECHR 2007-... (քաղվածքներ)), փաստարկել է, որ դիմողները պետք է կիրառած լինեին 2006 թվականի օրենքի հիման վրա (տե՛ս վերը՝ կետեր 102-04) 2007 թվականի հունվարի 1-ից նրանց հասանելի ընթացակարգը, և որ համապա-

տասխան զանգատը, հետևաբար, ներպետական ընթացակարգերի չսպառնալից հիմքով անընդունելի է: Ապա նա պնդել է, որ վիճարկվող վարույթներն իրականացվել են պատշաճ և հնարավորինս արագ:

215. Դիմողները փաստարկել են, որ 2006 թվականի օրենքը գործողության մեջ մտնելու պահին իրենց բողոքը քննվել է Դատարանում և վիճարկվող քաղաքացիական վարույթներն արդեն մոտ տասներկու տարի գտնվել են ներպետական դատարաններում: 2006 թվականի օգոստոսի 25-ին առաջին ատյանի դատարանը կայացրել է իր վճիռը: 2006 թվականի օրենքով նախատեսված ընթացակարգերի կիրառումը, հետևաբար, իրենց գործով ամբողջովին անարդյունավետ կլիներ:

216. Հաշվի առնելով սույն գործի հանգամանքները և այն դատողությունները, որոնք հանգեցրել են 2-րդ հոդվածի դատավարական կողմի խախտման արձանագրմանը՝ Դատարանը գտնում է, որ անհրաժեշտ չէ սույն գործը քննել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի և 13-րդ հոդվածի լույսի ներքո (տես *mutatis mutandis*, *Öneryıldız*, վերը՝ կետ 160):

IV. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

217. Կոնվենցիայի 41-րդ հոդվածը նախատեսում է.

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

A. Վնասը

218. Պալատից դիմողները խնդրել են իրենց տրամադրել 1.300.000 SIT (մոտավորապես 5.440 EUR)՝ որպես նյութական վնասի փոխհատուցում, որը, նրանց պնդմամբ, կրել են ներպետական վարույթների ընթացքում դատարանների դրսևորած անգործության և Հանրային դատախազի կողմից քրեական վարույթի հարուցումը մերժելու արդյունքում: Նրանք նաև պահանջել են 1.800.000 SIT (մոտավորապես 7.540 EUR)՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

219. Վնասի փոխհատուցման վերաբերյալ դիմողների հայցի կապակցությամբ Պալատը եզրակացրել է.

«150. Դատարանը գտնում է, որ դիմողները չեն ներկայացրել որևէ փաստաթղթային ապացույց՝ ի հիմնավորումն ներպետական վարույթների ընթացքում դատարանների դրսևորած անգործության արդյունքում իրենց կրած ենթադրյալ ծախսերի վերաբերյալ: Ինչ վերաբերում է նյութական փոխհատուցման պահանջի մնացած մասին, ապա Դատարանը արձանագրված խախտման և ենթադրյալ նյութական վնասի միջև որևէ պատճառական կապ չի տեսնում... Հետևաբար, այն մերժում է այս պահանջը:

151. Ինչ վերաբերում է ոչ նյութական վնասին, ապա Դատարանը, արդարության հիման վրա որոշում կայացնելով և հաշվի առնելով նմանատիպ գործերով տրամադրվող գումարների չափը, ինչպես նաև սույն գործով արձանագրված խախտման բնույթը, դիմողներին տրամադրում է նրանց պահանջած ամբողջ գումարը, այն է՝ 7.540 EUR»:

220. Մեծ պալատում իրականացված քննության ժամանակ դիմողները կոչ են արել Դատարանին անփոփոխ թողնել Պալատի եզրահանգումը:

221. Կառավարությունը վիճարկել է դիմողների պահանջը:

222. Մեծ պալատը որևէ պատճառ չի տեսնում Պալատի դատողություններից հրաժարվելու համար: Այն ընդունում է, որ Կոնվենցիայի 2-րդ հոդվածի դատավարական կողմի իմաստով դիմողների իրավունքների խախտման արդյունքում դիմողներին հոգեկան տառապանքի ու ֆրուստրացիայի ձևով դրսևորված ոչ նյութական վնաս է պատճառվել: Արդարության հիման վրա իր գնահատականը տալով՝ այն դիմողներին տրամադրում է այս կետով պահանջված ամբողջ գումարը, այն է՝ 7.540 EUR:

B. Ծախսերը և ծախքերը

223. Ծախսերի և ծախքերի փոխհատուցման կապակցությամբ դիմողների պահանջի վերաբերյալ Պալատի եզրակացության համաձայն՝

«154. Դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ դիմողն իրավասու է իր կրած ծախսերի և ծախքերի փոխհատուցում պահանջել միայն այն դեպքում, երբ հիմնավորվում է, որ դրանք չափի առումով եղել են իրական և անհրաժեշտ: Սույն գործով, հաշվի առնելով իր ունեցած տեղեկությունը և վերոնշյալ չափանիշները, Դատարանը մերժում է ներպետական վարույթների ընթացքում կրած ծախսերի ու ծախքերի փոխհատուցման պահանջը և հիմնավորված է համարում դիմողներին տրամադրել 2.000 EUR՝ որպես Դատարանում կրած ծախսերի ու ծախքերի փոխհատուցում»:

224. Դիմողները պահանջել են 5.000 EUR՝ որպես Մեծ պալատում կրած ծախսերի ու ծախքերի փոխհատուցում: Սակայն նրանց մամրամասնված հայցը կազմել է միայն 2.864 EUR, որը բաշխվել է հետևյալ կերպ: Հիմք ընդունելով փաստաբանների հոնորարների ներպետական սանդղակը՝ դիմողները պահանջել են 1.184 EUR՝ որպես Մեծ պալատում իրականացված գրավոր և բանավոր վարույթներում իրենց ներկայացուցչին վճարված հոնորարի փոխհատուցում: Ի լրումն, նրանք պահանջել են 855 EUR՝ որպես իրենց ներկայացուցչի ճանապարհածախսի և լսմանը մասնակցելու համար կրած կեցության ծախսի, ինչպես նաև 825 EUR՝ որպես իրենց ճանապարհածախսի և լսմանը մասնակցելու համար կրած կեցության ծախսի փոխհատուցում:

225. Կառավարությունը փաստարկել է, որ Մեծ պալատում իրականացված վարույթի համար պահանջված իրավական հոնորարների հաշվարկման նպատակով պետք է կիրառվի Սահմանադրական դատարանում իրականացվող վարույթների համար պահանջվող իրավական հոնորարների սանդղակը: Հետևաբար, իրավական ներկայացուցչության համար կրած բոլոր ծախսերը և ծախքերն ընդհանուր առմամբ կազմել են 1.635 EUR: Կառավարությունը վիճարկել է ճանապարհածախսի և կեցության ծախսի փոխհատուցում պահանջելու՝ դիմողների իրավունքն այն հիմքով, որ լսմանը նրանց մասնակցությունն անհրաժեշտ չի եղել, քանի որ նրանց փաստաբանն է ներկայացրել:

226. Դատարանը հետևողականորեն գտել է, որ ծախսերն ու ծախքերը 41-րդ հոդվածի հիման վրա չեն փոխհատուցվելու, եթե չպարզվի, որ դրանք եղել են իրական և անհրաժեշտ, ինչպես նաև չափի առումով՝ ողջամիտ: Բացի դրանից,

իրավական ծախսերը փոխհատուցվում են միայն այն դեպքում, երբ կապված են արձանագրված խախտման հետ (տես օրինակ, *Beyeler v. Italy* (արդարացի բավարարում) [GC], գանգատ թիվ 33202/96, կետ 27, 2002 թվականի մայիսի 28, և *Sahin v. Germany* [GC], գանգատ թիվ 30943/96, կետ 105, ECHR 2003-VIII):

227. Մեծ պալատը որևէ պատճառ չի տեսնում հրաժարվելու Պալատի այն դատողությունից, որը վերաբերում է Պալատում իրականացված վարույթի ծախսերի ու ծախքերի փոխհատուցման կապակցությամբ տրամադրված գումարին: Ինչ վերաբերում է Մեծ պալատում իրականացված վարույթին, ապա Դատարանը գտնում է, որ դիմողների ներկայացուցչի աշխատանքի, ինչպես նաև լսմանը մասնակցելու համար պահանջվող ծախսերն ու ծախքերը, այն է՝ 2.039 EUR-ն, եղել են իրական ու չափի առումով՝ ողջամիտ: Հաշվի առնելով այն փաստը, որ դատական լսման ժամանակ դիմողներին ներկայացրել է իրենց փաստաբանը, ինչպես նաև հաշվի առնելով գործի բնույթը, Դատարանը գտնում է, որ դիմողների կողմից՝ իրենց մասնակցության համար կրած ծախսերն անհրաժեշտ չեն եղել և, հետևաբար, մերժում է պահանջի այս մասը:

228. Հետևաբար, Դատարանը դիմողներին տրամադրում է ընդհանուր առմամբ 4.039 EUR՝ որպես ծախսերի և ծախքերի փոխհատուցում:

C. Տուգանային տոկոսները

229. Դատարանը նպատակահարմար է գտնում, որպեսզի տուգանային տոկոսը գանձվի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած փոխառության միջին տոկոսադրույթի հիման վրա՝ հավելած երեք տոկոս:

ՎԵՐՈՐԳՅԱԼԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ԴԱՏԱՐԱՆԸ

1. Տասնհինգ ծայնով ընդդեմ երկուսի *մերժում է ratione temporis* իրավասության բացակայության վերաբերյալ Կառավարության նախնական առարկությունները:

2. Միաձայն *միանում է* Կառավարության նախնական առարկությունների *այն հանգամանքներին*, որոնք վերաբերում են ներպետական քաղաքացիական վարույթների սպառնանք՝ կապված Կոնվենցիայի 2-րդ հոդվածի դատավարական կողմի հետ, և *մերժում է* այն:

3. Միաձայն *մերժում է* Կառավարության նախնական առարկությունը՝ կապված այլ ընթացակարգերի չսպառնան հետ:

4. Հիսուն ծայնով ընդդեմ երկուսի հարաբերակցությամբ *վճռում է*, որ առկա է եղել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի դատավարական կողմի խախտում:

5. Հիսուն ծայնով ընդդեմ երկուսի հարաբերակցությամբ *վճռում է*, որ անհրաժեշտություն չկա առանձին քննել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի (քաղաքացիական և քրեական վարույթների տևողությունն ու քրեական վարույթների արդարացիությունը) և 13-րդ հոդվածի հիման վրա ներկայացված գանգատները:

6. Տասնվեց ծայնով ընդդեմ մեկի
վճռում է

(a) որ երեք ամսվա ընթացքում պատասխանող պետությունը պետք է դիմողներին վճարի հետևյալ գումարները:

(i) 7,540 EUR (յոթ հազար հինգ հարյուր քառասուն եվրո), գումարած ցանկացած հարկ, որը կարող է գանձվել ոչ նյութական վնասի կապակցությամբ,
(ii) 4,039 EUR (չորս հազար երեսունինը եվրո), գումարած ցանկացած հարկ, որը կարող է գանձվել դիմողներից դատական ծախսերի ու ծախքերի կապակցությամբ,

(b) որ վճարումը վերոհիշյալ եռամսյա ժամկետը լրանալուց հետո կատարելու դեպքում այդ ժամանակահատվածի համար պետք է վճարվի տուգանային տոկոս, որը հավասար է չկատարված պարտավորության ժամանակահատվածում եվրոպական կենտրոնական բանկի սահմանած փոխառության միջին տոկոսադրույքին՝ հավելած երեք տոկոս,

7. Միաձայն *մերժում է* արդարացի բավարարման հետ կապված դիմողների պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով և ֆրանսերենով և Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն գրավոր հրապարակվել Ստրասբուրգի Մարդու իրավունքների շենքում՝ 2009 թվականի ապրիլի 9-ին:

Կոնվենցիայի 45-րդ հոդվածի 2-րդ մասի և Դատարանի կանոնակարգի 74-րդ կանոնի 2-րդ մասի հիման վրա սույն վճռին կցվում են.

(a) դատավոր Լորենզենի հատուկ կարծիքը.

(b) դատավոր Ջուպանցիցիի հատուկ կարծիքը.

(c) դատավորներ Զագրեբելսկիի, Ռոզակիսի, Կաբրալ Բարոտոյի, Սպիեկմանի և Սաջոյի միացյալ հատուկ կարծիքը.

d) դատավորներ Բրաթգայի և Թյուրմենի միացյալ հատուկ կարծիքը:

ԴԱՏԱՎՈՐ ԼՈՐԵՆԶԵՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ

Ես մեծամասնության հետ մեկտեղ քվեարկել եմ հոգուտ 2-րդ հոդվածի դատավարական կողմի խախտումն արձանագրելուն: Սակայն ես չեմ կարող լիովին համաձայնել Դատարանի *ratione temporis* իրավագործության վերաբերյալ մեծամասնության պատճառաբանությանը:

Ինչպես նշված է վճռի 148-152-րդ կետերում, Դատարանը միշտ չէ, որ իր նախադեպերում հետևողական է եղել, երբ որոշում է կայացրել Կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածների դատավարական պահանջների խախտումը քննելու իրավագործության առկայության վերաբերյալ այն դեպքերում, երբ այս հոդվածների նյութաիրավական կողմին վերաբերող փաստերը գտնվել են Դատարանի իրավասության ժամանակահատվածից դուրս, անգամ եթե հետագա վարույթները զոնե մասամբ այդ ժամանակահատվածի ընթացքում են տեղի ունեցել: *Blečić v. Croatia* ([GC], գանգատ թիվ 59532/00, ECHR 2006-III) գործով Դատարանը սահմանել է ընդհանուր կանոններ, որոնք պետք է կիրառվեն իր *ratione temporis* իրավագործության կապակցությամբ, սակայն առանձին հարցադրում չի արել՝ կապված վերոնշյալ իրավիճակում դրա՝ 2-րդ և 3-րդ հոդվածների իմաստով ունեցած ժամանակային իրավագործության հետ:

Վճռի 153–162-րդ կետերում ամրագրված պատճառաբանությանը ես կարող եմ համաձայնել, որ Դատարանը որոշակի հանգամանքներում ունի իր ժամանակային իրավասությունից դուրս տեղի ունեցած մահերի վերաբերյալ դատավարական վեճերը քննելու՝ *ratione temporis* իրավագործություն, սակայն իրավական որոշակիությունը հասկանալի պատճառով նման իրավագործությունը չի կարող ժամանակային սահմանափակում չունենալ: Այս կապակցությամբ ես լիովին համաձայն եմ վճռի 161-րդ կետում առկա դատողությանը: Սակայն ես չեմ գտնում, որ մեծամասնության կողմից 163-րդ կետում սահմանված չափանիշները համապատասխանում են այս պահանջին: Ուստի դյուրին չէ հասկանալ, թե ինչ է նշանակում մահվան և պատասխանող պետության համար Կոնվենցիան ուժի մեջ մտնելու միջև առկա «իրական կապ»-ի վերաբերյալ պահանջը, որի հետ կապվում է 2-րդ հոդվածով սահմանված դատավարական պարտականության առաջացումը: Բացի դրանից, այն փաստը, որ մեծամասնությունը կարծես պատրաստ է ընդունել «Կոնվենցիայի երաշխիքների և հիմնարար արժեքների իրական և արդյունավետ պաշտպանության ապահովման անհրաժեշտության վրա հիմնված» նման կապը, կարծես հիմնավորում է այն, որ իրավագործության սահմանափակումները դժվար է որոշել, եթե դրանք ընդհանրապես առկա են: Ես գտնում եմ, որ Դատարանի ժամանակային իրավասության սահմանման նման անորոշ և հեռահար եղանակը չի համապատասխանում իրավական որոշակիությունն ապահովելու՝ հռչակված մտադրությանը:

Իմ կարծիքով, պետք է հստակ ժամանակային կապ լինի, մի կողմից, տեղի ունեցած դեպքի՝ մահվան, վատ վերաբերմունքի ու այլնի և քննություն իրականացնելու պարտականության, իսկ, մյուս կողմից պատասխանող պետության համար Կոնվենցիան ուժի մեջ մտնելու միջև: Սա վերաբերում է այն գործերին, որոնցով դեպքը տեղի է ունենում և քննությունն սկսվում է նախքան Կոնվենցիան ուժի մեջ մտնելը, սակայն այդ քննության մեծ մասն իրականացվում է միայն այդ ժամկետից հետո: Նմանապես, երբ դեպքը տեղի է ունենում կամ բացահայտվում է քննարկվող ժամկետին այնքան մոտ ժամանակահատվածում, որ անհնարին է քննություն իրականացնել մինչ այդ ժամկետը: Մյուս կողմից՝ երբ չնայած դեպքի վերաբերյալ տեղեկությունների առկայությանը, որևէ քննություն չի իրականացվում կամ երբ քննությունն ավարտվում է նախքան վճռորոշ ժամկետը, ես գտնում եմ, որ Դատարանը պետք է իրավագործություն ունենա միայն այն դեպքերում, երբ քննչական գործողություններ կատարելու պարտականությունը ծագում է համապատասխանաբար նոր ապացույցի կամ տեղեկության առկայության հիման վրա (տես *mutatis mutandis*, *Brecknell v. the United Kingdom*, գանգատ թիվ 2457/04, կետեր 70-71, 2007 թվականի նոյեմբերի 27):

Սույն գործով դիմողների որդու մահը տեղի է ունեցել Սլովենիայի համար Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց մեկ տարուց քիչ ավելի առաջ և, նախնական քննությունից բացի, բոլոր քրեական և քաղաքացիական վարույթները հարուցվել և իրականացվել են այդ ժամկետից հետո (տես վճռի 165-րդ կետը): Այս հանգամանքներում ես համաձայն եմ, որ համապատասխան դեպքերի և Կոնվենցիան ուժի մեջ մտնելու միջև առկա է բավարար ժամանակային կապ արձանագրելու համար, որ Դատարանն ունի *ratione temporis* իրավագործություն քննելու 2-րդ հոդվածի հիման վրա դիմողների ներկայացրած դատավարական գանգատը: Ըստ

վճռում առկա պատճառաբանությունների, ես համաձայն եմ, որ տեղի է ունեցել այդ հոդվածի խախտում:

ԴԱՏԱՎՈՐ ԶՈՒՊԱՆՑԻՑԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ

Ես համաձայն եմ սույն գործի ելքին, սակայն օգտակար եմ համարում կատարել հետևյալ ավելացումը:

Moldovan and Others and Rostas and Others v. Romania վճռում ((dec.), գանգատներ թիվ 41138/98 և 64320/01, 2001 թվականի մարտի 13), առկա քննադատական ձևակերպումը հետևյալն է.

«Սույն գործով Դատարանը նշում է, որ սպանությունը տեղի է ունեցել 1993 թվականի սեպտեմբերին, մինչև Ռումինիայի համար Կոնվենցիան ուժի մեջ մտնելը, այն է՝ 1994 թվականի հունիսի 20-ը: Սակայն միջազգային իրավունքի հանրաճանաչ կանոններին համապատասխան՝ Կոնվենցիան պայմանավորվող յուրաքանչյուր պետության նկատմամբ կիրառվում է բացառապես այն փաստերի կապակցությամբ, որոնք մախրողել են այդ պետության համար Կոնվենցիան ուժի մեջ մտնելուն: Շարունակվող իրավիճակի հնարավոր առկայության դեպքում յուրաքանչյուր գործի առանձնահատուկ հանգամանքների լույսի ներքո պետք է որոշում կայացվի, եթե անհրաժեշտ է՝ *ex officio*, (որ.՝ գանգատներ թիվ 8560/79 և 8613/79 (միացված), Dec. 3.7.79, D.R. 16, էջ 209): Դատարանը, հետևաբար, պետք է ճշտի, թե արդյոք ունի սույն գանգատը քննելու՝ *ratione temporis* իրավագործություն» (ընդգծումն իմն է):

Պարզ է, որ *Blečić v. Croatia* վճռում ([GC], գանգատ թիվ 59532/00, կետ 75, ECHR 2006-III) Մեծ պալատը փորձել է որևէ կերպ հաստատել *Moldovan*-ի վճիռը՝ ներառելով այն համապատասխան մախադեպային իրավունքի ամփոփման մեջ: Հետագա գործերով, ինչպիսին է *Kholodov and Kholodova v. Russia* ((dec.), գանգատ թիվ 30651/05, 2006 թվականի սեպտեմբերի 14), գործածվել է *Moldovan*-ի և *Blečić*-ի վճիռներում արտահայտված մոտեցումները համակարգող ձևակերպում.

«Հանրահայտ է, որ պրն Դմիտրի Խոլոդով մահվան կապակցությամբ իրականացված քննությունը և ենթադրյալ հանցագործների նկատմամբ դատական քննությունը Ռուսաստանի Դաշնության կողմից Կոնվենցիան վավերացնելուց դեռ երկար ժամանակ հետո շարունակվել է: Սլնուամենայնիվ, անհրաժեշտ է որոշել ենթադրյալ խախտման հանգեցրած փաստերի կապակցությամբ Դատարանի ժամանակային իրավասությունը: Սյդ խախտման փոխհատուցմանն ուղղված ընթացակարգեր հետազայուն չորամադրերն չի կարող «տեղավորել» այն դրա ժամանակային իրավասության սահմանների մեջ (տես *Blečić v. Croatia* [GC], գանգատ թիվ 59532/00, կետ 77, ECHR 2006-...):

Քանի որ *ratione temporis* սահմանափակված է 1994 թվականի դեպքերի վերաբերյալ դիմողների հավաստումները քննելու՝ Դատարանի իրավասությունը, հետևաբար, այն չի կարող քննության առնել այն, թե արդյոք այս դեպքերը հանգեցրել են Ռուսաստանի իշխանությունների կողմից սույն գործով արդյունավետ քննություն իրականացնելու պարտականության առաջացմանը (տես *Moldovan and Others v. Romania* (dec.), գանգատ թիվ 41138/98, 2001 թվականի մարտի 13):

Նմանապես, պատասխանատու անձանց չբացահայտելու և չպատժելու վերաբերյալ ենթադրությունները չի կարելի ասել, որ հանգեցրել են շարունակվող իրավիճակի առաջացմանը, քանի որ [առաջին հերթին] Դատարանը չի կարող եզրակացնել, որ նման պարտականությունը գոյություն է ունեցել (տես *Voroshilov v. Russia* (dec.), գանգատ թիվ 21501/02, 2005 թվականի դեկտեմբերի 8):

Պատարանը կրկնում է, որ Կոնվենցիայի 13-րդ հոդվածը երաշխավորում է ներպետական մակարդակում իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի հասանելիություն, եթե առկա է Կոնվենցիայի նյութաիրավական դրույթի խախտմանը վերաբերող «վիճարկելի հայց» (տես *Boyle and Rice v. the United Kingdom*, 1988 թվականի ապրիլի 27-ի վճիռը, Series A no. 131, կետ 52):

Քանի որ Պատարանը գտել է, որ Կոնվենցիայի 2-րդ հոդվածի վերաբերյալ դիմողների զանգատը [որա հիմքում դրված փաստերը] գտնվում է [են] իր *ratione temporis* իրավագոտության սահմաններից դուրս, այն իրավասու չէ քննել, թե արդյոք դիմողները Կոնվենցիայի նյութաիրավական իրավունքի խախտման վերաբերյալ ներկայացրել են «վիճարկելի հայց»: Հետևաբար, 13-րդ հոդվածի հիման վրա նրանց ներկայացրած փաստարկները գտնվում են Պատարանի *ratione temporis* իրավագործյունից դուրս (տես *Meriakri v. Moldova* (dec.), զանգատ թիվ 53487/99, 2001 թվականի հունվարի 16): Դրանից հետևում է, որ դիմումի այս մասը 35-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով *ratione temporis* չի համապատասխանում Կոնվենցիայի դրույթների և 35-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով պետք է մերժվի» (ընդգծումն իմն է):

Kholodov-ի վճիռը տրամաբանությունը հիմնված է շինծու նախապայմանի վրա: Այն գրեթե հստակ, սակայն որոշակի առումով ոչ հստակորեն նշում է՝ քանի որ գործի փաստական հանգամանքները Պատարանի ժամանակային իրավասությունից դուրս են գտնվում, այս փաստերի կապակցությամբ հարուցված քրեական վարույթները ևս Պատարանի ժամանակային իրավասությունից դուրս են գտնվում:

Այնուամենայնիվ, սա վերջին ատյանի դատարանի համար հանդիսանում է փաստերը չ(վերա)զնահատելու, այսինքն՝ դա ազգային դատարանների հայեցողությանը թողնելու կանոն: Ուստի, պնդելու համար, որ մեր Պատարանը զրկված է ածանցյալ վարույթները սահմանափակելու հնարավորությունից, քանի որ զրկված է փաստերի հետազոտման հնարավորությունից, որը նա երբևէ չի անում, իրականում, լավագույն դեպքում ձևականություն է, իսկ վատագույն դեպքում անհեթեթություն:

Հետևաբար, առանցքային հարցը հանդիսանում է հետևյալ արտահայտության իմաստի բացահայտումը՝ «այդ կողմի համար ուժի մեջ մտնելուն հաջորդող փաստերը»: Մասնավորապես, կենտրոնական հարցը «փաստեր» բառի մեկնաբանությունն է: Այս հարցի (մեկնաբանության) առավել բարդացված մոտեցումը Հոբեսի և Ալֆ Ռոսի նման կամրապնդի այն մոտեցումը, որ նորմից դուրս «փաստեր» չկան, որ փաստերը *per se* գոյություն չունեն:

Streletz, Kessler and Krenz v. Germany վճռում ([GC], զանգատներ թիվ 34044/96, 35532/97 և 44801/98, ECHR 2001-II) մենք ունեինք նույն իրավիճակը, որտեղ «փաստերի» և նորմերի միաժամանակյա և հստակ գոյությունը նախքան (իրավական) ռեժիմի փոփոխությունը բավարար չէր, քանի որ վերջիններս չէին կիրառվում:

Առնվազն՝ փաստերն իրավական առումով նշանակություն չունեն, քանի դեռ (1) կիրառելի նորմը նախապես գոյություն ունի և (2) նորմը կիրառվում է:

Moldovan-ի Բաժանմունքի որոշման հետ կապված խնդիրը պարզապես այն է, որ վերջինս ելնում է այն պարզամիտ նախապայմանից, որ փաստերը և օրենքները (*questiones facti, questiones juris*) կարող են գոյություն ունենալ առանձին, մեկը մյուսից անկախ: Իրավամբ, ճշմարիտ է, որ դեպքը (սպանությունը) կարող է տեղի ունեցած լինել որոշակի կոնկրետ ժամանակահատվածում, այն է նախքան

Կոնվենցիան ուժի մեջ մտնելը: Սակայն, եթե այդ դեպքը («փաստերը») չեն արձանագրվել իրավական համակարգի կողմից, դրա «իրավական արձագանքները» երբևէ չեն կարող հասնել, օրինակ, Ստրասբուրգ:

Ինչ վերաբերում է *ratione temporis* իրավագործությանը, ապա, զարմանալիորեն, առկա են դեպքի և վարույթների մի քանի համադրություն, որոնք ներառում են տարբերակների սպեկտրը: (1) Երկուստեք՝ դեպքը և հետագա վարույթները կարող են տեղի ունեցած լինել քննարկվող պետության համար Կոնվենցիան ուժի մեջ մտնելուն նախորդող ժամանակահատվածում: Պարզ ասած, եթե անգամ վարույթներն իրականացվել են 2-րդ կամ 3-րդ հոդվածների դատավարական կողմի ենթադրյալ խախտումների կապակցությամբ, ապա, միևնույն է, գործը *ad acta* վերաբերում է նախքան Կոնվենցիան ուժի մեջ մտնելու ժամանակահատվածին: (2) Երկուստեք՝ դեպքը և հետագա վարույթները կարող են տեղի ունեցած լինել քննարկվող պետության համար Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո, նման դեպքում ևս *ratione temporis* խնդիրն առկա չէ: (3) Սակայն, եթե դեպքը տեղի է ունեցել նախքան Կոնվենցիան ուժի մեջ մտնելը, իսկ վարույթներն իրականացվել են այդ ժամկետից հետո, ապա հնարավոր է հետևյալ իրավիճակների առկայությունը. այսպես, *Kholodov*-ի գործի կապակցությամբ քննությունն առավելապես իրականացվել էր Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո, մինչդեռ *Blečić*-ի գործով՝ հակառակն էր:

Այստեղ անհրաժեշտ է նշել, որ *Blečić*-ի վճռի 85-րդ կետում Դատարանը նշել է, որ.

«...Դիմողի իրավունքների ենթադրյալ խախտումը թույլ է տրվել Գերագույն դատարանի՝ 1996 թվականի փետրվարի 15-ի դատավճռով: Սահմանադրական դատարանի՝ հետագայում կայացված որոշման արդյունքում է միայն ընդունվել, որ այդ դատավճռով (վերջինս համոզիսանում է վերջնական ակտ, որն ինքնին կարող է խախտել դիմողի իրավունքները) ենթադրաբար կատարված խախտումն առկա է: Այդ որոշումը, այս պայմաններում, խախտում չի առաջացրել: Գերագույն դատարանի դատավճռի կայացման ժամկետի հիման վրա խախտումը Դատարանի ժամանակային իրավասությունից դուրս է գտնվում»:

Սրանից բխող հստակ հետևությունն այն է, որ թեև *Blečić*-ի գործով երկուստեք՝ դեպքը և ընթացակարգերի մեծ մասը տեղի են ունեցել Խորվաթիայի համար Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց առաջ, սակայն գործը Եվրոպական դատարանի ժամանակային իրավասության սահմանների մեջ տեղավորելու համար բավական էր այն հանգամանքը, որ Խորվաթիայի գերագույն դատարանի վերջնական դատավճիռը կայացվել էր Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո: Այլ կերպ ասած, *Moldovan*-ի և *Kholodov*-ի վճիռները, իրավամբ, չեն համապատասխանում *Blečić*-ի վճռին:

Բացի դրանից, մարդու իրավունքների նկատմամբ Դատարանի լրացուցիչ վերահսկողությունը, անգամ 41-րդ հոդվածի իմաստով, սկսում է գործել միայն այն բանից հետո, երբ ներպետական ընթացակարգերն անարդյունավետ են: Սլովենիայի դեմ հարուցված սույն գործով Պայմանավորվող կողմը չի կարող պարտավորվել կանխելու բժշկական անփութությունը և դրա հետևանքները: *Ultra posse nemo tenetur* – Ոչ ոք պարտավոր չէ իրագործել անհնարինը:

Պետությունից, սակայն, կարելի է ակնկալել, որ այն իր սահմանված ընթացակարգերի միջոցով համապատասխան վճռորոշ արձագանք կտա: Բոլոր գործե-

րով, օրինակ, *Selmouni v. France* ([GC], գանգատ թիվ 25803/94, ECHR 1999-V) և *Jalloh v. Germany* ([GC], գանգատ թիվ 54810/00, ECHR 2006-...) գործերով, որոնցում Ղատարանն ուղղակիորեն չի ընդգրկվել սպանության, խոշտանգման և այլնի մեջ, քննարկման առարկան բացառապես վերջիններիս կապակցությամբ իրականացված քննչական, դատախազական և դատական ընթացակարգերն են, որոնք կատարվել են մեղսագրվող սպանությունից կամ խոշտանգումից հետո: Հաջորդը հորիզոնական ազդեցությունն է, որը հայտնի է որպես *Drittwirkung*:

Դրանից հետևում է, որ 13-րդ հոդվածի հետ փոխկապակցված 2-րդ և 3-րդ հոդվածների՝ միակ հմարավոր, այսպես կոչված, «դատավարական կողմը», որպես կանոն, հանդիսանում են «այդ կողմի համար Կոնվենցիան ուժի մեջ մտնելուն հաջորդող փաստերը» (տես վերը՝ *Moldovan*-ի վճիռը): Այս առումով, կարելի է ասել, որ *Moldovan*-ի, *Kholodov*-ի և նման այլ վճիռների «տրամաբանությունը» *ilihi*-ի 159-րդ, 162-րդ և 163-րդ կետերում առկա դատողությունների հիման վրա վերացվել է: Համանման կերպով, *Blečić*-ի ազդեցությունը, կարծես, նեղացվել է և արդյունքում Ղատարանը միայն այն եզրակացությանն է հանգել, որ Սահմանադրական դատարանի կողմից բողոքը վարույթ չընդունելը բավարար չէ գործը եվրոպական դատարանի ժամանակային իրավասության սահմանների մեջ տեղավորելու համար:

ԴԱՏԱՎՈՐ ԶԱԳՐԵԲԵԼՍԿԻԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ, ՈՐԻՆ ՄԻԱՑԵԼ ԵՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ ՈՌԶԱԿԻՍԸ, ԿԱՐԲԱԼ ԲԱՐՈՏՈՆ, ՍՊԻԵԼՄԱՆԸ ԵՎ ՍԱՋՈՆ

Մեծամասնության նման ես գտնում եմ, որ նախքան պատասխանող պետության համար Կոնվենցիան ուժի մեջ մտնելը տեղի ունեցած մահվան վերաբերյալ սույն գործով տեղի է ունեցել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի դատավարական կողմի խախտում: Ես համաձայն եմ վճռի 153-րդ և հետագա կետերում առկա պատճառաբանությանը, որը Ղատարանին իրավասություն է տալիս եզրակացնելու, որ պետությունը պարտավոր է քննություն սկսել և իրականացնել, եթե անգամ մահը տեղի է ունեցել նախքան սահմանային ժամկետը (տես 159-րդ կետը): Այս պարտականությունը «սահմանափակում է պետությանն այն ժամանակահատվածի ընթացքում, երբ ողջամտորեն կարող էր ակնկալվել, որ իշխանությունները կարող են մահվան հանգամանքների վրա լույս սփռելու և դրա համար պատասխանատու անձանց բացահայտելու նպատակով միջոցներ ձեռնարկել» (տես 157-րդ կետը):

Օրենքով նախատեսված սահմանափակման առարկա չհանդիսացող հանցագործություններից բացի, այն դեպքերը, որոնք տեղի են ունեցել վաղ անցյալում, անհրաժեշտաբար չեն հանգեցնում վերոնշյալ սկզբունքի կիրառմանը: Երբ Կոնվենցիան պետության համար ուժի մեջ է մտնում, հավանական է, որ այլևս չեն լինի տուժողներ, ովքեր կկարողանան պահանջել քննությանը ներգրավվելու կամ քննության բացակայության կամ արդյունավետության վերաբերյալ Ղատարան գանգատ ներկայացնելու լիազորություն տալ իրենց: Համեմայնդեպս, եթե սահմանափակման ժամկետն անցած լինելու պատճառով քրեական իրավունքն այլևս կիրառելի չէ, կամ եթե ապացույցի կամ վկաների անհայտացման պատճառով քննությունը ոչ արդյունավետ է, ապա նման պարտականության սահմանումը

որևէ կերպ չի կարող հիմնավորվել: Սակայն սա Դատարանում քննվող գործի հանգամանքներին վերաբերող հարց է, մինչդեռ սույն վճռում քննարկման առարկա դարձած հարցը վերաբերում էր Դատարանի *ratione temporis* իրավագործության որոշմանը, և, հետևաբար, դիմումի ընդունելիությունը:

Չմայած այս հանգամանքին, մեծամասնությունն անհրաժեշտ է համարել նշել, որ «հաշվի առնելով իրավական որոշակիության սկզբունքը, Դատարանի ժամանակային իրավասությունը՝ կապված սահմանային ժամկետից առաջ տեղի ունեցած մահերի կապակցությամբ 2-րդ հոդվածով նախատեսված դատավարական պարտականության կատարման հետ, անսահմանափակ չէ» (տես վճռի 161-րդ կետը): Իմ կարծիքով, Դատարանը կոնկրետ գործով պետության դատավարական պարտականության բացակայության մասին որոշում կայացնելիս, իհարկե, կարող է առաջնորդվել իրավական կամ փաստական բնույթի սահմանափակումներով: Սակայն, ինչպես ես արդեն նշել եմ, սա կասկածի տակ չի դնի Դատարանի *ratione temporis* իրավագործությունը, սակայն կբացառի 2-րդ հոդվածի դատավարական կողմի խախտումը:

Իմ կարծիքով, 2-րդ հոդվածի իմաստով դատավարական և նյութական պարտականություններն «առանձնացնելու» վրա դրված «սահմանափակումների» հասկացության մեկնաբանությունը (որը տալու անհրաժեշտություն սույն գործով չկար), թուլացրել է Դատարանի պատճառաբանությունները և Մեծ պալատի կողմից սահմանված իրավական սկզբունքի կիրառումը դարձրել է բարդ, վիճահարույց և անկանխատեսելի: Սա հատկապես ճշմարիտ և անհանգստացնող է, երբ դիտարկում ես «սահմանափակումների»՝ 163-րդ հոդվածում առկա անորոշ մեկնաբանության լույսի ներքո: Դատարանը յուրաքանչյուր գործով ստիպված կլինի բարդ և խնդրահարույց զնահատում իրականացնել, որը դժվար կլինի տարբերակել գործի հանգամանքներից: «Իրավական որոշակիության» վրա (որը Դատարանն իրավամբ վկայակոչել է) սրա ունեցած ազդեցությունը, համարձակվում եմ ասել, երկուստեք՝ ակնհայտ է և կործանարար:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ ԲՐԱԹՁԱՅԻ ԵՎ ԹՅՈՒՄՆԵՒ ՄԻԱՑՅԱԼ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ

1. Ցավոք, մենք չենք կարող համաձայնել Մեծ պալատի մեծամասնության հետ այն առումով, որ Դատարանը *ratione temporis* իրավասություն ունի քննելու դիմողների՝ իրենց որդու մահվան փաստից բխող հայցը ներպետական իշխանությունների կողմից Կոնվենցիայի 2-րդ հոդվածով սահմանված պատշաճ ջանասիրությամբ չքննելու վերաբերյալ գանգատը: Մեր կարծիքով, Դատարանի իրավագործության վերաբերյալ Կառավարության նախնական առարկությունը հիմնավոր է և պետք է հաստատվեր: Արդյունքում, մենք դեմ ենք քվեարկել մեծամասնության այն կարծիքին, որ տեղի է ունեցել 2-րդ հոդվածի դատավարական կողմի խախտում:

2. *Blečić*-ի վերաբերյալ վճռում (*Blečić v. Croatia* [GC], գանգատ թիվ 59532/00, կետ 70, ECHR 2006-III), Դատարանը կրկնել է, որ միջազգային իրավունքի ընդհանուր կանոնների համաձայն՝ Կոնվենցիայի դրույթները Պայմանավորվող կողմի համար որևէ սահմանափակումներ չեն պարունակում՝ կապված 350

այն գործողության կամ փաստի հետ, որը տեղի է ունեցել նախքան այդ կողմի համար Կոնվենցիան ուժի մեջ մտնելը: Այս կանոնի կիրառման արդյունքում է Պալատն անընդունելիության հիմքով մերժել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի նյութաիրավական կողմի վերաբերյալ դիմողների գանգատը, Պալատը, նշելով, որ դիմողների որդին հիվանդանոցում մահացել է 1993 թվականի մայիսի 19-ին և որ նրանց գանգատն էականորեն հիմնված է այն փաստերի վրա, որոնք տեղի են ունեցել և ավարտվել նախքան վավերացումը (1994 թվականի հունիսի 28), եզրակացություն է արել այն մասին, որ գանգատը *ratione temporis* չի համապատասխանում Կոնվենցիայի դրույթներին (տե՛ս Պալատի վճռի 90-րդ կետը):

3. *Blečić*-ի գործով Դատարանը գտել է, որ Դատարանի ժամանակային իրավասությունը պետք է որոշվի «այն փաստերի կապակցությամբ, որոնք հանգեցրել են կոնվենցիոն իրավունքի ենթադրյալ խախտման առաջացմանը» և որ եթե նման խախտումը տեղի է ունեցել նախքան վավերացումը, ապա հետագայում այդ խախտման համար փոխհատուցում տալուն ուղղված իրավական պաշտպանության արդյունավետ միջոց չտրամադրելը չի կարող հանգեցնել դրա՝ Դատարանի ժամանակային իրավասության մեջ «տեղավորելուն» (կետ 77): Ապա Դատարանն անդրադառնալով այն իրավիճակին, երբ խախտումը նախորդել է վավերացմանը, իսկ իրավական պաշտպանության արդյունավետ միջոց չտրամադրելը հաջորդել է վավերացմանը, նշել է.

«...Դատարանի ժամանակային իրավասությունը որոշելիս վերջին գործողության ժամկետի պահպանումը կհանգեցնի այդ պետության համար Կոնվենցիային պարտադիր ուժ տալուն՝ կապված մի փաստի հետ, որ տեղի է ունեցել նախքան այդ պետության համար Կոնվենցիան ուժի մեջ մտնելը: Սակայն սա կհակասի միջազգային պայմանագրերին հետադարձ ուժ տալու անթույլատրելիության վերաբերյալ ընդհանուր կանոններին» (կետ 79):

4. Սույն գործով բարձրացված հարցը տարբերվում է *Blečić*-ի գործով բարձրացված հարցից: Այստեղ, ի տարբերություն նշված գործի, գանգատը վերաբերում է ոչ թե նախքան վավերացումը տեղի ունեցած կոնվենցիոն իրավունքի «խախտման» կապակցությամբ վավերացման ժամկետից հետո իրավական պաշտպանության արդյունավետ միջոց չտրամադրելուն, այլ նախքան վավերացման ժամկետը տեղի ունեցած մահվան կապակցությամբ քննություն իրականացնելու վերաբերյալ պետության՝ 2-րդ հոդվածով սահմանված պարտականության ենթադրյալ խախտմանը, որը տեղի է ունեցել վավերացման ժամկետից հետո: Այնուամենայնիվ, *Blečić*-ի գործով սահմանված սկզբունքները, մեր կարծիքով, որոշակի նշանակություն ունեն սույն գործի համար: 2-րդ հոդվածով Պետության վրա դրված դատավարական պարտականությունը ծագում է այն պահից սկսած, երբ պետական ծառայողի «ձեռքբերով» կամ, ինչպես սույն գործում էր, երբ պետության համապատասխան իշխանությունները վստահելի հայտարարությամբ տեղեկացվել են, որ մահը վրա է հասել հիվանդանոցի աշխատակիցների կողմից թույլ տրված բժշկական անփութության հետևանքով: Թեև այս պարտականությունն ինքնուրույն բնույթ ունի այն առումով, որ հիմնված չէ 2-րդ հոդվածի նյութաիրավական խախտման առկայության վրա, սակայն այն հանդիսանում է պարտականություն, որը ոչ միայն ծագում է մահվան փաստից, այլև ամբողջությամբ կապված է դրա հետ: Երբ մահը տեղի ունեցած է լինում նախքան վավերացումը, ինչպես սույն գործով էր, պետության վրա 2-րդ հոդվածի նյութաիրավական կամ դա-

տավարական կողմերի իմաստով որևէ կոնվենցիոն պարտականություն չի դրվում, և Դատարանը ժամանակային իրավասություն չունի քննելու 2-րդ հոդվածի՝ կողմերից որևէ մեկի խախտման վերաբերյալ բողոքը: Հակառակ որոշման կայացումը, *Blečić*-ի գործի նման, կհանգեցնի այդ պետության համար Կոնվենցիային պարտադիր ուժ տալուն՝ կապված մի փաստի կամ իրավիճակի հետ (մահը և մահվան կապակցությամբ քննություն չիրականացնելը), որ տեղի է ունեցել նախքան Կոնվենցիան ուժի մեջ մտնելը:

5. Այս սկզբունքը սահմանվել է Դատարանի՝ *Moldovan and Others* և *Rostas and Others v. Romania* գործերով կայացված վճիռներում ((dec.), զանգատներ թիվ 41138/98 և 64320/01, 2001 թվականի մարտի 13), որոնցում դիմողները *inter alia* վիճարկել էին 2-րդ հոդվածի դատավարական կողմերի խախտումները՝ կապված 1993 թվականի սեպտեմբերին, այսինքն՝ նախքան Ռումինիայի համար Կոնվենցիան ուժի մեջ մտնելը, այն է՝ 1994 թվականի հունիսի 20-ը տեղի ունեցած սպանությունների հետ: Նրանք 3-րդ հոդվածի հիման վրա վիճարկել են նաև այն, որ իշխանությունները պատշաճ կերպով չեն քննել «Պոգրոմ»-ի ընթացքում, նույն ժամանակահատվածում Ռոմա ռեզիդենտների վրա հարձակմանը ոստիկանների մասնակցության հարցը և որ նրանց գույքի և իրերի ոչնչացումը հանգեցրել է այդ հոդվածին հակասող վերաբերմունքի առաջացմանը:

Մեծ պալատի համապատասխան ուղղումներով վկայակոչված *Blečić*-ի գործով կայացված վճռում Դատարանը միաձայն մերժել է երկու հոդվածներով ներկայացված գանգատը, քանի որ այն իր *ratione temporis* իրավագործության սահմաններից դուրս է գտնվում: Ինչպես նախորդ գանգատում, Դատարանը նշել է, որ.

«(...) այն ենթադրությունը, որ Ռումինիայի իշխանությունները Կոնվենցիայի իմաստով պարտավոր են դիմողների հարազատների մահվան կապակցությամբ արդյունավետ քննություն իրականացնել՝ նպատակ ունենալով բացահայտել և պատժել պատասխանատու բոլոր անձանց, բխում է վերոնշյալ սպանություններից, որոնց համապատասխանությունը Կոնվենցիային Դատարանը չի կարող ստուգել: Հետևաբար, զանգատը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթների իմաստով *ratione temporis* անընդունելի է»:

Դատարանը նույն եզրակացությանն է հանգել 3-րդ հոդվածի վերաբերյալ զանգատի կապակցությամբ՝ գտնելով, որ Դատարանը չի կարող քննել նախքան վավերացումը տեղի ունեցած վեճի կապակցությամբ արդյունավետ քննություն իրականացնելու պարտականության առկայության, ինչպես նաև Կոնվենցիային վերջինիս համապատասխանության հարցերը:

6. Դատարանը նույնատիպ արդյունքի է հանգել *Voroshilov v. Russia* գործով ((dec.), զանգատ թիվ 21501/02, 2005 թվականի դեկտեմբերի 8)՝ 3-րդ հոդվածի դատավարական կողմի և 13-րդ հոդվածի վերաբերյալ զանգատը մերժելով: Բողոքարկված վատ վերաբերմունքը տեղի էր ունեցել 1997 թվականի հուլիսին և սեպտեմբերին՝ նախքան 1998 թվականի մայիսի 5-ին Ռուսաստանի Դաշնության համար Կոնվենցիան ուժի մեջ մտնելը:

Համապատասխան ուղղումներով *Moldovan*-ի վճռի մեջբերմամբ Դատարանը գտել է, որ 3-րդ հոդվածի իմաստով դատավարական պարտականությունը ծագում է, երբ անձը վստահելի հայտարարություն է անում այն մասին, որ ենթարկվել է 3-րդ հոդվածով արգելված վերաբերմունքի: Ապա Դատարանը շարունակել է.

«Սակայն, քանի որ Դատարանն իրավասու չէ քննել իր *ratione temporis* իրավագործության սահմաններից դուրս գտնվող դեպքերի վերաբերյալ դիմողի հայտա-

րարությունը, նա չի կարող եզրակացություն անել այն հարցի վերաբերյալ, թե արդյոք դիմողի հայտարարությունը «վստահելի հայտարարություն» է, ինչպես դա նախատեսված է վերոնշյալ դրույթներով: Հետևաբար, նա չի կարող քննության առնել այն հարցը, թե արդյոք Ռուսաստանի իշխանությունները Կոնվենցիայի իմաստով պարտավոր էին սույն գործով արդյունավետ քննություն իրականացնել (...) Նմանապես, քննություն չիրականացնելու վերաբերյալ ենթադրությունը չի կարող սույն գործով դիտվել որպես շարունակվող իրավիճակ առաջացնող և 3-րդ հոդվածի իմաստով խնդրահարույց հանգամանք, ուստի Դատարանը չի կարող եզրակացնել, որ առկա է նման պարտականություն»:

Դատարանը նույն հիմքով մերժել է նաև 13-րդ հոդվածի հիման վրա ներկայացված գանգատը՝ գտնելով, որ «իրավասու չէ քննության առնել այն հարցը, թե արդյոք դիմողը Կոնվենցիայով նախատեսված նյութական իրավունքի խախտման վերաբերյալ «վիճարկելի հայց» է ներկայացրել, և արդյոք 13-րդ հոդվածի հիման վրա նրա ներկայացրած փաստարկները ևս Դատարանի *ratione temporis* իրավագործության սահմաններից դուրս են գտնվում (տե՛ս *Meriakri v. Moldova* (dec.), գանգատ թիվ 53487/99, 2001 թվականի հունվարի 16)»:

7. Նույն կերպ Դատարանը իրաժարվել է *Kholodov and Kholodova v. Russia* գործով ((dec., գանգատ թիվ 30651/05, 2006 թվականի սեպտեմբերի 14) 1994 թվականի սեպտեմբերին տեղի ունեցած մահվան կապակցությամբ պետության դատավարական պարտականությունների խախտման առկայությունը քննելու իրավագործությունից: Նշված գործով մահվան կապակցությամբ քննությունն սկսվել էր նախքան վավերացումը, սակայն, Դատարանի կարծիքով, շարունակվել էր վավերացման ժամկետից բավական երկար ժամանակ հետո՝ 2005 թվականի մարտին՝ ի վերջո հանգեցնելով ենթադրություն հանցագործների լրիվ արդարացման: Դատարանը մերժել էր գանգատը՝ համապատասխան ուղղումներով վկայակոչելով *Moldovan*-ի և *Voroshilov*-ի գործերով կայացված իր նախկին որոշումները:

«Քանի որ *ratione temporis* սահմանափակված է 1994 թվականին տեղի ունեցած դեպքերի վերաբերյալ դիմողների պնդումները քննելու Դատարանի հնարավորությունը, վերջինս չի կարող քննության առնել այն հարցը, թե արդյոք այս դեպքերը Ռուսաստանի իշխանություններին պարտավորեցրել են սույն գործով արդյունավետ քննություն իրականացնել (...) Նմանապես, պատասխանատու անձանց չբացահայտելու և չպատժելու վերաբերյալ ենթադրությունը չի կարելի ասել, որ հանգեցրել է շարունակական իրավիճակի առաջացման, ուստի Դատարանը չի կարող եզրակացնել, որ առկա է եղել նման պարտականություն (...)»:

8. Դատարանի Պալատը հակառակ որոշում է կայացրել *Bălăsoiu v. Romania* գործով ((dec.), գանգատ թիվ 37424/97, 2003 թվականի սեպտեմբերի 2), որով շեղվել է երկուսուկես տարի առաջ կայացված *Moldovan*-ի գործով սահմանված նախադեպից: Սույն գործով Պալատը, *ratione temporis* հիմքով մերժելով նյութաիրավական գանգատը, որոշել է, որ 1993 թվականի հուլիսին ենթադրաբար տեղի ունեցած վատ վերաբերմունքի կապակցությամբ 3-րդ հոդվածի հիման վրա բերված դատաիրավական գանգատը քննելու ժամանակային իրավասություն ունի: Իր որոշումը նա հիմնավորել է այն հանգամանքով, որ վատ վերաբերմունքի համար պատասխանատու անձանց դեմ հարուցված վարույթները շարունակվել են Ռումինիայի կողմից Կոնվենցիան վավերացնելուց հետո և ավարտվել են Արդարադատության բարձրագույն դատարանի կողմից 2002 թվականին վերջնական դատավճռի կայացմամբ: Սակայն որոշման մեջ չի բացատրվել, թե ինչ հիմքով է այս գործը տարբերակվել *Moldovan*-ի գործից, որը որպես փաստարկ վկայակոչ-

վել է պատասխանող Կառավարության կողմից: Չի բացատրվել նաև, թե ինչպես այն փաստը, որ քննությունը կամ վարույթները շարունակվել են վավերացման ժամկետից հետո՝ կարող է Դատարանին ժամանակային իրավասություն տալ քննելու այն հարցը, թե արդյոք դրանք համապատասխանել են պետության 3-րդ հոդվածով սահմանված դատավարական պարտականությանը, այն դեպքում, երբ այդ դեպքերը տեղի ունենալու ժամանակ պետությունը սահմանափակված չի եղել Կոնվենցիայով և, հետևաբար, պետության վրա նման դատավարական պարտականություն դրված չի եղել:

9. Թեև մենք կիսում ենք մեծամասնության կարծիքն այն մասին, որ Դատարանի նախադեպային իրավունքում առկա այս ակնհայտ հակասությունը պետք է լուծվի, սակայն մենք չենք կարող համաձայնել մեծամասնության ակնհայտ նախապատվությանը, որ նրանք տվել են *Bălașoiu*-ի գործով, կամ նրանց այն պատճառաբանությանը, որը հիմնված է դատավարական և նյութաիրավական պարտականությունների ենթադրյալ «առանձնացվածության» վրա: Փաստարկվում է, որ դատավարական պարտականությունը քննության չի առնվում՝ ելնելով այն հարցից, թե արդյոք պետությունը միանշանակ պատասխանատու է ճանաչվել մահվան համար, և որ Դատարանը, համապատասխանաբար, 2-րդ հոդվածով սահմանված դատավարական պարտականությունների հարցն առանձին է քննել նյութաիրավական պարտականությունների իրականացման հարցից և, անհրաժեշտության դեպքում, այդ կապակցությամբ 2-րդ հոդվածի առանձին խախտում է արձանագրել անգամ, երբ որևէ նյութաիրավական խախտում չի արձանագրվել:

Մենք չենք վիճարկում այս ենթադրությունները կամ մեծամասնության այն տեսակետը, որ դատավարական պարտականությունը վերաճել է «առանձին և ինքնուրույն պարտականության»: Մեծամասնության հետ մեր տեսակետները չեն համընկնում այն հարցի շուրջ, թե արդյոք պարտականությունը «առանձնացված» է դրա ծագման հիմք հանդիսացած մահվան փաստից այն առումով, որ այդ պարտականությունը կարող է դրվել պետության վրա վավերացման պահին կամ դրանից հետո, անգամ այն դեպքում, երբ մահը տեղի է ունեցել նախքան վավերացումը: Մենք չենք կարող համաձայնել վճռում առկա ենթադրությանը նաև այն պատճառով, որ դատավարական պարտականությունը «պետության վրա պարտականություններ է դնում այն ամբողջ ժամանակահատվածի համար, որի ընթացքում կարող է ողջամտորեն ենթադրվել, որ պետությունը կարող է միջոցներ ձեռնարկել մահվան հանգամանքները պարզաբանելու համար», արդյունքում՝ պետությունը, որը նախքան վավերացումը տեղի ունեցած մահվան կապակցությամբ նման քննություն չի իրականացնում կամ այդ ժամկետից հետո շարունակում է այն քննությունը, որն սկսել է առանց այդ կապակցությամբ որևէ կոնվենցիոն պարտականություն ունենալու, վավերացման ժամկետից սկսած կարող է պատասխանատվության ենթարկվել Կոնվենցիայով նախատեսված դատավարական պարտականությունների խախտման համար: Դատավարական պարտականությունը դրա ծագման համար հիմք հանդիսացած մահվանից առանձնացնելը, մեր կարծիքով, հավասարազոր կլինի Կոնվենցիային հետադարձ ուժ տալուն և պետության կողմից Դատարանի՝ անհատական դիմումներ ընդունելու իրավասության ճանաչումն անվավեր դարձնելուն (համեմատության համար տե՛ս *Kadiķis v. Latvia* (dec.), գանգատ թիվ 47634/99, 2000 թվականի հունիսի 29, *Jovanović v. Croatia* (dec.), գանգատ թիվ 59109/00, ECHR 2002-II):

10. Մեր կարծիքով, այս մեկնաբանությունը «բաց» է երկու այլ առարկությունների համար: Առաջին՝ այն կարծես հանգեցնում է Դատարանի մոտեցման հետ անհամապատասխանության՝ կապված այն հարցի հետ, թե արդյոք վավերացումից առաջ տեղի ունեցած մահվան կապակցությամբ արդյունավետ քննության բացակայությունը քննվում է 2-րդ հոդվածի դատավարական կողմի, թե 13-րդ հոդվածի հիման վրա, որի պահանջները կարծես նման են, սակայն «ավելի լայն են, քան 2-րդ հոդվածի իմաստով արդյունավետ քննություն իրականացնելու՝ պետության դատավարական պարտականությունը» (տե՛ս Դատարանի 1998 թվականի փետրվարի 19-ի *Kaya v. Turkey* վճիռը, կետ 107, *Reports of Judgments and Decisions* 1998-I): Դրա հետ մեկտեղ, «առանձնացվածության» սկզբունքի կիրառման ժամանակ արդյունավետ քննություն չիրականացնելու վերաբերյալ գանգատը կարող է հանգեցնել 2-րդ հոդվածի խախտում արձանագրելուն, իսկ 13-րդ հոդվածով ներկայացված համանման գանգատը կարող է անընդունելի համարվել: Սա ոչ միայն այն պատճառով է, որ Դատարանը չի կարող քննության առնել այն հարցը, թե արդյոք դիմողը կոնվենցիոն նյութական իրավունքի խախտման վերաբերյալ «վիճարկելի հայց» է ներկայացրել (տե՛ս վերը վկայակոչված՝ *Voroshilov*-ի գործը), այլ նաև այն հիմնարար պատճառով, որ եթե նյութական գանգատն անընդունելի է, քանի որ չի համապատասխանում Կոնվենցիային, ապա 13-րդ հոդվածով ներկայացված գանգատը ևս անընդունելի է, նման հանգամանքներում որևէ «վիճարկելի հայց» չի կարող լինել (տե՛ս օրինակ, *Aliev v. Ukraine* (dec.), գանգատ թիվ 41220/98, 1999 թվականի մայիսի 25):

11. Ինչն առավել կարևոր է, մեծամասնության մոտեցումը ևս, ինչպես դա ամրագրված է վճռում, իրավական որոշակիության առումով լուրջ խնդիրներ կառաջացնի, եթե նախքան վավերացումը տեղի ունեցած մահվան կապակցությամբ 2-րդ հոդվածով նախատեսված դատավարական պարտականության իրականացումը ժամանակային սահմանափակում չունենա: Վճիռը, կարծես, փարատել է նման վտանգը՝ առաջին հերթին ամրագրելով, որ եթե մահը տեղի է ունեցել նախքան վավերացման ժամկետը, ապա միայն դատավարական գործողությունները և/կամ անգործությունը կարող են տեղավորվել Դատարանի ժամանակային իրավասության սահմանների մեջ, և երկրորդ՝ որ պետք է առկա լինի «իրական կապ մահվան և (...) Կոնվենցիան ուժի մեջ մտնելու միջև, որպեսզի 2-րդ հոդվածով սահմանված դատավարական պարտականությունն սկսի գործել» (տե՛ս վճռի 162–163-րդ կետերը):

12. Մեր կարծիքով, որևէ պահանջ չի կարող հետագայում անորոշությունների առաջացումը կանխարգելելու հիմք հանդիսանալ: Մասնավորապես, պարզ չէ, թե արդյոք մահվան և Կոնվենցիան ուժի մեջ մտնելու միջև «իրական կապ»-ը նշանակում է այդ երկու կամ այլ փաստերի միջև սերտ ժամանակային փոխկապակցվածության առկայություն, և եթե՝ այո, ապա ինչպիսի կապի մասին է խոսքը: Այս հարցը, կարծես, չի լուծվել վճռում առկա այն մեկնաբանությամբ, որ «սույն դրույթով սահմանված դատավարական գործողությունների զգալի մասը (...) կատարվել է կամ պետք է կատարված լիներ սահմանային ժամկետից հետո»: Այս սկզբունքի կիրառումը, մեր կարծիքով, հատկապես խնդրահարույց է «անգործությունների» վերաբերյալ գործերով, որոնցով նախքան վավերացումը կամ դրանից հետո որևէ միջոց կամ որևէ արդյունավետ միջոց չի ձեռնարկվել մահվան կապակցությամբ քննություն իրականացնելու նպատակով: Նման դեպքում, եթե

անգամ մահվան կապակցությամբ քննություն իրականացնելու կոնվենցիոն պարտականությունը կարող է ծագել վավերացման պահին, միևնույն է, դժվար է հասկանալ, թե ինչպես պետք է «էական համամասնության» կանոնը կիրառվի յուրաքանչյուր գործի փաստերի նկատմամբ: Մեր կարծիքով, անորոշությունն ավելի է բարդացել վճռի 163-րդ կետում առկա այն եզրակացության պատճառով, որ Ղատարանը չի բացառում, որ որոշակի հանգամանքներում կապը կարող է նաև հիմնված լինել «Կոնվենցիայի երաշխիքների և դրա հիմքում դրված արժեքների պաշտպանության իրական և արդյունավետ ձևերի առկայության հիմնավորման անհրաժեշտության վրա»:

13. Այս պատճառով մենք փաստարկում ենք իսկապես *Moldovan*-ի գործով կայացված վճռում սահմանված նախադեպի պահպանման, որը, մեր կարծիքով, ավելի շատ է համապատասխանում նախքան Կոնվենցիան ուժի մտնելը կատարված գործողությունների և դրսևորված անգործության համար պետությունների պատասխանատվությունը կարգավորող սկզբունքներին՝ Ղատարանի նախադեպային իրավունքի առավել փոխկապակցվածությունն ու դրա՝ իրավական որոշակիության կարևորագույն սկզբունքին համապատասխանությունն ապահովելու համար:

14. Համապատասխանաբար, մենք կեզրակացնեինք, որ եթե անգամ սույն գործով մահվան կապակցությամբ իրականացված քննչական գործողությունները և իրավական ընթացակարգերը, որոնք սկսվել էին նախքան պատասխանող պետության կողմից Կոնվենցիայի վավերացումը, շարունակվել են այդ ժամկետից հետո, միևնույն է, դատավարական պարտականությունների խախտմանը վերաբերող զանգատները Ղատարանի ժամանակային իրավասության սահմաններից դուրս են գտնվում:

15. Քանի որ մենք չենք կիսում մեծամասնության կարծիքն այն առումով, որ սույն գործով խախտվել է 2-րդ հոդվածը, մենք դեմ ենք քվեարկել նաև նրանց այն եզրակացությանը, որ վերոնշյալ դատողության հիման վրա անհրաժեշտություն չկա առանձին քննել Կոնվենցիայի 6-րդ և 13-րդ հոդվածների հիման վրա ներկայացված զանգատը: Եթե զանգատները քննության առնվեին, մենք կգտնեինք, որ դատավարությունների չափազանց երկար տևողության պատճառով առկա է եղել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում, սակայն առկա չի եղել 13-րդ հոդվածի խախտում:

16. Ինչ վերաբերում է 41-րդ հոդվածին, ապա մեր կարծիքները կիսվում են՝ կապված այն հարցի հետ, թե արդյոք գումար պետք է տրամադրվեր՝ կապված ոչ նյութական վնասի և ծախսերի ու ծախքերի փոխհատուցման հետ, դատավոր Բրաթգան քվեարկում է իսկապես նման փոխհատուցման տրամադրման՝ պաշտպանելով 2-րդ հոդվածի կապակցությամբ մեծամասնության արտահայտած կարծիքը, իսկ դատավոր Թյուրմենը քվեարկում է որևէ փոխհատուցում տրամադրելու դեմ: